

«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



Զեկույց
ՀՀ-ում «Կովիդ-19» համավարակի ազդեցությունը
ազատագրկումների ընտրության պրակտիկայի վրա

Երևան, 2021

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ԿՈՎԻԴ-19 հիվանդության համավարակի պայմաններում ազատությունից զրկելու պրակտիկայի ուսումնասիրություն և մարդու իրավունքների միջազգային չափանիշների պահպանման օժանդակություն» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսավորմամբ, թիվ G20192 դրամաշնորհի շրջանակներում:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետներն ու եզրահանգումները պատկանում են զեկույցի հեղինակին և հնարավոր է, որ չհամընկնեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կազմակերպության տեսակետների հետ:

Զեկույցի հեղինակ

Արշակ Գասպարյան, քրեական արդարադատության փորձագետ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԶԵԿՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	8
<i>Զեկույցի նպատակը</i>	8
<i>Զեկույցի հիմնական խնդիրները</i>	9
ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	9
ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ	11
ԿՈՎԻԴ-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԶՍԱԶՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	11
1.1. Ազատագրկման ձևով պատժատեսակների կիրառումը Հայաստանում: Համեմատական՝ Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում	11
1.1.1 <i>Եզրահանգումներ և առաջարկություններ</i>	22
1.2. Ազատագրկման ձևով խափանման միջոցի կիրառումը Հայաստանում՝	25
Կովիդ-19 համավարակից առաջ և վերջինիս ընթացքում	25
1.2.1. <i>Եզրահանգումներ և առաջարկություններ</i>	36
1.3. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման պրակտիկան	39
1.3.1. Կովիդ-19 համավարակի պայմաններում պատիժ կատարող մարմինների գործունեությունը	49
1.3.2. <i>Եզրահանգումներ և առաջարկություններ</i>	52
ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ	57
ԱԶՍԱԶՐԿՄԱՆ ԵՎ ԱԶՍԱԶՐԿՈՒՄ ԶԵՆԹԱԴՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ	57
1.1. Ազատագրկման և Պրոբացիայի ծախսային տարբերություններն ու ազատագրկման հետ չկապված միջոցների արդյունավետությունը	57
2.2. Ազատագրկմանն այլընտրանք միջոցների կիրառման ծախսային արդյունավետությունը	66
ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	68
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԻԴ-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՆՏԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ	68
3.1. Բանտային համակարգերում Կովիդ-19-ին դիմակայելուն և կանխարգելելուն ուղղված միջազգային հանրության ջանքերը	68
3.2. Վաղաժամկետ ազատումների և ազատագրկումների այլընտրանք միջոցների կիրառությունը՝ պայմանավորված Կովիդ-19-ով.....	71
3.2.1. <i>ՄԱԿ թմրամիջոցների և հանցավորության գրասենյակ (UNODC)</i>	71
3.2.2. <i>ՄԱԿ Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատար (UN OHCHR)</i>	72
3.2.3. <i>Առողջապահության համաշխարհային կազմակերպություն և ՄԱԿ Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատար (WHO & OHCHR)</i>	72

3.2.4. ՄԱԿ խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողով (SPT).....	73
3.2.5. Միջազգային բանտային բարեփոխումներ (PRI).....	73
3.2.6. ԵՆ խոշտանգումների կանխարգելման կոմիտե (CPT).....	74
3.2.7. Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա (APT).....	74
3.2.8. Հանցավորության և արդարադատության հետազոտությունների կենտրոն (CCJS)	75
3.2.9. ԵՆ պատիժների վիճակագրության վերաբերյալ Ձեկույց (SPACE I).....	78
ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ	80
ԱՄՓՈՓ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	80
4.1. Ամփոփիչ եզրահանգումներ	80
4.1.1. Ազատագրկման պրակտիկայի վերաբերյալ	80
4.1.2. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ	82
4.1.3. Բանտային ու Պրոբացիոն համակարգերի ծախսարդյունավետության վերաբերյալ.....	86
4.2. Ամփոփիչ առաջարկություններ	86
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	89

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱՀԿ – Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
- ԱՊԿԲ – Այլընտրանքային պատիժների կատարման բաժին
- ԱԿՄ – Ազգային կանխարգելման մեխանիզմ
- ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
- ԵԽ – Եվրոպայի խորհուրդ
- ԵՄ – Եվրոպայի միություն
- ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
- ՊԾ – Պրոբացիայի ծառայություն
- ԱՆ – Արդարադատության նախարարություն
- ՔԿՎ – Քրեակատարողական վարչություն
- ՔԿԾ – Քրեակատարողական ծառայություն
- ՊՎԱ – պատժից պայմանական վաղաժամկետ ազատում
- ԽԿԿ – Խոշտանգումների կանխարգելման կոմիտե
- ՄԻՊ – Մարդու իրավունքների պաշտպան
- ՔրՕր – Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք
- ԸԻԴ – Ընդհանուր իրավասության դատարան
- ՄԲԲ – Միջազգային բանտային բարեփոխումներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տարի մարդկությանը ցնցեց հիվանդության մի նոր տեսակ, որն իր տարածման տեմպով և ծածկույթով աննախադեպ էր: Դեռևս 2020 թվականի մարտի 11-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) Կովիդ-19-ը հայտարարեց՝ գլոբալ համավարակ (պանդեմիա):

Համավարակն իր ազդեցությունն ունեցավ բոլոր երկրներում, իր դերն ունեցավ հասարակությունների ամենատարբեր շերտերի ու հասարակական բոլոր հարաբերությունների վրա: Փոփոխություններ կրեցին մարդկային բոլոր ոլորտները՝ կենցաղից մինչև մտածողություն: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, միայն Հայաստանում 2021 թվականի մարտի 8-ի դրությամբ գրանցվել է 175016 հաստատված դեպք և 3225 մահվան ելք²:

Եվ այս համավարակի առավել ծանր հետևանքները կրում են նրանք, ովքեր առավել խոցելի են: Ամբողջ աշխարհում բանտարկյալները³ բացառապես խոցելի խավ են, ովքեր փակ հաստատություններում վտանգված են վարակի ներթափանցմամբ ու տարածվածությամբ: Կովիդ-19-ի դեմ պայքարի միջոցները հաճախ ուղղակի անհասանելի են ազատազրկվածներին, իսկ սոցիալական հեռավորության պահպանումն անիրականանալի է և անիրատեսական: Այս ամենին հաճախ նպաստում են բանտերի կենցաղային ոչ բավարար պայմանները, կուտակումները, անձնային տարածքի բացակայությունը կամ սակավությունը, գերբնակեցումը: Կովիդ-19-ը աղետալի հետևանքներ է ունեցել ամբողջ աշխարհում: Ամենատարբեր հետազոտություններով, սույն թվականի փետրվարի 18-ի դրությամբ, աշխարհի 122 երկրներում ավելի քան 523 հազար բանտարկյալի մոտ ախտորոշվել է Կովիդ-19-ի դրական պատասխան, իսկ ավելի քան 3500-ը մահացել է այս վիրուսից⁴:

Համավարակը դրսևորման տարբեր աստիճաններով, ազդել է նաև տարբեր համակարգերի, ինստիտուտների վրա: Կովիդ-19-ին դժվարությամբ են արձագանքում հատկապես պետական կառավարման ու դատական համակարգերը, որոնք, առանց այդ էլ ռիզիկո են իրենց բնույթով: Քրեական արդարադատության համակարգերը ճգնաժամի մեջ էին այս համաշխարհային համավարակից շատ առաջ: Այժմ աշխարհի գրեթե բոլոր երկրների կառավարությունները պայքարում են բանտերում վիրուսը զսպելու ուղղությամբ՝ վտանգելով ինչպես բանտում գտնվող անձանց (թե՛ աշխատակիցներ, թե՛ բանտարկյալներ), այնպես էլ ընդհանուր բնակչության կյանքը:

Թերևս այս լույսի ներքո, ամենատարբեր միջազգային կազմակերպություններ (որոնց մասին կխոսվի Զեկույցի համապատասխան բաժնում) կոչ են անում զարգացնել ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող հարկադրանքի միջոցներ՝ զերծ մնալով փակ հաստատություններում մարդկանց կուտակումներից՝ ապահովելով նրանց նկատմամբ վերահսկողությունը հասարակությունում:

Զարգացնելով ազատազրկումներին այլընտրանք միջոցների կիրառումը՝ միաժամանակ պետք է աշխատել նաև արդեն բանտում գտնվողներին հասարակություն

¹ Հասանալի է հետևյալ հղումով՝ <https://time.com/5791661/who-coronavirus-pandemic-declaration/>:

² Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://covid19.who.int/region/euro/country/am>:

³ Սույն տեքստում և ողջ զեկույցում «բանտարկյալ» կամ «ազատազրկված» տերմիններն օգտագործվում են բնորոշելու համար ազատությունից զրկված անձին՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից: Անհրաժեշտ է դիտարկել, որ այդ տերմինները ներառում են թե՛ կալանավորվածներին, և թե՛ դատապարտյալներին, քանի դեռ հատուկ անդրադարձ չի կատարվել և չեն առանձնացվել նրանց իրավական կարգավիճակները:

⁴ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.jpp.org.pk/covid19-prisoners/>:

վերադարձնելու ուղղությամբ: Այս գործընթացն անհրաժեշտ է կատարել շատ հիմնավորված, կիրառելի ու փորձարկված գործիքներով, բայց միտումով՝ անձին հնարավորինս արագ վերադարձնել հասարակություն:

Այս իմաստով, սույն Ձեկույցը նպատակ է հետապնդում ուսումնասիրել Հայաստանի Հանրապետությունում քրեական արդարադատության համակարգի հակազդման գործընթացն ու յուրահատկությունները Կովիդ-19-ին (եթե կան)՝ կարևորելով հատկապես ազատագրկմանն այլընտրանք խափանման միջոցների ու պատժատեսակների կիրառման պրակտիկան: Առանձին ուշադրություն է դարձվել նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման պրակտիկային, համեմատվել և վերլուծվել են ազատվածների թվային տվյալները մինչև և Կովիդ-19-ից հետո:

Ձեկույցը բաղկացած է 4 հիմնական բաժիններից:

Առաջին բաժնում քննարկվում են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, ազատագրկման ձևով պատժատեսակների կիրառման, ինչպես նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման պրակտիկան և առանձնահատկությունները:

Երկրորդ բաժնում ներկայացվում է ազատագրկմանն այլընտրանք միջոցների կիրառման ֆինանսական և սոցիալական ազդեցության առավելությունները, վերլուծվում ազատագրկման ձևով հարկադրանքի միջոցների ծախսային տվյալները և համեմատվում ազատագրկում չենթադրող միջոցների հետ:

Ձեկույցի **երրորդ բաժինը** ներառում է Կովիդ-19 համավարակով պայմանավորված միջազգային տարբեր կառույցների արձագանքները, ռազմավարությունները, պահանջներն ու առաջարկությունները՝ բանտային համակարգերի վերաբերյալ:

Չորրորդ բաժնում ներկայացված են առաջարկություններ, որոնք կարող են կիրառելի լինել ոլորտի քաղաքականություն մշակողների և իրավակիրառների համար:

Ձեկույցի վերջում ներկայացված են հավելվածներ՝ ներառելով Ձեկույցի պատրաստման համար տեղեկատվության աղբյուր հանդիսացած պաշտոնական գրությունները պատկան մարմիններին:

ԶԵԿՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զեկույցի նպատակը

Զեկույցի հիմնական նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության համակարգի արձագանքը Կովիդ-19 համավարակին՝ շեշտադրելով երեք հիմնական գործոններ.

- 1) Ազատագրկմանն (կալանավորմանն) այլընտրանք խափանման միջոցների կիրառման պրակտիկան.
- 2) Որոշակի ժամկետով ազատագրկման ձևով պատժատեսակի կիրառման պրակտիկան.
- 3) Դատապարտյալների՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման պրակտիկան:

Դիտարկում 1

Ավանդաբար, քրեական արդարադատության համակարգը կազմում են ոստիկանությունը, քննչական մարմինները, դատախազությունը, դատարանը և պատիժների կատարման համակարգերը (բանտային և պրոբացիոն ծառայություններ): Հաշվի առնելով ՀՀ իրավական համակարգի առանձնահատկությունները և որոշումների կայացման հարցում առավելապես դատարանի գերակայությունը (օրինակ՝ կալանավորում խափանման միջոցի որոշումը և այլն)՝ Զեկույցի համատեքստում, քրեական արդարադատության համակարգի արձագանքը ներառում է առավելապես դատարանների և պատիժների կատարման համակարգերը:

Դիտարկում 2

Գործող օրենսդրության համաձայն՝ ազատագրկման ձևով խափանման միջոցը մեկն է և վերաբերվում է կալանավորմանը:

Դիտարկում 3

Հաշվի առնելով Զեկույցի՝ ազատագրկմանն այլընտրանք միջոցների կիրառումը խրախուսելու տրամաբանությունն ու համատեքստը, ցմահ ազատագրկումների ձևով պատժատեսակներին հատուկ անդրադարձ չի կատարվել (ելնելով հանցագործության բնույթից, ծանրության աստիճանից և այլն՝ դրանց նկատմամբ, ի սկզբանե, չէր կարող կիրառվել ազատագրկմանն այլընտրանք միջոց):

Դիտարկում 4

Արձագանքը Կովիդ-19 համավարակին՝ վերաբերվում է 2020թ. մարտ – դեկտեմբեր ամիսների ժամանակահատվածին:

Զեկույցի հիմնական խնդիրները

- 1) Պարզել Կովիդ-19 համավարակի ազդեցությունը դատարանների կողմից ազատազրկմանն այլընտրանք խափանման միջոցների և պատժատեսակների, ինչպես նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշումների կայացման վրա:
- 2) Պարզել այդ որոշումների կայացման համար հիմք հանդիսացող քրեական արդարադատության մարմինների միջնորդությունների, զեկույցների և այլ նյութերի հիմնավորվածությունները Կովիդ-19 համավարակի համատեքստում:
- 3) Պարզել, Կովիդ-19-ով պայմանավորված համընդհանուր արգելափակումների (լոքդաուն) ազդեցությունը կիրառված ազատազրկումների երկարաձգման (անտեղի) վրա:
- 4) Ներկայացնել ազատազրկման և ազատազրկմանն այլընտրանք միջոցների ծախսային տարբերությունները և այլընտրանքային միջոցների սոցիալական ազդեցությունը:
- 5) Ներկայացնել միջազգային կառույցների կողմից բանտային համակարգերի համար Կովիդ-19 համավարակով պայմանավորված առաջարկվող ստանդարտները, փաստաթղթերն ու ամփոփ փորձը:
- 6) Ոլորտի պատասխանատուներին, որոշում կայացնողներին ներկայացնել հետազոտության հենքով առաջարկություններ՝ ոլորտը բարեփոխելու ուղղությամբ:

ԶԵԿՈՒՅՑԻ ԿԱԶՄՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ

Զեկույցը կազմելիս կիրառվել են հետևյալ մեթոդները

Փաստաթղթերի վերլուծություն – ուսումնասիրվել են պատկան մարմինների կողմից ներկայացված նյութերն ու փաստաթղթերը, առցանց տիրույթում ոլորտի վերաբերյալ առկա բաց տեղեկատվությունը (պաշտոնական): Տեղեկատվություն է ստացվել հետևյալ աղբյուրներից.

ՀՀ ռատիկանությունից՝ պարզելու համար ազատազրկման վայրերից և դեպի ազատազրկման վայրեր (հիմնականում կալանավորվածների և դատապարտյալների) իրականացվող ուղեկցումները և այդ ուղեկցումների միջինացված ֆինանսական ծախսային չափաբաժինները:

ՀՀ արդարադատության նախարարությունից (ՀՀ ԱՆ)՝ պարզելու համար քրեակատարողական ծառայության (ՔԿԾ) և Պրոբացիայի ծառայության (ՊԾ) տարեկան կտրվածքով պետական բյուջեից նախատեսված ծախսերը, քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) Կովիդ-19-ով պայմանավորված միջոցառումների անցկացման պրակտիկան և եղանակները:

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչությունից (ՔԿՎ)՝ պարզելու համար 2019-2020 թվականներին ազատազրկվածների ընդհանուր միջին թվակազմը՝ սեռային, տարիքային և այլ բաշխվածությամբ, ազատազրկվածների վրա մեկ անձի հաշվարկով իրականացվող ուղիղ և անուղղակի ծախսային տվյալներ, ՔԿՀ-ներում Կովիդ-19-ով պայմանավորված միջոցառումների անցկացման տվյալներ, ինչպես նաև պատժից պայմանական վաղաժամկետ ազատման (ՊՎԱ) և բաց տիպի ուղղիչ հիմնարկ տեղափոխման թվային ցուցանիշները Կովիդ-19 համավարակի ժամանակ և դրանից առաջ:

ՀՀ դատական ղեկավարամենտից՝ պարզելու համար քրեական ուղղվածությամբ մասնագիտացված դատավորների ծանրաբեռնվածությունը, նիստերի նշանակման կամ հետաձգման պրակտիկան՝ պայմանավորված Կովիդ-19 համավարակի ընթացքում արգելափակումներով, ինչպես նաև, պարզելու համար կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու և ազատագրկման ձևով պատիժների նշանակման պրակտիկան համավարակի ընթացքում և դրան նախորդող ժամանակահատվածում:

Երկրորդային տեղեկատվության վերլուծություն (desk research) - Իրականացվել են ներպետական և միջազգային կազմակերպությունների կողմից ոլորտին առնչվող հետազոտական, մոնիթորինգային և այլ բնույթի փաստաթղթերն ու հրապարակված նյութերը: Սույն մեթոդի շրջանակներում իրականացվել են բանտային համակարգերում Կովիդ-19 համավարակի կանխարգելման, դրան արձագանքման և արդյունավետ պաշտպանության վերաբերյալ միջազգային հեղինակավոր կառույցների կողմից երկրներին ներկայացվող առաջարկությունները, այդ թվում՝ Եվրոպայի խորհուրդ (ԵԽ), Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), Խոշտանգումների կանխարգելման կոմիտե (ԽԿԿ), Միջազգային բանտային բարեփոխումներ, Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա և այլք: Ուսումնասիրվել են և Ձեկույցում ներկայացվել նաև ազգային պետական և ոչ պետական կառույցների կողմից բանտային համակարգում իրականացված մշտադիտարկումները, հաշվետվություններն ու զեկույցներ, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպան (ՄԻՊ), Ազգային կանխարգելման մեխանիզմ (ԱԿՄ), Քրեակատարողական հիմնարկներում ու մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խումբ (այսուհետ՝ Դիտորդական խումբ) և այլն:

Վիճակագրական վերլուծություն – իրականացվել է ոլորտին առնչվող վիճակագրության համեմատություն, համադրություն և վերլուծություն: Ուսումնասիրվել է Դատական իշխանության, Քրեակատարողական ծառայության, Պրոբացիայի ծառայության կողմից առցանց ներկայացվող վիճակագրությունը՝ առանցքում ունենալով 2019-2020 թվականները՝ հատկապես 2020 մարտ-դեկտեմբեր ամիսների ժամանակահատվածը:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԿՈՎԻԴ-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1.1. Ազատագրված ձևով պատժատեսակների կիրառումը Հայաստանում: Համեմատական` Կովիդ-19 համավարակից առաջ և դրա ընթացքում

Մույն ենթավերնագրի համատեքստում համեմատություն է իրականացվում 2019-2020 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից ազատագրվումների կիրառման թվային ցուցանիշների միջև: Համեմատությունն առավել արդյունավետ իրականացնելու համար որոշ դեպքերում համադրվել և վերլուծվել են նաև 2018 թվականի համանուն ցուցանիշները: Ուշադրություն է դարձվել հատկապես կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ նախաքննական մարմնի կողմից դատարան ներկայացված միջնորդություններին, դատարանի կողմից այդ միջնորդությունները լիովին կամ մասնակի բավարարելուն կամ մերժելուն: Դիտարկվում է նաև քննված և ավարտված գործերի թվաքանակում ազատագրված ձևով պատիժների նշանակման, ազատագրվումը պայմանականորեն չկիրառելու և ազատագրվում չենթադրող պատժատեսակների կիրառման հավասարակշռումը` վերը ներկայացված ժամանակահատվածների կտրվածքով: Համեմատությունն ու վերլուծությունն առավել ուշագրավ և տեսանելի դարձնելու նպատակով այլ գործոններ ևս դիտարկվել են համընդհանուր ազատագրվումների փիլիսոփայության և պրակտիկայի համատեքստում:

Այսպես, դատական իշխանության պաշտոնական կայքի⁵ վիճակագրությունների ուսումնասիրությունները վկայում են, որ ի համեմատ 2018 և 2019 թվականների, 2020 թվականին նվազել են ազատագրված ձևով պատիժների ընտրությունն ու կիրառումը` հոգուտ ազատագրված հետ չկապված պատիժների կիրառության կամ ազատագրված ձևով պատիժները պայմանականորեն չկիրառելու և ազատագրված հետ չկապված տուգանք պատժատեսակի:

Մասնավորապես, **2018 թվականին**, ըստ էության, քննվել և կայացվել է 2295 դատավճիռ, դատապարտյալների թիվը` 1963 (դատապարտյալ է կոչվում մեղադրյալը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատարանի դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է):⁶

Նշված 1963-ից 1147-ի նկատմամբ կիրառվել է որոշակի ժամկետով ազատագրված ձևով պատիժ, իսկ 142-ի նկատմամբ` կալանք (ցմահ ազատագրվում և կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշված տարվա ընթացքում չի կայացվել): Արդյունքում, 1289 պատիժները վերաբերել են ազատագրված ձևով պատժատեսակներին, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի (1963) 66%-ը:

Միննույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (ՔրՕր) 70-րդ հոդվածի պահանջների համաձայն, 757 դատապարտյալների նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, որը կազմում է ազատագրված ձևով պատժի դատապարտվածների (1289) 59%-ը: Ազատագրվածն այլընտրանք պատժատեսակներից

⁵ Տես` <http://court.am/hy/statistic>:

⁶ Ծանոթություն. Թվով 20 անձի նկատմամբ կիրառվել է դատապարտվածության բնույթի հարկադրանքի միջոց, իսկ թվով 1 անձի նկատմամբ նշանակվել է ազատագրվում` 17 տարի 8 ամիս ժամկետով:


կիրառվել է տուգանքը՝ թվով 594 դատապարտյալների նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտյալների թվի 30%-ը:

Այս իմաստով, թեև սույն Զեկույցը նպատակ չի հետապնդում մանրակրկիտ վերլուծության ենթարկել վերը նշված ինստիտուտի գաղափարական ու գործնական նշանակության հիմնահարցերը, այդուհանդերձ, պետք է փաստել, որ Օրենսդիրը թե՛ գործող, և թե՛ նոր Քրեական Օրենսգրքում⁷ օգտագործում է «պատիժը պայմանականորեն չկիրառելը» եզրույթը, ինչը ոչ ամբողջությամբ է արտահայտում այլընտրանքային պատիժների փիլիսոփայությունը: Իրականում այն ոչ թե պատժի, այլ հենց «ազատագրկումը պայմանականորեն չկիրառելն է՝ որպես ազատագրկմանն այլընտրանք պատիժների կամ միջոցների համակցություն, և ոչ միայն այն պատճառով, որ նույնիսկ ՀՀ Օրենսդրությունը միայն ազատագրկում ենթադրող պատիժների դեպքում է թույլատրում կիրառել սույն ինստիտուտը (այն չի կարող կիրառվել, օրինակ, տուգանքի կամ այլ պատժատեսակի դեպքում): Մա ազատագրկմանն է այլընտրանք նաև այն պատճառով, որ սույն ինստիտուտը համարվում է փորձաշրջան, և այն կիրառելի է միմիայն դատարանի կամ Պրոբացիայի ծառայության (որպես այս միջոցը կիրառող մարմին) կողմից կիրառված կոնկրետ պայմանների դեպքում:

Պատիժների վերաբերյալ գծապատկերները ստորև՝

Գծապատկեր 1


Պատիժների տեսակների և դատապարտյալների ընդհանուր թվի համամասնությունը



⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.parliament.am/reading1_docs7/K-634_R1.pdf, հոդված 86:


Գծապատկեր 2

Դատապարտյալների ընդհանուր թվի և ազատազրկում ենթադրող ու չենթադրող պատժատեսակների համամասնությունը



Գծապատկեր 3

Ազատազրկման ձևով պատիժների և դրանք պայմանականորեն չկիրառելու համամասնությունը



Չնայած դատական իշխանության կողմից ներկայացվող բավականին ծավալուն հաշվետվությանը և ընդգրկված բազմաթիվ գործոններին՝ այդուհանդերձ, պետք է փաստել սակայն, որ հիշյալ հաշվետվությունները (օրինակ՝ անձանց մասով, որոնց դատական ակտերը մտել են օրինական ուժի մեջ) հարուցում են որոշակի խնդիրներ (ստորև ներկայացվող խնդիրները նույնական են նաև 2019 և 2020 թվականների համար): Օրինակ, վերլուծված հաշվետվության տվյալներից դժվար է կռահել կամ վերլուծել, թե արդյոք ո՞ր մասն են կազմում (և կազմում են արդյոք) ՀՀ ՔրՕր-ի 66 և 67 հոդվածների կարգով հանցագործությունների համակցությամբ կայացված դատավճիռները, արդյոք նույն անձինք չեն կրկնվում տարբեր հանցագործությունների համար կայացված տարբեր պատժատեսակներում: Օրինակ՝ արդյոք կարո՞ղ են լինել տարբեր հանցանքների համար հաշվետու տարում նույն անձի վերաբերյալ ավարտված և օրինական ուժ ստացած դատական ակտեր, որոնցից մեկով անձին նշանակվել է տուգանք, մյուսով որևէ ազատազրկում: Դժվար է կռահել նաև, թե հատկապես որ պատժատեսակներին է վերաբերվել ՀՀ ՔրՕր-ի 70 հոդվածի հիմքով պատիժը պայմանականորեն չկիրառելը: Ըստ սույն հոդվածի դիսպոզիցիայի՝ անձի նկատմամբ դատարանը կարող է կիրառել 70

հողվածի դրույթները, եթե նա պատժվել է կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժի⁸: Ուստի հարց է առաջանում, թե 757 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը ո՞ր մասով է վերաբերվում 1147 որոշակի ժամկետով ազատազրկվածներին և 142 կալանքի դատապարտվածներին և թե որքան դատապարտյալներ են փաստացի ազատազրկվել: Նույն իրավիճակն է նաև համաներման մասով: 2018 թվականին համաներման ակտ է կիրառվել 165 դատապարտյալների նկատմամբ (որը կազմում է 1963 դատապարտյալների 8,4%-ը), որից պարզ չէ, թե հատկապես որ դատապարտյալների մասին է խոսքը ինչ պատժատեսակների մասին:

Ի համեմատ 2018 թվականի՝ ազատազրկումների կիրառման պրակտիկան ավելացել է 2019 թվականին: Այսպես, Ընդհանուր իրավասության դատարանների (ԸԻԴ) կողմից **2019 թվականի ընթացքում**, ըստ էության, քննվել և կայացվել է 1973 դատավճիռ, դատապարտյալների թիվը՝ 1556⁹: Նշված 1556 դատապարտյալներից 1037-ի նկատմամբ կիրառվել է որոշակի ժամկետով ազատազրկում, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի 67%-ը: Նույն ժամանակահատվածում կալանք պատժատեսակ կիրառվել է 57 անձանց նկատմամբ, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի 3,7%-ը (ցմահ ազատազրկում և կարգապահական գումարտակում պահելու ձևով պատժատեսակ չի կիրառվել):

Արդյունքում, 1094 դատապարտյալների վերաբերյալ կիրառվել են ազատազրկման ձևով պատժատեսակներ, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի (1556) 70%-ը (2018 թվականին այս թիվը կազմում էր 66%-ը):

Ի համեմատ 2018 թվականի, դատարանների առավել պատժողական մոտեցումը երևում է հատկապես ազատազրկումների և դրանց այլընտրանք պատժատեսակների, ինչպես նաև ազատազրկում պատժատեսակը պայմանականորեն չկիրառելու համեմատությամբ: Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (ՔրՕր) 70-րդ հոդվածի պահանջների համաձայն, պատիժը պայմանականորեն չի կիրառվել 437 դատապարտյալների նկատմամբ, որը կազմում է ազատազրկման ձևով պատժի դատապարտվածների (1094) ընդհանուր թվի 40%-ը: Այն դեպքում, երբ նախորդ տարի այս հարաբերությունը կազմում էր ընդհանուր ազատազրկման ձևով պատիժների 59%:

Ազատազրկմանն այլընտրանք պատժատեսակներից կիրառվել է տուգանքը՝ թվով 594 դատապարտյալների նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտյալների թվի 28%-ը:

Ի տարբերություն 2018 թվականի՝ 2019 թվականին առավել մեծ թվով դատապարտյալների նկատմամբ է կիրառվել համաներումը: Եթե 2018 թվականին համաներման ակտ է կիրառվել 165 դատապարտյալների նկատմամբ (որը կազմում է 1963 դատապարտյալների 8,4%-ը), ապա 2019թ. համաներման ակտ է կայացվել 469 դատապարտյալների նկատմամբ, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի 30,1%-ը:

Այս իմաստով, տեղին է նշել նաև Հայաստանի պատմության մեջ, ծավալների իմաստով, նմանը չունեցող «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի մասին, որ ուժի մեջ մտավ 2018թ. նոյեմբերի 6-ին: ՀՀ Գլխավոր դատախազության 2019 թվականի փետրվարի


⁸ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, առ 18 ապրիլի, 2003, հոդված 70, 1-ին մաս:

⁹ Ծանոթություն. Թվով 4 անձի նկատմամբ կիրառվել է դատախարակչական բնույթի հարկադրանքի միջոց:

15-ի ամփոփմամբ¹⁰, համաներում է կիրառվել 4601 անձի նկատմամբ, որից 1185 անձի վերաբերյալ որոշումները կայացվել են դատարանների կողմից: Դրանցից 313-ը եղել են քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ, 362-ը դատարանի կողմից նշանակված պատժից անձին ազատելու, իսկ 472 որոշում կայացվել է այն անձանց վերաբերյալ, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Ստորև ներկայացվում են 2019 թվականի ընթացքում ազատազրկման ձևով պատիժների և դրանց պայմանականորեն չկիրառելու համամասնությունների վերաբերյալ գծապատկերները:


*Գծապատկեր 4
Պատիժների տեսակների և դատապարտյալների ընդհանուր թվի համամասնությունը*



¹⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.prosecutor.am/am/mo/7415/>:


Գծապատկեր 5

Դատապարտյալների ընդհանուր թվի և ազատազրկում ենթադրող ու չենթադրող պատժատեսակների համամասնությունը



Գծապատկեր 6

Ազատազրկման ձևով պատիժների և դրանք պայմանականորեն չկիրառելու համամասնությունը



Սույն զեկույցի առանցքային հարցը 2020 թվականի ընթացքում մարդկությանը վրա հասած Կովիդ-19 համավարակի պայմաններում ազատազրկումների կիրառման պրակտիկան է: Ինչպես հայտնի է, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը համավարակ հայտարարել էր դեռևս 2020 թվականի մարտի 14-ին: Սա է պատճառը, որ այս ենթավերնագրի 2020 թվականին վերաբերվող վերլուծությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը ներառում է 2020 թվականի առաջին կիսամյակը՝ հունվար-հունիս ամիսները, պարզելու համար ազատազրկումների պրակտիկան հենց համավարակի օրերին, վերջինիս տարածման ու երկրների կողմից արգելափակումներ մտցնելու ամենաակտիվ շրջանում: Հաջորդ մասում ներկայացվում է արդեն 2020 թվականի տարեկան կտրվածքով թվային համեմատությունները, որտեղ, նույն ժամանակահատվածի երկրորդ կիսամյակի առանձին տեղեկատվության բացակայության պատճառով ներկայացված է արդեն ամբողջական տարեկան հաշվետվությունը:

Այսպես, ըստ դատական իշխանության պաշտոնական հրապարակումների, **2020 թվականի առաջին կիսամյակում** ավարտել են 1162 քրեական գործեր, որոնցից 1029-ը քննվել է ըստ էության և դատավճիռ կայացվել: Պետք է նշել, որ ավարտված 1162 գործերից

458-ը բողոքարկվել են, որը կազմում է ավարտված գործերի ընդհանուր թվի մոտ 40%-ը (39.4%):

Վերը նշված ժամանակահատվածում ամբողջական կամ մասնակի մեղադրական դատական ակտն ուժի մեջ է մտել 695 անձի նկատմամբ: Դատապարտյալներից 388-ի նկատմամբ կիրառվել է որոշակի ժամկետով ազատազրկում պատժատեսակ (ազատազրկում ենթադրող այլ պատժատեսակներ չեն կիրառվել), որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի (695) 56%-ը: Նույն ժամանակահատվածում դատապարտյալներից 28-ի նկատմամբ կիրառվել է կալանք պատժատեսակ, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի 4%-ը: Ընդհանուր առմամբ, 695 դատապարտյալներից 416-ի նկատմամբ կիրառվել են ազատազրկման ձևով պատժատեսակներ, որոնք կազմում են դատապարտյալների 60%-ը: Մինևույն ժամանակ, դատապարտյալներից 273-ի նկատմամբ կիրառվել է ազատազրկմանն այլընտրանք տուգանք պատժատեսակ, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի 39.3%-ը: Ընդհանրապես, պետք է նշել, որ տուգանքն ամենատարածված և, ըստ էության, միակ այլընտրանքն է ազատազրկման ձևով պատժատեսակին, ինչը կարող է դրա համընդհանուր կիրառման տեսակետից խոչընդոտ հանդիսանալ թե՛ հենց այլընտրանքային պատժատեսակների սակավության, և թե՛ դատապարտյալի կողմից տուգանքի վճարունակության տեսանկյունից: Եվ, ըստ էության, դատապարտյալին հասարակությունից չմեկուսացնելու ձևով հարկադրանքի կիրառման ամենաարդյունավետ միջոցն ընտրվում է պատիժը պայմանականորեն չկիրառելը:


Հաշվետու ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ կիրառված 416 ազատազրկումներից պատիժը պայմանականորեն չի կիրառվել թվով 295 դատապարտյալների նկատմամբ, որը կազմում է բոլոր ազատազրկումների 71%-ը:

Ինչպես նախորդ տարիներին, 2020 թվականի առաջին կիսամյակում ևս կիրառվել են վերը հիշատակված 2018 թվականի «Համաներման մասին» ՀՀ օրենքի դրույթները թվով 57 դատապարտյալների նկատմամբ:

Պատիժների և դրանց ընտրության համամասնությունների վերաբերյալ գծապատկերները ներկայացվում է ստորև:

Գծապատկեր 7


Պատիժների տեսակների¹¹ և դատապարտյալների ընդհանուր թվի համամասնությունը



¹¹ Ծանոթություն. Թվով 6 դատապարտյալների նկատմամբ կիրառվել է զինվորական ծառայության սահմանափակում:


Գծապատկեր 8

Դատապարտյալների ընդհանուր թվի և ազատազրկում ենթադրող ու չենթադրող պատժատեսակների համամասնությունը



Գծապատկեր 9

Ազատազրկման ձևով պատիժների և դրանք պայմանականորեն չկիրառելու համամասնությունը



Այս իմաստով, միայն կարելի է որոշակի գոհունակություն հայտնել, որ, այդուհանդերձ, ազատազրկման ձևով պատիժների 71%-ը պայմանականորեն չեն կիրառվել, և անձինք, վերասոցիալականացման փուլերը փորձել են հաղթահարել հասարակությունում՝ առանց ազատազրկվելու:

Ինչ վերաբերվում է **2020 թվականի տարեկան** կտրվածքով թվային վիճակագրությանը, ապա, մինչև բուն ցուցանիշների ներկայացումը, և առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել և հնարավոր պատճառական վերլուծության ենթարկել այն հանգամանքը, որ 2020 թվականի երկրորդ կիսամյակում կտրուկ աճել են բոլոր ցուցանիշները՝ ներառյալ ավարտված գործերի թիվը, այդ գործերով դատավճիռների թիվը, արդյունքում, բնականաբար, նաև դատապարտյալների թիվը՝ համամասնորեն նաև պատժատեսակների հատվածում:

Այսպես, եթե 2020 թվականի դեռևս առաջին կիսամյակի ընթացքում ավարտել էին 1162 քրեական գործեր, որոնցից 1029-ը քննվել է ըստ էության և դատավճիռ կայացվել, ապա ՀՀ առաջին ատյանի ԸԻԴ քրեական գործերի քննության վերաբերյալ 2020 թվականի տարեկան հաշվետվությունից պարզ է դառնում, որ տարվա կտրվածքով ավարտվել է 2607

գործ (առաջին կիսամյակ՝ 1162), որից 2325 գործ (առաջին կիսամյակ՝ 1029) քննվել է ըստ էության և դատավճիռ կայացվել (առաջին կիսամյակի հետ տարբերությունը կազմում է շուրջ 1445՝ ավարտված գործերի մասով և 1296՝ դատավճիռների քանակի մասով: Այսինքն, 124%-ով աճել են ավարտված գործերը և 126%-ով՝ դատավճիռների թիվը), այն դեպքում, երբ 2018-2020 թվականներին նման կտրուկ փոփոխություններ ՀՀ-ում չեն գրանցվել¹²:

Մյուս գործոնը, հավանաբար ՀՀ-ում Կովիդ-19-ով պայմանավորված արգելանքների¹³ փոփոխություններն են և համավարակով պայմանավորված այլ առանձնահատկություններ, որոնք թերևս ստիպել են դատարաններին՝ համավարակի արգելանքի առաջին ամիսներին լինել ավելի «զուշավոր» և «դանդաղ», իսկ երկրորդ կիսամյակից ավարտել կուտակված գործերը: Ասել է թե նախկին տարիներից հաջորդ տարիներ փոխանցված գործերը կուտակվել, այնուհետ արագ հասցվել են ավարտին, ինչի արդյունքում թվային ցուցանիշներն ունեցել են նման կտրուկ աճ¹⁴:

Եվ այսպես, **2020 թվականի ընթացքում** ավարտված 2607 գործերից քննվել է ըստ էության և դատավճիռ կայացվել 2325 գործով: Կայացված դատավճիռներով դատապարտյալների ընդհանուր թիվը կազմում է 1954, որից.

- 960-ի նկատմամբ կայացվել է ազատազրկման ձևով պատիժ (դատապարտյալների ընդհանուր թվի 49%-ը):
- 109-ի նկատմամբ կիրառվել է կալանք պատժատեսակ (դատապարտյալների ընդհանուր թվի 6%-ը): Ընդհանուր առմամբ, 1069-ի նկատմամբ կիրառվել է ազատազրկման հետ կապված պատիժ, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի 55%-ը:
- Տուգանք պատժատեսակ կիրառվել 863-ի նկատմամբ, որը կազմում է դատապարտյալների ընդհանուր թվի 44%-ը:

¹² 2018 թվականին ՀՀ-ում գրանցվել է 24,678 հանցագործության դեպք, որ 2017-ի համեմատությամբ աճել է 11,2%-ով, 2019թ. գրանցվել է 26,850 հանցագործության դեպք, որը 8,8%-ով աճել է ի համեմատ 2018-ի: Իսկ 2020 թվականին գրանցվել է 26,468 հանցագործության դեպք, որը -1,4%-ով նվազ է 2019 թվականին գրանցված հանցագործության դեպքերից: Տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումներով՝ ՀՀ Գլխավոր Դատախազություն՝ <https://www.prosecutor.am/myfiles/files/pdf/Haxordum2018.pdf>, <https://www.prosecutor.am/myfiles/files/reports/haxordum-karj.pdf>, ԱՎԾ՝ <https://www.armstat.am/file/doc/99520918.pdf> :

¹³ Հայաստանի Հանրապետության Կառավարության 16 մարտի 2020 թվականի թիվ 298-Ն որոշման համաձայն՝ մեր երկրում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած՝ մինչև 2020 թվականի ապրիլի 14-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով, հայտարարվել է արտակարգ դրություն: Այնուհետ սույն որոշումը փոփոխվել է, և ժամկետները երկարաձգվել են մինչև 2020 թվականի սեպտեմբեր ամիսը (13.04.20 N 543-Ն, 14.05.20 N 729-Ն, 12.06.20 N 933-Ն, 12.08.20 N 1319-Ն): Աղբյուրները հասանելի են հետևյալ հղումներով՝ <https://www.arlis.am/>, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140383>, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140975>, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143299>:

¹⁴ Պարզելու համար այս հանգամանքը, այդ թվում՝ 2020թ. մարտ-դեկտեմբեր ժամանակահատվածում Կովիդ-19 համավարակով պայմանավորված դատական նիստերի հետաձգումների (հետևաբար, գործերի կուտակման և այդ պատճառով ազատազրկման վայրում «թողնված» անձանց կարգավիճակի) վերաբերյալ տեղեկատվություն, ՀՀ Դատական Դեպարտամենտ է ներկայացվել համապատասխան հարցում (Ե/05-29.01.2021թ.): Ի պատասխան նշված հարցման՝ Դեպարտամենտից պատասխանել են, որ իրենց մոտ նման հաշվառում չի վարվում (No ԴԴ-2 Ե-1075):

- Ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել 722 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր ազատագրկումների (1069) 68%-ը:

Ձերժ մնալով հանցագործությունների սեռատարիքային, հանցանքի պատճառականության և այլ գործոնների հենքով հոգեբանաքրեաբանական վերլուծությունից, այդուհանդերձ, հաշվի առնելով սույն Ձեկույցի առանցքում Կովիդ-19 համավարակի գործոնը, պետք է նկատել նաև, որ դատապարտյալների ընդհանուր թվից 287-ը (կամ դատապարտյալների ընդհանուր թվի 15%-ը) հանցանքը կատարել է 50 և բարձր¹⁵ տարիքում: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից գրանցվել և ներկայացվել են ռիսկային տարիքային խմբեր կամ տարիքներ, որոնք առավել վտանգավոր են այս վիրուսով վարակվելու տեսակետից: Այդ տարիքային շեմը, որպես կանոն, 60-ն է¹⁶, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև հասարակության ծերացման ազգային ու տվյալ պետության տենդենցներն ու առանձնահատկությունները, բանտային համակարգի առանձնահատկությունները, դրանց պահման պայմանները և այլն: Այս իմաստով, հիշյալ անձանց նկատմամբ ազատագրկմանն այլընտրանք պատժատեսակների կիրառումը խիստ խրախուսելի է: Թեպետ, հաշվետվություններում առկա և վերը ներկայացված խնդիրների առկայության պատճառով դժվար է վերլուծության արդյունքում պնդել այս անձանց փաստացի ազատագրկված լինելու կամ պատիժը պայմանականորեն չկիրառված լինելու մասին:


Այսպիսով, ազատագրկման ձևով նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելը՝ 2018, 2019 թվականների համեմատությամբ, ունեն կտրուկ տարբերություններ: Եթե 2018 թվականին պատիժը պայմանականորեն չկիրառելը կազմում էր ազատագրկում ենթադրող բոլոր պատժատեսակների ընդհանուր թվի 59%-ը, իսկ 2019 թվականին՝ 40%-ը, ապա 2020 թվականին (նաև Կովիդ-19 համավարակի պայմաններում) այդ թիվը կազմում է ազատագրկման դատապարտվածների ընդհանուր թվի 68%-ը: Ուստի, 2018 թվականի համեմատությամբ 9%, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 28%-ով աճել են պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը (համեմատական գրաֆիկական պատկերը ստորև):

¹⁵ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://court.am/hy/statistic-inner/198>:

¹⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.who.int/westernpacific/emergencies/covid-19/information/high-risk-groups>:


Գծապատկեր 10

2018-2020 թվականներին կիրառված ազատագրկում ենթադրող պատժատեսակների (ներառյալ կալանք և որոշակի ժամկետով ազատագրկում) և այլընտրանքային պատիժ տուգանքի համեմատական



Գծապատկեր 11

2018-2020 թվականներին կիրառված ազատագրկում ենթադրող պատժատեսակների (ներառյալ կալանք և որոշակի ժամկետով ազատագրկում) և պատիժը պայմանականորեն չկիրառելու համեմատական



1.1.1 Եզրահանգումներ և առաջարկություններ

Ամփոփելով հաշվետվություններում առկա գործոնների համադրության և վերլուծության մասով սույն ենթավերնագրում արդեն իսկ քննարկված խնդիրները՝ (պատիժը պայմանականորեն չկիրառելու տարածումը կալանքի և ազատագրկման ձևով պատժի վրա) ազատագրկմանն այլընտրանք կիրառելու պրակտիկայի առումով կարելի է կատարել առնվազն հետևյալ դիտարկում-եզրահանգումները.

1) 2020 թվականին, դատապարտյալների ընդհանուր թվի (1954) կեսից ավելին ենթարկվել է ազատագրկման ձևով պատժատեսակի.

2) Առկա պրակտիկան հաշվի առնելով՝ ենթադրվում է, որ պատիժը պայմանականորեն չի կիրառվում գլխավորապես որոշակի ժամկետով ազատագրկումների դեպքում, այլ ոչ կալանքի: Ուստի, ենթադրվում է, որ որոշակի ժամկետով ազատագրկվածներից (960) 75%-ի նկատմամբ կիրառվել է պատիժը պայմանականորեն չկիրառելը, ինչը խրախուսելի է:

3) Այդուհանդերձ, ընդհանուր մոտ 238 ազատագրկվածների նկատմամբ կիրառվել է փաստացի ազատագրկում (այսինքն՝ մոտ 25%): Այս հանգամանքը ևս ապագայում արժե վերազնահատել՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդհանուր ազատագրկման դատապարտվածներից 873-ը կամ 91%-ը դատապարտվել է մինչև 5 տարի ազատագրկման՝ ասել է թե միջին ծանրության հանցանքի համար:

4) Թեպետ, առայժմ, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը դատարանին չի ներկայացնում մինչդասավճռային զեկույցներ, այդուհանդերձ, այս դատապարտյալները մեծապես կարող էին (հավանականորեն) լինել հասարակությունում՝ նշված ծառայության վերահսկողության տակ՝ հենվելով անձի քրեածին ռիսկերի ու կարիքների վերաբերյալ Պրոբացիայի ծառայության կողմից ներկայացված զեկույցների վրա:

5) Դեռևս առկա են խնդիրներ՝ ՀՀ քրեակատարողական ու Պրոբացիոն ոլորտների 2019-2023 թվականների ռազմավարությամբ¹⁷ հաստատված պատժողականից դեպի վերականգնողական արդարադատության անցման ճանապարհին: Դեռևս ամենահաճախ հանդիպող պատժատեսակը մնում է ազատագրկումը, ինչը երկարատև ու հասցեական ազդեցության կարիք ունի:

Եզրակացություններն ամբողջական ներկայացնելու նպատակով, կարծում ենք, արժե դիտարկել նաև ՀՀ-ում քրեական մասնագիտացմամբ դատավորների և վերը ներկայացված գործերի քննության համամասնական համեմատությունը: Վերլուծությունները վկայում են, որ 2018-2020 թվականների ընթացքում 60 դատավորներ քննել են վերը ներկայացված հազարավոր քրեական գործերը: Ստորև բերված աղյուսակում ներկայացվում են 2018-2020 թվականների ընթացքում դատարան մուտք եղած գործերի, դրանց ըստ էության քննության ու ավարտման, ինչպես նաև անավարտ մնացած և հաջորդ տարի փոխանցված գործերի քանակական համեմատությունները.

¹⁷ Հայաստանի Հանրապետության Կառավարության 28 նոյեմբերի 2019 թվականի թիվ 1717-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին», Ընդհանուր դրույթներ, կետ 2: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/33014/>:

Աղյուսակ 1
Քրեական գործերի և դատավորների թվաքանակի համամասնություն

2018 թվական ¹⁸				
Դատավորների ընդհանուր թիվ	Դատարանում առկա գործեր, այդ թվում		Ավարտված գործեր	Անավարտ մնացած գործեր
	Նախորդ տարվանից փոխանցված	Նույն տարում ստացված		
59	1935	2936	2966	1809
<p><i>Տարվա ընթացքում, դատարաններում առկա գործերի ընդհանուր թիվը կազմել է 4871, որից ավարտվել է այդ գործերի 61%-ը, անավարտ մնացել՝ 37%-ը: Տարվա ընթացքում ավարտված գործերի թվով՝ 12 ամիսների կտրվածքով, յուրաքանչյուր դատավորի միջին ամսական ծանրաբեռնվածությունը կազմել է մոտ 248 գործ:</i></p>				
2019 թվական ¹⁹				
Դատավորների ընդհանուր թիվ	Դատարանում առկա գործեր, այդ թվում		Ավարտված գործեր	Անավարտ մնացած գործեր
	Նախորդ տարվանից փոխանցված	Նույն տարում ստացված		
60	1809	3355	2482	2600
<p><i>Տարվա ընթացքում, դատարաններում առկա գործերի ընդհանուր թիվը կազմել է 5164, որից ավարտվել է այդ գործերի 48%-ը, անավարտ մնացել՝ 50,3%-ը: Տարվա ընթացքում ավարտված գործերի թվով՝ 12 ամիսների կտրվածքով, յուրաքանչյուր դատավորի միջին ամսական ծանրաբեռնվածությունը կազմել է մոտ 206 գործ:</i></p>				
2020 թվական ²⁰				
Դատավորների ընդհանուր թիվ	Դատարանում առկա գործեր, այդ թվում		Ավարտված գործեր	Անավարտ մնացած գործեր
	Նախորդ տարվանից փոխանցված	Նույն տարում ստացված		
60	2600	3743	2607	3629
<p><i>Տարվա ընթացքում, դատարաններում առկա գործերի ընդհանուր թիվը կազմել է 6343, որից ավարտվել է այդ գործերի 41%-ը, անավարտ մնացել՝ 57,2%-ը: Տարվա ընթացքում ավարտված գործերի թվով՝ 12 ամիսների կտրվածքով, յուրաքանչյուր դատավորի միջին ամսական ծանրաբեռնվածությունը կազմել է մոտ 217 գործ:</i></p>				

Աղյուսակի վերլուծությունից պարզ է դառնում, որ տարիների ընթացքում ավելանում են դատարան ստացված քրեական գործերը, անավարտ են մնում դրանցից

¹⁸ Ծանոթություն. 1 գործ քննության առարկա չի դարձվել՝ դատախազի կողմից գործի վարույթը կարճվելու և ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվելու հիմքով, 1 գործով կայացվել է որոշում բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելը մերժելու մասին, 67 գործ միացվել է:

¹⁹ Ծանոթություն. 1 գործ վերադարձվել է մեղադրողին, 1 գործ ուղարկվել է այլ դատարան տվյալ դատարանի վարույթում գտնվող գործի հետ համատեղ քննության համար:

²⁰ Ծանոթություն. 82 գործ միացվել է, 1 գործ ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

կեսից ավելին (2020 թվականին մոտ 60%), արդյունքում տարբեր քրեական գործեր կարող են անհարկի ձգձգվել, իսկ որոշ դեպքերում այդ գործերը կարող են վերաբերվել նաև անձանց՝ անազատության պայմաններում գտնվելուն: Ակնհայտ է նաև, որ դատավորների թիվը գրեթե անփոփոխ է և նրանցից յուրաքանչյուրին, տարվա 12 ամիսների կտրվածքով, բաժինն ընկնում միջինում 200 գործից ավելին:

Թեև սույն հետազոտությունը և Ջեկույցը նպատակ չեն հետապնդել ուսումնասիրել և ներկայացնել քննված քրեական գործերի որակական առանձնահատկությունները, այդուհանդերձ, բնական է, որ նման ծանրաբեռնվածության պայմաններում անձի կողմից կատարված վարքի և այդ վարքը ցուցաբերող անձի համալիր ուսումնասիրություններն ու հենց դրանց հենքով պատժատեսակներ ու պատժաչափեր ընտրելու գործը բավականին խնդրահարույց է: Այս իմաստով, կարծում ենք, տեղին է նշել նաև Պրոբացիայի Ծառայության կողմից մինչ դատավճիռ կայացնելը դատարանին զեկույցներ տրամադրելու գործառույթի բացակայության բացասական գործոնը: Նման զեկույցները հնարավորություն կտային դատարանին առավել կարճ ժամանակահատվածում ամփոփ տեղեկատվություն ստանալ թե՛ հանցագործություն կատարած անձի, և թե՛ նրա համայնքի վերաբերյալ՝ արդյունքում կայացնելով առավել անաչառ, անձակենտրոն ու օբյեկտիվ դատական ակտեր:

Այսպիսով, ելնելով սույն ենթավերնագրում ներկայացված խնդիրներից, մարտահրավերներից ու առկա տվյալներից, **առաջարկվում է.**

1) Վերանայել հանցավորության վերաբերյալ վիճակագրությունը՝ այն դարձնելով առավել հարուստ, տեսանելի և կանխատեսելի:

2) Առավել հաճախ կիրառել ազատազրկմանն այլընտրանք պատժատեսակները՝ հակապես ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների գործերով:

3) Քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն և նախատեսել առանձին պատժատեսակ «հասարակությունում մինչև 3 տարի ժամկետով վերահսկողության իրականացումը»՝ հատկապես ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների գործերով: Սույն կարգավորումը հնարավորություն կտա նվազեցնել անձին անհարկի ազատազրկելու մասին որոշում կայացնելը, ապա նոր այդ ազատազրկումը պայմանականորեն չկիրառելը:

4) Առաջարկվում է նաև վերանվանել ՀՀ Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը՝ «ազատազրկումը պայմանականորեն չկիրառելը» վերտառությամբ: Սա հնարավորություն կտա ոչ միայն խուսափել պատիժը ազատազրկման հետ նույնացնելու «պատժողական» մոտեցումից, այլև ըստ էության վերաբերվել Պրոբացիայի ծառայությանը, քանի որ այն, իրապես, հենց պատիժ (նաև հարկադրանքի այլ միջոցներ) կատարող մարմին է՝ բացառապես հասարակությունում²¹:

5) Ազատազրկումներին այլընտրանք պատիժների և միջոցների խթանման նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և Պրոբացիայի մասին ՀՀ օրենքի վերանայման արդյունքում ներդնել և զարգացնել մինչդատավճռային զեկույցների կազմման և դատարանին ներկայացման ինստիտուտը՝ ապահովելու համար առավել անաչառ, արդյունավետ և անձակենտրոն դատական ակտերի կայացումը՝ հանուն համայնքի անվտանգության:

6) Որպես կարճաժամկետ լուծում՝ առաջարկվում է հատկապես դատարանների համար հանցագործություն կատարած անձի հանցածին կարիքների և ռիսկերի

²¹ Տես, «Պրոբացիայի մասին» ՀՀ Օրենք, առ 17 մայիսի 2016 թվական, հոդված 4 և ԵՄ Նախարարների Կոմիտեի 2010/1 Առաջարկությունները Պրոբացիայի կանոնների մասին, 1-ին մաս, «Պրոբացիայի սահմանումը» ենթավերնագիր: Հայերեն տարբերակը հասանելի է հետևյալ հղումով http://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Other/Recommend/CERec_2010_1_am.pdf:

ցուցիչների և դրանց գնահատման ուղեցույցի մշակում, որի արդյունքում ևս դատարանները կկարողանան առավել ճշգրիտ գնահատել անձի հանրային վտանգավորության աստիճանը և ընտրել վերջինիս համար առավել արդյունավետ պատժատեսակը:

1.2. Ազատագրկման ձևով խափանման միջոցի կիրառումը Հայաստանում՝ Կովիդ-19 համավարակից առաջ և վերջինիս ընթացքում

Հայաստանի Հանրապետությունում ազատագրկման ձևով պատժատեսակների և դրանց պայմանականորեն չկիրառելու կամ ազատագրկմանն այլընտրանք պատժատեսակներ կիրառելու պրակտիկայից տարբերվում է ազատագրկման ձևով խափանման միջոցների կիրառման դինամիկան: Եթե ազատագրկման ձևով պատժատեսակների կիրառման նվազեցմանը զուգընթաց 2018-2020 թվականների ընթացքում աճել են այդ պատժատեսակները պայմանականորեն չկիրառելու և հանցանք գործած անձանց հասարակությունում թողնելու դեպքերը, ապա նույն ժամանակահատվածի կտրվածքով պատկերը քիչ այլ է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկայում:

Նախ, պետք է նշել, որ կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցների տեսակներն ու դրանց կիրառման կարգերը սահմանված են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով: Մասնավորապես, Օրենսդիրը խափանման միջոցները տեսակավորել և դասակարգել է հետևյալ կերպ՝

- 1) կալանավորումը
- 2) գրավը
- 3) ստորագրություն՝ չհեռանալու մասին
- 4) անձնական երաշխավորությունը
- 5) կազմակերպության երաշխավորությունը
- 6) հսկողության հանձնելը
- 7) հրամանատարության հսկողության հանձնելը:

Ավելին, հսկողության հանձնելը նախատեսել է միայն անչափահասների համար, իսկ հրամանատարության հսկողության հանձնելը՝ միայն զինձառայողի կամ զինապարտի նկատմամբ՝ զորահավաքներ անցնելու ժամանակահատվածում²²: Ասել է թե, մնացյալ չափահաս կասկածյալների ու մեղադրյալների նկատմամբ կարող են կիրառվել 1) կալանավորումը, 2) գրավը, 3) ստորագրություն՝ չհեռանալու մասին, 4) անձնական երաշխավորությունը և 5) կազմակերպության երաշխավորությունը: Այս բոլորից ազատագրկում է ենթադրում միայն կալանավորում խափանման միջոցը, որն էլ կարող է կիրառվել միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելուց հետո (միայն մեղադրյալների նկատմամբ²³):

Այսպիսով, **2018 թվականի ընթացքում**, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, դատական ակտերի և դատական հանձնարարությունների կատարման հետ կապված միջնորդությունների վերաբերյալ դատական գործերով ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների համաձայն, Հայաստանի Հանրապետության

²² Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, առ 1 հուլիսի, 1998 թվական, հոդված 134:

²³ Նույն տեղում՝ հոդված 134-ի 2-րդ մաս:

ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններում ստացվել է 21610 գործ²⁴ (այդ թվում՝ նախորդ տարվանից հաշվետու տարի փոխանցված 935 գործ), որից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2043 միջնորդություն (գործ), որից ավարտվել է 2041 գործ²⁵:

Ավարտված գործերից (միջնորդություններից) մերժվել է ընդամենը 90-ը կամ 4.4%-ը, թողնվել է առանց քննության 7 միջնորդություն (կամ ավարտված գործերի 0,3%-ը), մնացյալ 1944 կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություններ բավարարվել են (9-ը՝ մասնակի), որը կազմում է ավարտված միջնորդությունների 95,2%-ը: Միայն ՀՀ Քննչական Կոմիտեի տվյալներով, 2018 թվականի ընթացքում 1663 մեղադրյալի նկատմամբ միջնորդություն է հարուցվել խափանման միջոց կալանք ընտրելու մասին: Դատարանների կողմից մերժվել է 62 միջնորդություն, մերժելուց հետո դատախազների կողմից բողոքարկվել է 29 որոշում, որից բավարարվել է 14-ը: 152 մեղադրյալի նկատմամբ կալանքը փոխարինվել է գրավով²⁶:

Վերլուծությամբ պարզվում է, որ, ի տարբերություն նախորդ ցուցանիշի, նույն ժամանակահատվածում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 893 միջնորդություն, իսկ նախորդ տարվանից փոխանցվել է 13-ը (ընդհանուր 906 գործ, որից ավարտվել է 895-ը կամ 98%-ը): Ընդհանուր ավարտված գործերից (895) մերժվել է 713 միջնորդություն կամ ավարտված գործերի մոտ 80%-ը, իսկ բավարարվել է ընդամենը 173 միջնորդություն, որ կազմում է ողջ ավարտված գործերի (895) 19.3%-ը:

Հարկ է նշել նաև, որ 2018 թվականին ավարտվել է կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների 1165 գործ, որից 197-ը կամ 17%-ը մերժվել է, մասամբ կամ ամբողջությամբ բավարարվել է 959-ը, որը կազմում է ավարտված գործերի 82,3%-ը:


Ներկայացված թվերն առավել ամբողջական և ակնառու պատկերացնելու նպատակով ստորև բերված գծապատկերում ներկայացվում է 2018 թվականի ընթացքում կալանավորումը և գրավը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան:

²⁴ Ծանոթություն. թվով 35 միջնորդություն միացվել է, 77-ը վերադարձվել է, 8-ով որոշում չի կայացվել, 1-ը կարճվել է, 66-ը ուղարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:


²⁵ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://court.am/hy/statistic-inner/3>:

²⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.investigative.am/news/view/haxordum_2018.html:


Գծապատկեր 12
 Ավարտված գործերի, կալանավորման և մերժված գործերի
 համամասնությունը 2018 թվականին



Գծապատկեր 13
 Կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններ



Գծապատկեր 14
 գրավը որպես կալանավորման այլընտրանքային
 խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություններ



Ինչպես նախորդ ենթավերնագրում ներկայացված հաշվետվություններում, այնպես էլ այստեղ կան մի շարք խնդրահարույց իրավիճակներ, որտեղ տեղեկատվության բացակայությունը կամ անհամապատասխանությունը դժվարացնում է թե՛ հորիզոնական, և թե՛ ուղղահայաց վերլուծությունները: Դրանցից մեկն է նաև գրավը որպես

կալանավորմանն այլընտրանք խափանման միջոց կիրառելու մասին տվյալները: Պարզ չէ, թե դրանց որ մասն է վերաբերվում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությանը, որ մասը՝ կալանավորման ժամկետը երկարաձգելու միջնորդություններին, ինչպիսի համամասնություն ունեն դրանք և այլն: Այս առումով, եթե դիտարկենք նաև ՀՀ Գլխավոր դատախազության կողմից 2018 թվականի համար հրապարակած Հաղորդումը²⁷, ապա 2018 թվականի ընթացքում դատարան ներկայացված և բավարարված՝ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններից 56-ի պարագայում կիրառվել է գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց: Այստեղ ևս պարզ չէ, թե այդ 56-ը վերաբերվում է միայն Դատախազության տվյալներին, թե նաև Քննչական Կոմիտեին, Հատուկ Քննչական Ծառայությանը և այլ մարմիններին, կամ արդյոք այդ 56 թիվը կրկնվում է դատական իշխանության կողմից ներկայացված և մեր կողմից վերլուծված հաշվետվության²⁸ թե՛ կալանավորման ժամկետը երկարացնելու և թե՛ գրավի ընտրության ցուցիչներում, թե ոչ և այլն: Պետք է փաստել, որ նույնաբովանդակ խնդիրներն առկա են նաև 2019 և 2020 թվականների հաշվետվություններում: Այսպիսի հետազոտությունը, որը ենթադրում է բոլոր ցուցիչների ուղղահայաց վերլուծություն, ենթադրում է առավել երկար ժամանակահատված, ինչը խիստ խրախուսելի կլինի ապագայում հանցավորության արձագանքի վերաբերյալ հետևություններ անելու և գործնական փոփոխություններ իրականացնելու համատեքստում:

Մեկ հանգամանք ևս, որ մարտահրավեր է նմանատիպ հետազոտություններ իրականացնողների համար, միավոր ժամանակահատվածի կտրվածքով ՀՀ Քրեական Դատավարության Օրենսգրքով սահմանված այլ խափանման միջոցների կիրառման վերաբերյալ թափանցիկ ու կանխատեսելի հաշվետվությունների բացակայությունն է: Այն հնարավորություն կտար առավել պարզ տեսնելու տվյալ տարվա կտրվածքով հանցագործությունների, այդ հանցանքներով հարուցված քրեական գործերի, դրանցով կայացված կամ չկայացված խափանման միջոցների ու այդ միջոցների միջև առկա հոգեբանաքրեաբանական կապը:

Իսկ առայժմ պետք է փաստել, որ դիցուք, 2018 թվականին դատարաններում քննված և ավարտված գործերից 90%-ից ավելի դեպքերում կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու, ինչպես նաև ընտրված կալանավորումը որպես խափանման միջոց երկարացնելու միջնորդությունների՝ 80%-ից ավելին բավարարելու պրակտիկան արդիական են: Սրան գուզրնթաց՝ կալանավորմանը միակ այլընտրանք գրավի կիրառումը բարելավման անհրաժեշտություն ունի:

Ազատագրկման ձևով խափանման միջոցների կիրառման պրակտիկան գրեթե նույնն է նաև **2019 թվականի ընթացքում**: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, դատական ակտերի և դատական հանձնարարությունների կատարման հետ կապված միջնորդությունների վերաբերյալ դատական գործերով ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների համաձայն, Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններում ստացվել է 21729 գործ²⁹ (այդ թվում՝ նախորդ տարվանից հաշվետու

²⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.prosecutor.am/myfiles/files/pdf/Haxordum2018.pdf>

²⁸ Տես <https://court.am/hy/statistic-inner/3>:

²⁹ Ծանոթություն. թվով 79 միջնորդություն միացվել է, 38-ը վերադարձվել է, 23-ով որոշում չի կայացվել:

տարի փոխանցված 1335 գործ), որից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 1984 միջնորդություն (գործ), որից ավարտվել է 1981 գործ³⁰:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 1981 (նախորդ տարվանից 60 գործով պակաս) միջնորդություններից մերժվել է 176-ը կամ ավարտված գործերի 8,9%-ը: Երկու գործ թողնվել է առանց քննության, իսկ 1803-ը բավարարվել է, որը կազմում է ավարտված գործերի 91%-ը: Միայն ՀՀ Քննչական Կոմիտեի տվյալներով, հաշվետու ժամանակահատվածում 1.664 մեղադրյալի նկատմամբ միջնորդություն է հարուցվել խափանման միջոց կալանք ընտրելու մասին: Դատարանների կողմից մերժվել է 134 միջնորդություն, մերժելուց հետո դատախազների կողմից բողոքարկվել է 66 որոշում, որից բավարարվել է 32-ը: Իսկ 151 մեղադրյալի նկատմամբ կալանավորումը փոխարինվել է գրավով³¹: Հաշվետվություններում առկա ցուցիչների առանձնահատկությունները և հաշվետվությունների ձևերը, սակայն, թույլ չեն տալիս եզրահանգել, թե ներկայացված միջնորդություններից որ մասն են կազմում նախորդ տարվանից քննված գործերի արդյունքներ: Այս խնդիրը դժվարացնում է վերլուծությունը, թե քանի հարուցված քրեական գործերից կոնկրետ ժամանակահատվածում քանի մեղադրյալ է ներգրավվել և այդ մեղադրյալների նկատմամբ կիրառված խափանման միջոցներից որ մասն են կազմում ազատագրված և հետ կապված խափանման միջոցները:

Այսուհանդերձ, հատկանշական է նաև, որ կալանքի ժամկետը երկարացնելու մասին 1297 միջնորդություններից ավարտվել է 1287-ը, որը կազմում է առկա գործերի 99,9%-ը: Նշված միջնորդությունները մերժվել է 44-ը (ավարտված 1287 միջնորդությունների 3,4%-ը), իսկ ամբողջական կամ մասնակի բավարարվել՝ 1234 միջնորդություն, որ կազմում է սույն ցուցիչով ավարտված գործերի 96%-ը, իսկ 9 գործ թողնվել է առանց քննության:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է 1146 միջնորդություն գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին, որոնցից ավարտվել է 1136 գործ (կամ ներկայացված միջնորդությունների 99%-ը): Ավարտված 1136 միջնորդություններից բավարարվել է լոկ 198-ը, որ կազմում է ավարտված գործերի 17,4%-ը, իսկ 932 միջնորդություն, որ կազմում է ավարտված գործերի 80,1%-ը, մերժվել է³²:


Ստորև բերված գծապատկերը ներկայացնում են կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, այն երկարացնելու և գրավի կիրառման միջնորդությունների համամասնական պատկերը:

³⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://court.am/hy/statistic-inner/185>:


³¹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.investigative.am/news/view/haxordum-2019-tvakan.html>:

³² Տես նույն տեղում:


Գծապատկեր 15
 2019 թվականի ընթացքում կալանավորումը որպես
 խափանման միջոց կիրառելու պրակտիկան



Գծապատկեր 16
 Կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններ



Գծապատկեր 17
 Գրավը որպես կալանավորման այլընտրանքային
 խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություններ



Կալանավորումը որպես խափանման միջոցների ընտրության աճ է արձանագրել նաև ՀՀ Գլխավոր Դատախազությունն իր 2019 թվականի հաղորդմամբ՝ նշելով, որ 2019 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է

ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու 1902 միջնորդություն³³: Նշված միջնորդություններից բավարարվել է 968-ը կամ ներկայացված միջնորդությունների 88,6%-ը, մերժվել է 124-ը կամ 11,3%-ը³⁴: Ներկայացված միջնորդություններից 180-ի կամ 16,4%-ի վերաբերյալ ընտրվել է կալանավորմանն այլընտրանք գրավը: Համեմատելով 2018 թվականի տվյալների հետ՝ Գլխավոր դատախազությունն արձանագրում է, որ 2019 թվականին 222-ով կամ 25,5%-ով աճել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունների քանակը³⁵:

Այսպես կարելի է փաստել, որ 2019 թվականին ևս դատարանների կողմից կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան դեռևս գերակայել է այլ խափանման միջոցների ընտրության նկատմամբ:

Մույն Զեկույցի առանցքային հարցերից մեկի՝ Կովիդ-19 համավարակի պայմաններում ազատությունից զրկելու գործոնի առնչությամբ, խափանման միջոցների ընտրության պրակտիկայի շրջանակներում հատուկ կարևորվել է հատկապես 2020 թվականի մարտ ամսից հետո ընկած ժամանակահատվածը: Թեպետ, առնվազն Դատական իշխանության պաշտոնական հաշվետվությունները չեն ներառում 2020 թվականի հունիս – դեկտեմբեր ամիսների կտրվածքով առանձին տեղեկատվություն, այդուհանդերձ, հանրությանը հասանելի է դատարանների գործունեության 2020 թվականի առաջին կիսամյակի տվյալները, որ ներառում է 2020 թվականի հունվար-հունիս ժամանակահատվածը:

Անազատության պայմաններում պահվելու դինամիկայի տեսակետից՝ անկարևոր չէ շեշտել նաև, որ ՀՀ գլխավոր դատախազության ամփոփմամբ՝ դեռևս 2019 թվականի փետրվարի 15-ի դրությամբ, 2018թ. նոյեմբերի 6-ին ուժի մեջ մտած «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառման արդյունքում, Օրենքի շահառու 4601 անձանցից 1564 մեղադրյալներ, ամբաստանյալներ ազատվել են քրեական պատասխանատվությունից (նրանց նկատմամբ դադարեցվել է հարուցված քրեական հետապնդումը) կամ դատարանի կողմից նշանակված պատժի կրումից³⁶:

Այսպես, **2020 թվականի առաջին կիսամյակում** մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, դատական ակտերի և դատական հանձնարարությունների կատարման հետ կապված միջնորդությունների վերաբերյալ դատական գործերով ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների համաձայն, Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 10811 գործ³⁷ (այդ թվում՝ նախորդ տարվանից հաշվետու տարի փոխանցված 1202 գործ), որից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին 953 միջնորդություն (գործ), որից ավարտվել է 951 գործ³⁸: Այս հանգամանքը հատկանշական է նաև այնքանով, որ նախորդ տարիներին, ինչպես նաև 2020 թվականի տարեկան կտրվածքով (մանրամասն հաջորդիվ) դատարանները ստացել ու քննել են

³³ Ցուցանիշը չի ներառում ՀՀ ՔրՕր-ի 327 հոդվածով մեղադրյալների վերաբերյալ տվյալները:

³⁴ Հաղորդում՝ 2019 թվականին հանցագործությունների քննության վերաբերյալ, էջ 5: Հասանելի է հետևյալ հղումով <https://www.prosecutor.am/myfiles/files/reports/haxordum-karj.pdf> :

³⁵ Տե՛ս նույն տեղում: 2018-ին ներկայացվել են 807 միջնորդություններ, որոնցից բավարարվել են 804-ը, իսկ 2011-ի դեպքում՝ կիրառվել է գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց:

³⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.prosecutor.am/am/mo/7415/>:

³⁷ Ծանոթություն. թվով 137 միջնորդություն միացվել է, 10-ը վերադարձվել է, 5-ով որոշում չի կայացվել, 1-ը կարճվել է:

³⁸ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://court.am/hy/statistic-inner/192>:

մոտավորապես 20 հազար գործեր: Ու թեև, ինչպես վերը նշվեց, դատարանները չեն ներկայացնում երկրորդ կիսամյակի տվյալներ, բայց Կովիդ-19 համավարակի պայմաններում՝ 2020 թվականի առաջին կիսամյակում քննվել են նույնքան գործեր, որքան քննվել են նախորդ տարիների առաջին ու երկրորդ կիսամյակներում:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին ավարտված 951 միջնորդություններից մերժվել է 150-ը կամ ավարտված գործերի 15,8%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 797 միջնորդություն բավարարվել է ամբողջությամբ կամ մասնակի, որ կազմում է ավարտված գործերի 83,8%-ը:

Միևնույն պատկերն է նաև կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների դեպքում: Հաշվետու ժամանակահատվածում ստացվել է 536 միջնորդություն, որից քննվել և ավարտվել են 532-ը: Ավարտված 532 գործերից մերժվել է ընդամենը 47 միջնորդություն, որ կազմում է ավարտված գործերի 8,8%-ը, ամբողջությամբ կամ մասամբ բավարարվել է կալանքի ժամկետը երկարացնելու մասին 482 միջնորդություն, որ կազմում է ավարտված գործերի 91%-ը:

Կալանքի վերահաստատման մասին հաշվետու ժամանակահատվածում քննվել է 52 միջնորդություն, որից բավարարվել է 41-ը կամ ավարտված գործերի մոտ 80%-ը:

Ասել է թե, դատարան ներկայացված ազատագրկում ենթադրող բոլոր միջնորդություններից 80%-90%-ը դատարանների կողմից բավարարվում են:

Հաշվետու ժամանակահատվածում դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 392 միջնորդություններ (նախորդ տարվանից փոխանցված 8 գործ), որոնցից ավարտվել է 393-ը: Պատկերը նույնն է, ինչ նախորդ տարիների համար ներկայացված հաշվետվություններում: Ավարտված թվով 393 գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություններից բավարարվել է ընդամենը 80-ը, որ կազմում է ավարտված գործերի 21,1%-ը, իսկ մերժվել է 304-ը, որ կազմում է ավարտված գործերի 73,4%-ը:

Տարեկան կտրվածքով՝ **2020 թվականին** ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 1976 միջնորդություն կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ: Համեմատելով 2020 թվականի առաջին կիսամյակի թվային ցուցանիշների հետ՝ երկրորդ կիսամյակում 1023 գործ է ստացվել դատարաններ³⁹: Վերը նշված 1976 գործից տարվա ընթացքում քննվել և ավարտվել են 1975 միջնորդություններ⁴⁰: Նախորդ տարվա հետ տարբերությունը կազմում է 1024 գործ: Կարելի ենթադրել, որ կիսամյակի ընթացքում քննվում է միայն կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 950-1000 միջնորդություն:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտված 1975 միջնորդությունից մերժվել է 345-ը, որ կազմում է ավարտված գործերի 17,5%-ը, իսկ բավարարվել է ամբողջությամբ կամ մասնակի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու 1621 միջնորդությունը, որը կազմում է ավարտված գործերի 80,2%-ը: Ընթացիկ ժամանակահատվածում 9-ը գործ թողնվել է առանց քննության:

Կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հաշվետու տարում ստացվել է 1032-ը, որից 1031-ն ավարտվել է: Արդյունքում կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններից մերժվել է ընդամենը 139-ը, որը կազմում է ավարտված գործերի 13,5%-ը, իսկ բավարարվել է 887 միջնորդություն, որը կազմում է

³⁹ Ծանոթություն՝ թվով 229 միջնորդություն միացվել է, 24-ը վերադարձվել է, 20-ով որոշում չի կայացվել, 7-ը կարճվել է, 2 միջնորդություն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

⁴⁰ Հաշվետվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://court.am/hy/statistic-type/17>


ավարտված գործերի 86%-ը: Ընդհանուր առմամբ սույն միջնորդությունից 5 գործ թողնվել է առանց քննության:

Կալանավորման միակ այլընտրանք գրավի կիրառման վերաբերյալ դատարաններում ստացվել է 454 միջնորդություն, բոլորն էլ ավարտվել են: Ստացված ու քննված միջնորդություններից բավարարվել է լուկ 108-ը, որը կազմում է քննված միջնորդությունների 24%-ը, իսկ մերժումների թիվը կազմում է 341, որը կազմում է գործերի 75%-ը (5 գործ թողնվել է առանց քննության):


Թեպետ թվային ցուցանիշով ոչ այնքան երևացող կամ ակնհայտ, բայց անազատության ձևով խափանման միջոցների նախապատվության վերաբերյալ կարող է խոսել նաև կալանքի վերահաստատման մասին միջնորդությունների թիվը՝ հասկապես հենց Կովիդ-19 համավարկի պայմաններում: Նույն 2020 թվականի ընթացքում ներկայացվել է կալանքի վերահաստատման մասին 113 միջնորդություն, որից մոտ կեսը (52) ներկայացվել է դեռևս 2020 առաջին կիսամյակում: Տարվա ընթացքում հենց նույնքան (113) գործ էլ ավարտվել է, որից մերժվել է 32-ը կամ ավարտված գործերի 28%-ը, իսկ 80-ը կամ 71%-ը բավարարվել է:

Ստորև բերված գծապատկերները ներկայացնում են 2020 թվականի ընթացքում ազատազրկում ենթադրող խափանման միջոցի կիրառման պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում:


Գծապատկեր 18
Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու պրակտիկան



Գծապատկեր 19
Կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններ



Գծապատկեր 20
Գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություններ




Ստորև բերված գրաֆիկական պատկերում ներկայացված է 2018-2020 թվականների ընթացքում ազատազրկման հետ կապված խափանման միջոցների⁴¹ վերաբերյալ

⁴¹ Ելնելով Ձեկույցի նպատակներից՝ ազատազրկում ենթադրող խափանման միջոցի մեջ դիտարկվել են 1) կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություններ, 2) կալանքի ժամկետը երկարացնելու մասին միջնորդություններ, 3) կալանքի վերահաստատման մասին միջնորդությունները:

միջնորդությունների ու դրանց բավարարման դինամիկան, ինչպես նաև կալանավորման այլընտրանք հանդիսացող գրավի կիրառման թվային ցուցանիշները:

Գծապատկեր 21


Ազատագրված հետ կապված խափանման միջոցների ընտրության պրակտիկան



Գրաֆիկի թվային ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ 2018-2020 թվականների ընթացքում նվազել են թե՛ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունների, և թե՛ դրանք բավարարելու թվային ցուցանիշները: Պետք է փաստել նաև, որ 2018 թվականի համեմատությամբ 2020 թվականին միջնորդությունների և դրանց բավարարման ցուցանիշները նվազել են համամասնորեն: Մասնավորապես, 2020 թվականին 242-ով կամ մոտ 8%-ով նվազել են կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունները (3363-3121) և նույնական նվազել են նաև այդ միջնորդությունները բավարարելու ցուցանիշները 91%-ից իջնելով 83%-ի:

Գծապատկեր 22

Գրավի կիրառման պրակտիկան



Վերը բերված գրաֆիկից պարզ է դառնում, որ 2018-2020 թվականներին նվազել են նաև գրավի միջնորդության և դրա բավարարման ցուցանիշները: Այստեղ պետք է նշել, որ դեռևս 2019 թվականի ապրիլի 14-ին «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ

Օրենքի հոդված 9-ի ուժով փոփոխություն է կատարվել խափանման միջոց գրավի ինստիտուտում: Այս փոփոխությունների արդյունքում գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածը վերաշարադրվել է, ինչի արդյունքում գրավը դիտարկվում է ոչ միայն կալանքին այլընտրանք, այլ ինքնուրույն խափանման միջոց, որ կարող է կիրառվել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից⁴²: Սակայն, առկա հաշվետվություններում համապատասխան ցուցիչները դեռևս չեն փոփոխվել, ինչի արդյունքում դժվար է եզրահանգել, թե 2020 թվականի ընթացքում գրավի թվով 454 միջնորդություններից որոնք են կիրառվել նախաքննական մարմինների կամ դատարանի կողմից:

1.2.1. Եզրահանգումներ և առաջարկություններ

Ելնելով սույն ենթավերնագրում ներկայացված համեմատություններից ու վերլուծություններից՝ կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում ազատագրված ձևով խափանման միջոցի միջնորդությունների ու դրանց կիրառման պրակտիկայում արձանագրվում են ինչպես դրական, այնպես էլ դեռևս խնդրահարույց մոտեցումներ: Այս ուղղությամբ, ստորև ներկայացվում են որոշ **եզրահանգումներ և առաջարկություններ**, որոնք կարող են օգտակար լինել թե՛ քաղաքականություն մշակողներին ու որոշում կայացնողներին, և թե՛ իրավակիրառ համայնքին՝ ազատագրվումների տեսքով խափանման միջոցների նվազման և դրանց այլընտրանք միջոցների խթանման առումով:

1) Երեք տարիների կտրվածքով համեմատություններն ու վերլուծությունը վկայում են, որ 2018-2020 թվականների ընթացքում դրական փոփոխություն է կրել կալանավորման վերաբերյալ միջնորդությունների ներկայացման և դրանք կիրառելու պրակտիկան: Որոշակի նվազում է նկատվում այս ցուցանիշում:

2) Խիստ կարևոր է, նաև որ 2020 թվականի ապրիլից ի վեր գրավը կարող է կիրառվել նաև որպես ինքնուրույն խափանման միջոց և կալանքի ընտրությունը այնուհետ գրավով փոխարինելու գործընթացն այլևս անցյալում է: Այս իմաստով, շատ կարևոր է, որպեսզի քրեական արդարադատության մարմինները համարժեք փոփոխություններ կատարեն իրենց կողմից վարվող հաշվետվություններում՝ ցույց տալու համար գրավը միջնորդող կամ կիրառող մարմինը (այդ թվում՝ նախաքննական մարմինը):

3) Ցուցանիշների վերլուծությունը վկայում է, որ, հիշյալ երեք տարիների համեմատությամբ, Կովիդ-19 համավարակով պայմանավորված, մեծ փոփոխությունների չի ենթարկվել կալանքի միջնորդությունների ու դրանց կիրառման գործընթացը: Գրեթե անփոփոխ են մնում թե՛ միջնորդությունների, և թե՛ դրանց կիրառման թվային ցուցանիշները:

4) Այստեղ խնդրահարույց գործոններից է նաև այն, որ ի տարբերություն պատիժների վերաբերյալ հաշվետվությունների, կալանավորվածների վերաբերյալ չկան սեռատարիքային կամ այլ հիմքով չափորոշիչներ: Ինչի արդյունքում, դժվար է եզրահանգել, թե, դիցուք, Կովիդ-19 համավարակի պայմաններում քանի 50-60 և ավելի տարիքով անձի նկատմամբ է կիրառվել այս միջոցը: Այս տարիքը ԱՀԿ կողմից ճանաչվել է առավել ռիսկային խումբ՝ նաև ազատագրված վայրերում:

5) Դեռևս խնդրահարույց է մնում այն հանգամանքը, որ կալանավորումների վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների 80-90 տոկոսը բավարարվում

⁴² ՀՕ-196-Ն, 14,04,2020 թվական, հոդված 9: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/>:

են: Իհարկե, սույն ցուցիչը կարող է վկայել նաև նախաքննության մարմինների առավել արդյունավետ աշխատանքի ու առավել հիմնավոր միջնորդություններ ներկայացնելու փաստի մասին, սակայն, ինքնին փաստը, որ ազատագրվում ենթադրող խափանման միջոցը դատարանի կողմից կիրառվում է գրեթե բոլոր դեպքերում, կարող է վկայել նաև առավել «պատժողական» մոտեցումների մասին: Այն կարող է վկայությունը լինել նաև հանգամանքի, որ ազատագրվում ենթադրող միջոցները չեն կիրառվում որպես բացառիկ ու ամենավերջին միջոց:

6) Սակայն, այս ուղղությամբ անհրաժեշտ են բազմաշերտ վերլուծություններ, որ կարծում ենք, ապագայում կիրականացվի՝ հաշվի առնելով թե՛ հանցավորության ընդհանուր դինամիկան, թե՛ տվյալ տարում քննված գործերն ու ավարտված գործերը, ներգրավված մեղադրյալների թիվը, նրանց կողմից կատարված հանցանքը, ապա նաև դրանց հենքով կալանքի միջնորդություններն ու դրանց լուծման ընթացքը:

7) Այս ամենի համար անհրաժեշտ է վերանայել ողջ քրեական արդարադատության համակարգի կողմից հաշվետվությունների ձևանմուշները՝ դրանք դարձնելով առավել ինտեգրված, համընկնող, չափելի, կանխատեսելի և թափանցիկ:

8) Առկա հանրային հաշվետվություններում դեռևս բացակայում են համակարգված տեղեկատվություն բոլոր տեսակի խափանման միջոցների միջնորդությունների ու դրանց կիրառման պրակտիկայի մասին (գրավից ու կալանքից գատ):

9) Կարծում ենք՝ կալանքի կիրառման կամ դրա հնարավոր չարաշահման վրա դեռևս իր ազդեցությունն ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումն առ այն, որ այս խափանման միջոցի ընտրության համար առանցքային հիմք է դիտարկվում կատարված հանցանքը և ՀՀ ՔրՕր-ով սահմանված պատժաչափը: Առավելապես հենց 1 տարուց առավել պատժաչափի նախատեսման դեպքում, գրեթե բոլոր արարքները կարող են դիտարկվել կալանքի միջնորդության «հիմք»:

10) Ինչպես նախորդ ենթավերնագրում, այստեղ ևս, պետք է շեշտել թե՛ նախաքննական, և թե՛ դատարանների խիստ ծանրաբեռնվածության խնդիրը: Տարվա կտրվածքով միայն առաջին ատյանի դատավորները քննում են քսան հազարից ավելի օպերատիվ-հետախուզական, խափանման միջոցների և այլ բնույթի անհապաղ գործեր: Քրեական մասնագիտացմամբ ընդամենը 60 դատավորին ամսվա կտրվածքով բաժին է ընկնում միջինը մոտ 30 նմանատիպ գործ (օրինակ՝ 2020թ. միայն կալանքի ու գրավի վերաբերյալ միջնորդությունները կազմել են 3575 գործ): Ու թեև, սույն Ձեկույցը նպատակ չի հետապնդում դիտարկել, համեմատել կամ վերլուծել քննված գործերի արդյունավետությունը, այդուհանդերձ, անձին ազատությունից զրկելու հետ կապված ցանկացած հարց, որպես հանցանք գործածի նկատմամբ ծայրահեղ ու ամենավերջին մոտեցում, պիտի քննության արժանանա հավուր պատշաճի ու համարժեք ժամկետներում:

Սույն ենթավերնագրի վերաբերյալ ստորև ներկայացվում են հետևյալ **առաջարկությունները**.

1) Վերանայել կալանավորումը որպես խափանման միջոց միջնորդելու և բավարարելու դատական և նախաքննական մարմինների մոտեցումները՝ այն իրապես դիտարկելով որպես ամենավերջին ու ծայրահեղ միջոց: Այս իմաստով, թեև ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված նոր Քրեական դատավարության օրենսգիրքը վերացրել է կալանքի կիրառման և մեղսագրվող արարքի համար ՔրՕր-ով նախատեսվող առավելագույն պատժաչափի կապը⁴³, այդուհանդերձ, անհրաժեշտ է հնարավորինս արագ

⁴³ Տե՛ս հետևյալ հղումով՝ http://www.parliament.am/draft_docs7/K-637.pdf, հոդված 118:

վերանայել գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում շարադրված «...որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է» բառակապակցությունը:

2) Անհրաժեշտ է վերանայել ողջ քրեական արդարադատության մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունները առնվազն՝ հանցավորության, դրա քննության, խափանման միջոցների և դատավճիռների մասերով՝ ինտեգրելով ողջ տեղեկատվությունը Ոստիկանության, Քննչական մարմինների, Դատախազության, Դատարանի, Քրեակատարողական ու Պրոբացիայի ծառայությունների միջև: Հաշվետվությունները պիտի արձանագրեն հանրապետության տարբեր մարմինների արձագանքը հանցավորությանը՝ առհասարակ և դրանց նկատմամբ կիրառված քրեաիրավական միջամտություններին՝ մասնավորապես:

3) Այս իմաստով, սույն Զեկույցը կարող է հիմքերից մեկը հանդիսանալ դիցուք կալանքի վերաբերյալ առավել ընդգրկուն ու խորը վերլուծություն իրականացնելու համար: Առնվազն անհրաժեշտ է կալանքի միջնորդությունները դիտարկել սովյալ տարում արձանագրված հանցագործությունների, այդ հանցագործությունների քննության, ավարտված ու դատարան ուղարկված գործերի, այդ գործերից մեղադրյալների թվաքանակի, նրանց վերաբերյալ կալանք միջնորդելու, այնուհետ այդ միջնորդությունների լուծման եղանակի ամբողջության մեջ: Բայց դրա համար անհրաժեշտ է առնվազն հաշվետվություններից տեսնել, թե օրինակ 2018 թվականին հանրապետությունում գրանցված 24678 դեպքից⁴⁴ որքան մասն է մնացել քրեական արդարադատության համակարգում, որ փուլում, ինչպես տարանջատել ընտրված քրեաիրավական միջոցները ընթացիկ ու նախկին տարվա գործերի համեմատությամբ և այլն:

4) Մյուս կարևոր գործոնը դատարանների ծանրաբեռնվածությունն է: Սակայն այստեղ ևս, ինստիտուցիոնալ իմաստով գործոնը, որ կարող էր նպաստել թե՛ դատարանների գերծանրաբեռնվածության նվազեցմանը (նպաստելով նաև անազատության մեջ մնալու ժամանակահատվածի հնարավոր անհարկի ձգձգումներին), և թե՛ առավել անձակենտրոն արդարադատության իրականացմանը, կարծում ենք (դատավորների թվաքանակի ավելացմանը գուցահեռ կամ դրա փոխարեն), արտադատարանական լուծումների ինստիտուցիոնալ զարգացումն է (diversion՝ արտադատական լուծում կամ mediation՝ քրեական գործերով հաշտեցման ինստիտուտ): Այս լուծումները հնարավորություն են տալիս, հատկապես ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների դեպքում քրեական գործն ավարտել (կամ կասեցնել) քննչական կամ դատախազական օղակներում՝ նվազեցնելով թե՛ դատարանների ծանրաբեռնվածությունը, թե՛ դատական նիստի մասնակիցների մոտ հնարավոր լարված ու խիստ հուզական ապրումները:

5) Ուստի, առաջարկում ենք նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել մասնավոր մեղադրանքի ինստիտուտի ընդլայնում (հատկապես անչափահաս և մինչև 21 տարեկան երիտասարդների համար)՝ կարճելով կամ կասեցնելով տուժողի հետ հաշտության պայմաններով քրեական գործերը և մեծապես ֆիլտրելով դատարան հասնող գործերի քանակը:

⁴⁴ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.armstat.am/file/article/sv_12_19a_540.pdf

1.3. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման պրակտիկան

Պատժի ազատականացման և պատժողական քաղաքականության նվազման ցուցիչներից է ոչ միայն քրեակատարողական հիմնարկները բնակեցնելու գործընթացը, այլև ՔԿ հիմնարկից դեպի հասարակություն վերադարձի ապահովումը: Հասկանալի է, որ Կովիդ-19 համավարակի պայմաններում ԱՀԿ և այլ կազմակերպություններ անդամ երկրներին առաջարկել են պատժից ազատման ինստիտուտի ակտիվացում (այս մասին առավել մանրամասն կխոսվի Ձեկույցի 3-րդ բաժնում): Այդ իսկ պատճառով, Ձեկույցի սույն ենթավերնագիրն անդրադառնում է հատկապես 2020 թվականի ընթացքում ՀՀ Քրեակատարողական հիմնարկներից պատժից պայմանական վաղաժամկետ ազատման պրակտիկայի՝ համեմատության համար դիտարկելով նաև սույն գործընթացը 2018 և 2019 թվականների կտրվածքով:

Ազատագրված և դեպի հասարակություն վերադառնալու պրակտիկաների համեմատական վերլուծության նպատակով Ձեկույցի սույն հատվածում կքննարկվեն նաև պատժից այլ հիմքերով ազատումների, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի մեկուսացվածության աստիճանը փոխելու ինստիտուտի որոշ ցուցանիշներ:

Այսպես, մինչդեռ պարտիկ նկատմամբ դատական վերահսկողության, դատական ակտերի և դատական հանձնարարությունների կատարման հետ կապված միջնորդությունների վերաբերյալ դատական գործերով ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանների գործունեության վերաբերյալ հաշվետվությունների վերլուծությունները վկայում են, որ **2020 թվականի ընթացքում** ստացվել է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման 336 միջնորդություն: Նախորդ տարվանից փոխանցված 39 գործերի հետ միասին՝ տարվա ընթացքում քննվել է 375 միջնորդություն, որից ավարտվել է 328-ը, անավարտ մնացել 43-ը, իսկ թողնվել է առանց քննության 3 միջնորդություն: Տարվա ընթացքում ավարտված 328 գործերից (միջնորդություններից) բավարարվել է 150-ը կամ ավարտված գործերի 46%-ը, իսկ մերժվել է 170-ը կամ ավարտված գործերի 52%-ը: Խնդրահարույց է անավարտ մնացած 43 միջնորդությունը, որ որևէ բաց աղբյուրում դժվար է գտնել դրա հիմնավորումը: Ընդհանրապես, թե՛ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, և թե՛ կալանավորումների վերաբերյալ «ԴԱՏԱԼԵՔՍ» համակարգն ընտրանք չի կատարում և չի ներկայացնում համակարգված տեղեկատվություն:

ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝⁴⁵ 2020 թվականի ընթացքում պատժից ազատվել է 479 անձ, որից 199-ը կամ 41.5%-ը՝ պայմանական վաղաժամկետ, որից միայն 27-ն է ազատվել հունվար – փետրվար ամիսներին: Մնացյալ 452 անձինք պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել են մարտ-դեկտեմբեր (Կովիդ-19 համավարակի) ամիսների ընթացքում: Հավանաբար, պայմանավորված նաև ՔԿ հիմնարկների լրակազմերի մեծությամբ, պայմանական վաղաժամկետ ազատման թվային ցուցանիշով առաջատարներն են «Սևան» (40), «Արմավիր» (39) և «Կոշ» (22) ՔԿ հիմնարկները, որոնք համեմատաբար ավելի մեծ լրակազմով հիմնարկներն են, իսկ Արմավիր ՔԿ հիմնարկը Հայաստանի ամենամեծ՝ 1240 լրակազմով⁴⁶ նախատեսված հիմնարկն է: Կոշ քրեակատարողական հիմնարկը նախատեսված է 548, իսկ Սևան ՔԿ հիմնարկը՝ 640 անձի համար⁴⁷, սակայն, ՔԿ վարչության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Սևան ՔԿ հիմնարկում

⁴⁵ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության 11 փետրվարի 2021թ. թիվ Ե40/7.1-471 գրությունը:

⁴⁶ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 28 փետրվարի 2012 թվականի թիվ 30-Ն Հրաման, կետ 13: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.moj.am/legal/view/article/206>:

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, կետեր 3 և 4:

2020 թվականի հունվարի 31-ի դրությամբ պահվել են 108, իսկ արդեն դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ընդամենը 96 անձ: Միևնույն պատկերն է նաև Կոշ ՔԿ հիմնարկի դեպքում, երբ տարվա հունվարի 31-ի դրությամբ հիմնարկում պահվել են 108, իսկ տարվա վերջում՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 79 մարդ: Արմավիր ՔԿ հիմնարկում միևնույն ժամանակահատվածում ՔԿ հիմնարկի բնակչության թիվը հունվարի 799-ից իջել է 699-ի՝ նվազելով 100 հոգով: Ընդհանուր առմամբ, բոլոր ՔԿ հիմնարկներում բանտային բնակչությունն անգամներ պակաս է այն լրակազմից, որ սահմանված է տվյալ հիմնարկի համար:

Ավելին, նախորդ ենթավերնագրում ներկայացվող խնդիրների հետ համեմատության համար պետք է նշել, որ 2020 թվականի ընթացքում ՀՀ թվով 12 Քրեակատարողական հիմնարկներում պահվել են միջինը մոտ 2100 ազատազրկվածներ, որոնցից միջինը՝ մոտ 1000-ը, կալանավորված անձինք են: Ասել է թե, բանտերի կեսը բնակեցված է մարդկանցով, ովքեր անմեղության կանխավարկածի շրջանակներում դուրս են մնում «ուղղման աշխատանքներից» (սոցիալական ինտեգրման կամ վերականգնողական ծրագրերից), ինչի համար նախատեսված է 21-րդ դարի բանտն առհասարակ⁴⁸:

Այս ֆոնին առավել առանձնահատուկ է ընկալվում նաև ազատազրկվածների և քրեակատարողական ծառայողների համամասնությունը: ՀՀ ԱՆ ՔԿ վարչության կողմից տեղեկատվության հա համադրման և վերլուծության ուղղություններով համաձայն⁴⁹ 2020 թվականին աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 2183 անձ՝ հավասարվելով կամ, որոշ դեպքերում, անցնելով ազատազրկվածների ընդհանուր թվաքանակին: Այս մասին առավել մանրամասն կիսուվի հատկապես ֆինանսների վերլուծության բաժնում, սակայն, խիստ ակնհայտ է, որ նման համամասնության պարագայում որևէ դատապարտյալ (որոնց թիվը կազմում է միջինը մոտ 1100 անձ), չի կարող անմասն մնալ հասարակությունում վերաինտեգրման նախապատրաստման կամ սոցիալական վերաինտեգրման ծրագրերից: Արդյունքում հնարավորինս արժանահավատ ու արդյունավետ պիտի լինեին Քրեակատարողական ծառայության (նաև Պրոբացիայի) կողմից կազմվող զեկույցները, հետևաբար՝ առավել սակավ դատարանի կողմից չբավարարված միջնորդություններ և առավել մեծ քանակությամբ պայմանական վաղաժամկետ ազատված անձինք: Այսուհանդերձ, ներկայացված հաշվետվություններից դժվար է եզրահանգել, թե օրինակ, 2020 թվականին դատարաններում մուտք եղած 336 միջնորդություններից և վաղաժամկետ ազատված 199 անձից քանիսն են կրկնակի անգամ դիմած կամ քանիսն են ազատվել նախորդ տարի ներկայացված միջնորդություններով:

Հաշվետու ժամանակահատվածում, Պրոբացիայի ծառայության կողմից վերահսկողություն է իրականացվել 1611 անձի նկատմամբ, որից պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ իրականացվել է 365 վարույթ: Պատիժ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է 195 անձ: Նշված ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայության կողմից կազմվել է 698 զեկույց, որից 121-ը (կամ 17,3%-ը) դրական եզրակացությամբ, իսկ 577-ը (կամ 83,7%-ը) բացասական եզրակացությամբ: Հատկանշական է, որ զեկույցներից 204-ը կազմվել են կրկնակի և ավելի անգամ⁵⁰: Այս իմաստով, դեռևս խնդրահարույց է մնում պատիժ կատարող մարմինների


⁴⁸ ՄԱԿ «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» կամ Նեյտոն Մանդելայի կանոններ՝ https://www.un.org/en/events/mandeladay/mandela_rules.shtml, ՄԲԲ «Բանտային գլոբալ թրենդներ»՝ <https://www.penalreform.org/resource/global-prison-trends/>, ԵԽ «Եվրոպական բանտային կանոններ»՝ <https://www.coe.int/en/web/human-rights-rule-of-law/european-prison-rules> և այլն:

⁴⁹ ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության 25 հունվարի 2021թ. թիվ Ե40/11-218 գրությունը:

⁵⁰ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://probation.am/hy/vichakagrutyun-hashvetvutyun>:

կողմից ՊՎ ազատման ինստիտուտի նկատմամբ որոշակի պատժողական մոտեցումը ի համեմատ, օրինակ, դատարանների:


Գծապատկեր 23




Այսպես, հաշվետու ժամանակահատվածում, ազատագրվումը մեղմելու կամ անձին հասարակություն վերադարձնելու նպատակով առաջին ատյանի դատարաններում քննվել են 823 պատիժը փոփոխելու, հետաձգելու և պատժից ազատելու մասին միջնորդություններ, որից 713-ը ստացվել է ընթացիկ տարում: Քննված միջնորդություններից ավարտվել է 515-ը: Մերժվել են 239 միջնորդություն կամ քննված գործերի 29%-ը, մասնակի կամ ամբողջությամբ բավարարվել են 248-ը կամ քննված գործերի 30%-ը, իսկ մնացյալ 40% միջնորդությունները կամ թողնվել են առանց քննության (28 գործ), կամ ուղարկվել են ընդդատության (20 գործ) կամ մնացել են անավարտ և փոխանցվել հաջորդ տարի (285 գործ): Նախորդ ենթավերնագրերում ներկայացված խնդիրներից հավանաբար դատավորների ծանրաբեռնվածության արդյունքում բավականին գործեր մնացել են կամ առանց քննության, կամ անավարտ:

Ստորև բերված գծապատկերներում ներկայացված են 2020 թվականին պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու (ՊՎԱ) վերաբերյալ դատարաններում ստացված միջնորդությունների քննության և ՔԿ հիմնարկներից պատժից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց վերաբերյալ պատկերավոր տվյալները:


Գծապատկեր 24
 2020 թվականի ընթացքում պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու մասին միջնորդություններ



Գծապատկեր 25
 2020 թվականին ՊՎԱ վերաբերյալ միջնորդություններ



Գծապատկեր 26
 ՔԿ հիմնարկներում պահվող անձանց միջին թվաքանակի ու ՊՎ ազատվածների համեմատություն



Համեմատության համար պետք է նշել, որ **2019 թվականին** ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարաններում քննվել է 394 ՊՎԱ միջնորդություն, որից 345-ը նույն տարվա ժամանակահատվածում ստացված միջնորդություններ: Հիշյալ 394 գործից ավարտվել է 351-ը, իսկ 39 մնացել անավարտ (ստացված միջնորդությունների մոտ 10%-ը):


Քննված միջնորդություններից մերժվել է 162-ը, որ կազմում է բոլոր գործերի 41%-ը, բավարարվել՝ 180-ը, որ կազմում է քննված գործերի 46%-ը:

Քրեակատարողական վարչության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2019 թվականի ընթացքում պատժից ազատվել են 582 անձինք, որոնցից 212-ը կամ ազատվածների 36,4%-ը կազմում են պատժից պայմանական վաղաժամկետ ազատվածները: Ինչպես 2020 թվականի դեպքում, առաջատարներն են «Մևան», «Կոշ» և «Արմավիր» ՔԿ հիմնարկները:

Խնդրի վերաբերյալ Խոշտանգումների Կանխարգելման Ազգային Մեխանիզմի կողմից հրապարակված 2019 թվականի զեկույցում, հղում անելով ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված պաշտոնական տեղեկատվությանը, նշվում է, որ այս 212 ՊՎ ազատվածները մասն են կազմում 1138 համապատասխան դիմում ներկայացրած դատապարտյալների⁵¹: Այսինքն, ՊՎ ազատման վերաբերյալ դիմում ներկայացված դատապարտյալների միայն 18,6%-ն է վաղաժամկետ ազատվել: Ավելին, հիմք ընդունելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքով սահմանված ՊՎ ազատման մասին դատապարտյալի դիմում ներկայացնելու, հիմնարկի վարչակազմի կողմից քննարկելու, զեկույց կազմելու և գործը դատարան ներկայացնելու/չներկայացնելու մասին որոշում կայացնելու համար նախատեսված ժամկետները, պետք է նշել, որ այս 1138 դիմումներից հնարավոր է՝ ոչ բոլորն են, ներկայացվել հենց 2019 թվականին, իսկ որոշ դեպքերում նաև 2019-ին ներկայացված դիմումները հնարավոր է, որ ոչ միշտ են քննվել հենց այդ տարվա ընթացքում⁵²: Ավելին, 1138-ից միայն 273-ի վերաբերյալ է միջնորդություն ներկայացվել դատարան⁵³:

Այսուհանդերձ, պետք է փաստել, որ 2019 թվականի ընթացքում ներկայացված 1138 դիմումից 926-ը մերժվել է:

Գծապատկեր 27



Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի մեկ այլ խնդրահարույց հանգամանքներից են նաև Քրեակատարողական ու Պրոբացիայի ծառայությունների կողմից ներկայացվող «դրական» կամ «բացասական» զեկույցները,


⁵¹ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես Կանխարգելման Ազգային մեխանիզմի 2019 թվականի գործունեության վերաբերյալ Տարեկան Զեկույց, էջ 382 <https://www.ombuds.am/images/files/f6bcc6db65258e28be6f3e093987a15.pdf>

⁵² Օրինակ՝ «...Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կարող է կրկին քննարկվել համապատասխան որոշման ընդունումից հետո՝ երեք ամիս անց, եթե դատապարտյալը նշված ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան 40 օր առաջ ներկայացրել է դիմում» ՀՀ քրեակատարողական օրենսգրքի հոդված 115, 12-րդ կետ:

⁵³ ՀՀ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի 2019 թվականի գործունեության 2019 թվականի տարեկան հաշվետվություն, էջ 10՝ http://www.pmg.am/images/PMG_Report_2019.pdf:

որոնց որպես այդպիսին գնահատելու հիմքը ՀՀ ՔրՕր-ի 76-րդ հոդվածով սահմանված վարքի և անձի ռիսկայնության ցուցիչներն են: Հաջորդիվ դեռ կլիտավի զեկույցները դրական կամ բացասական որակելու խնդրի մասին, սակայն, առկա հրապարակումների վերլուծությունները վկայում են, որ 2019 թվականի ընթացքում, օրինակ, ՀՀ քրեակատարողական ծառայության կողմից կազմվել է, ընդհանուր առմամբ, 1049 զեկույց, որոնցից միայն 102-ը (կամ 10%) դրական, իսկ 947-ը կամ 90%-ը՝ բացասական⁵⁴:

Գծապատկեր 28



Թեպետ, սույն Ձեկույցը նպատակ չի հետապնդում իրականացնել ՊՎ ազատման համակարգի բովանդակային վերլուծություն, այդուհանդերձ, այս ցուցանիշի մասով, խնդիրն առավել արդիական է դառնում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ, ինչպես վերը նշվեց, աշխատակիցների և ազատազրկվածների հարաբերակցությունը թե՛ 2019-ին, թե՛ 2020-ին կազմում է 1:1, իսկ որոշ դեպքերում նույնիսկ աշխատակիցների թիվը գերազանցում է ազատազրկվածների թվին: Ասել է թե, յուրաքանչյուր ազատազրկված տեսականորեն 24 ժամ հսկողության տակ է, նրա հետ վարքի շտկման կամ սոցիալական վերաինտեգրմանը նպաստող աշխատանքները կարող են իրականացվել ամենաարդյունավետ կերպով: Ուստի հարց է առաջանում, թե ինչ աշխատանքներ են իրականացվել և դեռ ինչպիսի աշխատանքներ են պլանավորվում կոնկրետ դատապարտյալի հետ, երբ անձը կրել է օրենքով իր համար սահմանված ժամկետը, ՔԿ հիմնարկի ողջ ծառայությունները հասանելի են նրան 24 ժամ կտրվածքով, բայց նրա վերաբերյալ ՔԿ հիմնարկի զեկույցը կրել է «բացասական» բնույթ:

Իհարկե, այս խնդրին կարող է նպաստել նաև այն, որ դեռևս 2018-2019 թվականներին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՔԿ հիմնարկների կողմից զեկույցի կազմումն իրականացնում է բալային գնահատման չափորոշիչների հիման վրա (0-5 միավոր), որի պարագայում զեկույցը դրական է գնահատվում, երբ բալերի գումարը 28 և ավելի միավոր է կազմում (առավելագույն 43-ից)⁵⁵: Ինչպես վկայում են տարբեր հետազոտություններ ու կարծիքներ, բալային համակարգը միգուցե արդյունավետ է որոշ ստատիկ տվյալների գնահատման առումով (տարիքը հանցանք գործելիս, ներկա գործով հոդվածը, նախկին դատվածությունները և այլն), սակայն դրանք խնդրահարույց են այնպիսի դինամիկ գործոնների համար,


⁵⁴ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների Պաշտպանի՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի 2019 թվականի գործունեության վերաբերյալ Տարեկան Ձեկույց, էջ 385 <https://www.ombuds.am/images/files/f6bcc6db65258e28be6f3e093987a15.pdf>:

⁵⁵ ՀՀ արդարադատության նախարարի 12 հուլիսի 2018 թվականի թիվ 336-Լ, Հրաման: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=96966>:

ինչպիսիք են հարաբերությունները, վարքի փոփոխությունը, դիրքորոշումներն ու արժեհամակարգի փոփոխությունները և այլն:

Ինչպես վերը նշվեց, պատժի ազատականացման կամ պատժողական քաղաքականությունից անցման գործընթացում դեռևս խնդրահարույց են մնում Քրեակատարողական ու Պրոբացիայի ծառայությունների մոտեցումները: Ինչպես 2020 թվականին, Պրոբացիայի կողմից կազմված և ՔԿ ծառայությանը տրամադրված զեկույցների գերակշիռ մասը գնահատվել են «բացասական»: Դիցուք, 2019 թվականի ընթացքում կազմվել և ՀՀ քրեակատարողական համակարգին է տրամադրվել 1048 զեկույց, որից 235-ը կամ զեկույցների 22,4 %-ը կազմել են դրականները, իսկ 813-ը կամ զեկույցների 77,6%-ը՝ բացասականները:


Գծապատկեր 29



Այսպիսով, 2019-2020 թվականներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի դինամիկան հետևյալն է.

Գծապատկեր 30


Դատարան ներկայացված միջնորդությունների և դրանց լուծման դինամիկան




Ինչպես պարզ է դառնում գծապատկերի վերլուծությունից, 2019 թվականի համեմատությամբ, ի հեճուկս դատարաններում քննված միջնորդությունների քանակի նվազման, 2020 թվականին աճել են միջնորդությունները մերժելու ցուցանիշները:

Գծապատկեր 31

Քրեակատարողական և Պորբացիոն ծառայությունների կողմից 2019թ⁵⁶. ընթացքում կազմված զեկույցներ




Գծապատկեր 32
Պորբացիայի ծառայության կողմից կազմված զեկույցների դինամիկան 2019-2020 թվականներին



Թեև ՔԿ ծառայության մասով դեռևս բացակայում են հատկապես 2020 թվականին կազմված և լուծված զեկույցների մասին տվյալները, այդուհանդերձ, վերը բերված գծապատկերներից պարզ է դառնում, որոշակի տենդենց: Մասնավորապես, զեկույցների թվաքանակի նվազեցմանը հակառակ, միևնույն է, համամասնորեն պահպանվում են բացասական զեկույցների մոտ 80%-85%-ը: Սրանով է պայմանավորված նաև ստորև ներկայացվող գծապատկերում բերված պատկերը, որ վերաբերվում է պատժից ազատվածներին, հատկապես ՊՎ ազատված դատապարտյալների թվային ցուցանիշներին:

⁵⁶ ՔԿ ծառայությունում 2020 թվականի տվյալները դեռևս ներկայացված չեն:

2019-2020 թվականների ընթացքում պատժից ազատված դատապարտյալների և ՊՎ ազատվածների հարաբերակցությունը



Ինչպես նկատում ենք, երկու տարիների համեմատությամբ նվազում են թե՛ պատժից ազատվածների, և թե՛ դրանցից հատկապես պայմանական վաղաժամկետ ազատվածների թվային ցուցանիշները: Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 530 անձ, իսկ 2017-ին՝ 365-ը: Չենք կարող չարձանագրել նաև, որ այս ցուցանիշների վրա վստահաբար անդրադարձել է նաև 2018թ. նոյեմբերի 6-ին ուժի մեջ մտած «Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակի և Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 100-ամյակի կապակցությամբ քրեական գործերով համաներում հայտարարելու մասին» ՀՀ օրենքի կիրառման գործընթացը: Առնվազն, ՀՀ Գլխավոր դատախազության 2019 թվականի փետրվարի 15-ի ամփոփմամբ⁵⁷, նշված օրվա դրությամբ սույն Օրենքի շահառու հանդիսացած 4601 անձից 362-ը պատժից ազատվել է դատարանի որոշմամբ, 621-ը՝ ՀՀ ԱՆ ՔԿԸ պետերի որոշմամբ, իսկ Պրոբացիայի ծառայության ստորաբաժանումների կողմից կայացվել է համաներման մասին օրենքի կիրառման վերաբերյալ 1594 որոշում: Ավելին, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության պաշտոնական կայքէջից տեղեկանում ենք, որ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում 31.10.2019թ. դրությամբ համաներում է կիրառվել 2833 շահառուների նկատմամբ:

Իհարկե, խիստ կարևոր է, որպեսզի վերը նշված թվային համեմատականները լինեն խիստ ճշգրիտ, ամփոփված լինել քրեական արդարադատության համակարգի միասնական հաշվետվություններում, որպեսզի զերծ մնանք նույնություններից ու կրկնություններից: Այդուհանդերձ, պետք է նշել, որ պատժի ազատականացման և դեպի հասարակություն վերադարձի խթանման իմաստով, ուշագրավ է ոչ միայն ՊՎ ազատման նվազ ցուցանիշները, այլև այն հանգամանքը, որ պատժից ազատվածներից գրեթե կեսից ավելին ազատվել է՝ պատիժը լրիվ կրելով: Դիցուք, ՔԿ ծառայության կողմից ներկայացված տվյալներով, 2019 թվականին պատժից ազատված 582-ից պատժի լրիվ կրումով է ազատվել 266-ը կամ ազատվածների 46%-ը, իսկ 2020-ին՝ պատժից ազատված 479-ից 249-ը կամ ազատվածների 52%-ը:

Թեպետ այլ վերլուծության առարկա է, թե դրանցից ովքեր ինչպիսի հողվածներով են դատապարտվել և որքան պատժաչափ են փաստացի կրել, այդուհանդերձ, կարելի է

⁵⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.prosecutor.am/am/mo/7415/>:

նկատել, որ ընդհանուր տենդենցն ավելի երկար ժամանակով մարդկանց անազատության մեջ պահելն է, քան ազատ արձակելուց հետո Պրոբացիայի ծառայությամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելը հասարակությունում:

Պատժից ազատման կամ անձին դեպի հասարակություն վերադարձնելու գործընթացը ներառում է նրա հետ նախապատրաստական աշխատանքների կատարումը: Այս աշխատանքներից, ի թիվս այլոց, կարևոր տեղ է զբաղեցնում անձի պատժի կրման պայմանների խրախուսական փոփոխությունները՝ փոխելով քրեակատարողական հիմնարկի մեկուսացվածության աստիճանը (փակից կիսափակ, կիսափակից կիսաբաց, կիսաբացից բաց տիպի ուղղիչ հիմնարկների միջև) և առավել մոտեցնելով անձին հասարակություն վերադարձին: Այս իմաստով, ուշադրություն է դարձվել հատկապես ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող դատապարտյալների տեղաբաշխման հանձնաժողովի⁵⁸ կողմից ՔԿ հիմնարկների մեկուսացվածության աստիճանը փոփոխելու գործընթացին՝ կարևորելով հատկապես կիսափակ տիպի ուղղիչ հիմնարկից դեպի կիսաբաց և բաց տիպի ուղղիչ հիմնարկներ անձանց տեղափոխումը:

Այսպես, 2020 թվականի ընթացքում վերը նշված Տեղաբաշխման Հանձնաժողովի որոշմամբ, 51 անձ պատիժը կրելու համար կիսափակ տիպի ուղղիչ հիմնարկից տեղափոխվել է կիսաբաց տիպի ուղղիչ հիմնարկ: Տեղափոխման հիմքերը և դրանց բովանդակությունը պարզ չեն, սակայն, կարևոր է, որ թվով 31 անձ խցային տիպի ուղղիչ հիմնարկներից, ինչպիսիք են «Նուբարաշեն», «Արմավիր» կամ «Հրազդան», ՔԿ հիմնարկների միջնորդությամբ տեղափոխվել են կացարանային տիպի հիմնարկներ, այդ թվում՝ «Կոշ», «Վարդաշեն» և «Սևան»: Սակայն Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության կողմից 9 դատապարտյալների վերաբերյալ Տեղաբաշխման Հանձնաժողովի որոշումները կայացվել են, ինչի արդյունքում, մասնավորապես «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկից թվով 7 դատապարտյալներից 6-ի տեղափոխման հարցը մնացել է կասեցված: Միաժամանակ կասեցվել են նաև «Արթիկ» ՔԿՀ-ից «Արթիկ» և «Կոշ» ՔԿՀ միջնորդված 14-ից 3 որոշումները: Արդյունքում, 51 միջնորդություններից կատարվել է 42-ը:

Կիսաբաց տիպի ուղղիչ հիմնարկից բաց տիպի ուղղիչ հիմնարկ տեղափոխվելու վերաբերյալ կայացվել է 22 անձի վերաբերյալ որոշում, որից վերը նշված Վարչության դատախազների կողմից կասեցվել է 1 որոշում: Այս առումով, կարևոր է շեշտադրել պատիժների կատարման նկատմամբ բանտային համակարգից դուրս այլ մարմինների կողմից ստուգումների ձևով վերահսկողության գործոնը, և այս գործում Դատախազության դերը: Այդուհանդերձ, թե՛ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, և թե՛ հասարակություն վերադարձին նպաստող քրեակատարողական այլ ինստիտուտների կատարման գործընթացում, անհրաժեշտ է լինել խիստ անձակենտրոն և ցանկացած որոշում կայացնել անձի հասարակություն վերադառնալու առաջնային շահից ելնելով: Անհրաժեշտաբար, պիտի ներդրված լինեն անձի գնահատման բազմաթիվ ցուցիչների համակցությամբ գործիքներ՝ ինչպես պատիժ կատարող մարմինների, այնպես էլ դրա օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների մոտ և ամենայն մանրակրկտությամբ պետք է ուսումնասիրել անձի վարքային փոփոխություններն ու դինամիկան հատկապես անազատության պայմաններում:

⁵⁸ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության կարգը և դրա կազմը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի 14 մարտի 2012 թվականի թիվ 34-Ն Հրաման: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=64955>:

Սակայն, մոտեցումը մշտապես պիտի լինի այնպիսին, որ ՔԿՀ-ում անձն ամբողջությամբ ուղղվելու կարիք չունի՝ հատկապես ՊՎ ազատման կամ առավել մեղմ պայմաններով հիմնարկներ տեղաբաշխելու գործընթացներում: Բոլոր ոլորտային միջազգային փաստաթղթերն ու տեսակետները հանգում են այն բանին, որ անձը հնարավորինս կարճ ժամանակ պիտի մնա բանտում, որից հետո Պրոբացիայի ծառայությունները պիտի վերահսկեն (Supervision) նրա վարքը հասարակությունում:

1.3.1. Կովիդ-19 համավարակի պայմաններում պատիժ կատարող մարմինների գործունեությունը

Զեկույցի առարկա Կովիդ-19 համավարակի և ԱՀԿ կողմից հայտարարված ռիսկային տարիքի վերաբերյալ հայտարարությունների մասով, անհրաժեշտ է նշել, որ, ըստ ՀՀ ԱՆ ՔԿ Վարչության կողմից ներկայացված տվյալների, 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկներում պահվել են 65 և բարձր տարիք ունեցող թվով 9 կալանավորված անձինք և 20 դատապարտյալներ: Թեպետ պատկան կառույցների կողմից հանրային ներկայացված հաշվետվություններում և տրամադրված տեղեկատվությամբ դժվար է եզրակացնել տարիքային շեմով բարձր ռիսկային դատապարտյալների՝ ՊՎ ազատված կամ չազատված լինելու մասին, այդուհանդերձ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից գրանցվել և ներկայացվել է ռիսկային տարիքային խմբեր կամ տարիքներ, որոնք առավել վտանգավոր են այս վիճակում վարակվելու տեսակետից: Այդ տարիքային շեմը, որպես կանոն, 60-ն է⁵⁹: Այս իմաստով, հիշյալ անձանց նկատմամբ ազատագրված անձանց ալլընտրանք պատժատեսակների կիրառումը խիստ խրախուսելի է:

Հաշվի առնելով ազատությունից զրկելու և պատժից ազատելու վերաբերյալ ինստիտուտների ուսումնասիրության սույն Զեկույցի խնդիրները, ինչպես նաև ԱՀԿ կողմից Կովիդ-19 վիրուսի տարածման պատճառով համավարակ հայտարարելու ժամանակահատվածը (2020 թվականի մարտի 14), ստորև ներկայացվում է նաև ՔԿ հիմնարկներից ազատվածների թվային ցուցանիշները՝ ըստ ամիսների՝ մարտ-օգոստոս կտրվածքով: Սույն աղյուսակը, ի թիվս նախորդ ենթավերնագրում վերլուծված չափորոշիչների, դիցուք, ցույց է տալիս նաև Կովիդ-19 համավարակի ամենասուր ընթացքում ՔԿ հիմնարկներից մարդկանց ազատման տենդենցները:

Աղյուսակ 2
2020 թվականի մարտ-դեկտեմբեր ամիսների ընթացքում
ՔԿՀ-ներից ազատվածների թվային ցուցանիշներ

Ամիս	Ազատվածների թիվ
Մարտ	91 անձ
Ապրիլ	190 անձ
Մայիս	94 անձ
Հունիս	107 անձ
Հուլիս	125 անձ
Օգոստոս	77 անձ
ԸՆԴԱՄԵՆԸ	684

⁵⁹ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.who.int/westernpacific/emergencies/covid-19/information/high-risk-groups>:

Աղյուսակում ներկայացվող ազատվածների թվերը ներառում են թե՛ վերը քննարկված դատապարտյալների, և թե՛ ՔԿՀ-ներից որևէ հիմքով ազատված կալանավորված անձանց: Ավելին, այս կալանավորվածների թվերը կարող են տարվա կտրվածքով կրկնվել, որի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի չէ: Այդուհանդերձ, այս թվի մեջ են ներառված նաև 479 դատապարտյալները, ովքեր ազատվել են տարբեր հիմքերով: Արդյունքում, կարելի է ենթադրել, որ համավարակի ընթացքում ազատումների տեմպը, ընդհանուր առմամբ, մնացել է անփոփոխ: Այստեղ առավել խորը հետազոտության կարիք կա՝ հատկապես նախաքննական մարմինների կողմից կալանավորում խափանման միջոցների փոփոխության, դատարանների կողմից այս անձանց արդարացումների կամ այլ հիմքով նրանց հասարակությունում թողնելու գործոնների համադրման և վերլուծության ուղղություններով:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն⁶⁰՝ Քրեակատարողական հիմնարկներում իրավիճակը վերահսկելի է, նոր կորոնավիրուսային վարակի դեմ պայքարի շրջանակներում կանխարգելիչ միջոցառումները շարունակվում են, ինչպես օրինակ.

1) Դեռևս 2020 թվականի ապրիլի 3-ին ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ինչպես նաև հայտնաբերման դեպքում անհրաժեշտ միջոցառումների» պլան, որը 2020 թվականի ապրիլի 3-ին թիվ Ե-40/4-1689 ուղեկցական գրությամբ ուղարկվել է քրեակատարողական հիմնարկների ղեկավարներին:

2) «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների ղեկավարներին հանձնարարվել է առավելագույնս սահմանափակել քրեակատարողական հիմնարկներում գտնվող հիվանդների տեղափոխումը քաղաքացիական բժշկական հաստատություններ՝ այն իրականացնելով միայն անհետաձգելի սուր պաթոլոգիաների և հիվանդի կյանքին սպառնացող վտանգի դեպքերում:

3) ՔԿ հիմնարկներին տրամադրվել է Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) կողմից ընդունված և հրապարակված «Կորոնավիրուսային հիվանդության համատեքստում ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերաբերմունքին առնչվող հրատապ սկզբունքները» (հայերեն թարգմանությամբ), ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներին են տրամադրվել Հայաստանում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից տարբեր լեզուներով թարգմանված կորոնավիրուսի կանխարգելման և վարակից պաշտպանվելու վերաբերյալ տեղեկագրեր, որոնք փակցվել են անազատության մեջ պահվող անձանց հասանելի վայրերում:

4) Քրեակատարողական հիմնարկներում նոր կորոնավիրուսային վարակի ախտանշաններ ունեցող ազատությունից զրկված անձանց մեկուսացման համար առանձնացվել են առնվազն 1-ական խցեր: Բացի այդ, երկարաձգվել է կարանտինային բաժնում պահելու օրերի թիվը՝ 7-ից դառնալով 14 (հիվանդացության նշանների բացահայտման հնարավոր օրերի թվով):

5) Ի լրումն վերոգրյալի՝ հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու նպատակով բժշկական

⁶⁰ ՀՀ Արդարադատության նախարարության քարտուղարության 27 հունվարի 2021թ. թիվ 06/12.0.03/1656 գրությունը:

ստորաբաժանումներին են տրամադրվել նաև էլեկտրոնային հեռահար և սնդիկով ջերմաչափեր: Ստորև ներկայացվում է համապատասխան ցանկը.


Աղյուսակ 3


Քրեակատարողական հիմնարկի անվանում	Էլեկտրոնային ջերմաչափ	Սնդիկով ջերմաչափ
1. «Աբովյան»	2	-
2. «Արմավիր»	1	15
3. «Արթիկ»	1	7
4. «Դատապարտյալների հիվանդանոց»	3	19
5. «Երևան-Կենտրոն»	1	-
6. «Գորիս»	1	-
7. «Հրազդան»	1	5
8. «Նուբարաշեն»	2	13
9. «Վանաձոր»	1	5
10. «Վարդաշեն»	2	-
11. «Կոշ»	1	5
12. «Սևան»	1	-

Միննույն ժամանակ, ՀՀ ԱՆ Քրեակատարողական վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի ապրիլ-դեկտեմբեր ամիսների ընթացքում 12 ՔԿ հիմնարկներում կորոնավիրուսով վարակվել են 226 աշխատակիցներ: Նույն ժամանակահատվածում ՔԿ հիմնարկներում պահվող ազատազրկվածներից (ներառյալ դատապարտյալներն ու կալանավորված անձինք) վարակվել են թվով 39-ը: Ըստ այդ տեղեկատվության՝ ՀՀ ԱՆ 7 ՔԿ հիմնարկներում ընդհանրապես որևէ ազատազրկված չի վարակվել («Նուբարաշեն», «Վանաձոր», «Երևան-Կենտրոն», «Գորիս», «Արթիկ», «Աբովյան» և «Արմավիր»), ինչը և՛ զարմանալի է, և՛ ոգևորիչ (հատկապես «Արմավիր» ՔԿ հիմնարկի պարագայում):

Գծապատկեր 34

Կովիդ-19-ով վարակված աշխատակիցների բաշխումն՝ ըստ ՔԿ հիմնարկների





1.3.2. Եզրահանգումներ և առաջարկություններ

Ընդհանուր առմամբ, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, անձին դեպի հասարակություն վերադարձին նախապատրաստելու գործընթացների վերաբերյալ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

1) Նախ, ըստ էության, Կովիդ-19 համավարակով պայմանավորված առանձնահատուկ փոփոխություններ այս համակարգում չեն կատարվել: Դատարանները քննել են նույնական քանակի գործեր, կայացրել որոշումներ, ՔԿ հիմնարկներն ու Պրոբացիայի տարածքային ստորաբաժանումները կատարել են ՊՎ ազատման համար անհրաժեշտ գործողություններ և այլն: Առնվազն ԴԱՏԱԼԵՔՍ համակարգով, ՊՎ ազատման վերաբերյալ որոշումները (երկրորդային) չեն պարունակել համավարակի հիմնավոր պատճառ կամ հենք:

2) Ի տարբերություն 2019 թվականի՝ 2020 թվականին առավել բարձրացել են ՊՎ ազատման վերաբերյալ միջնորդությունների մերժումների ցուցանիշները ՀՀ առաջին առյանի դատարաններում:

3) Առավել հատկանշական ու խնդրահարույց է, որ դատապարտյալների հետ տարիներ շարունակ աշխատած ՔԿ հիմնարկները կամ առնվազն ՊՎ ազատման միջնորդությանը նախորդող 80 օրվա ընթացքում մանրամասն ուսումնասիրություն կատարած Պրոբացիայի ծառայությունը բացասական զեկույցներ է կազմել 80-85%-ով:

4) Չնայած տարիների ընթացքում ՀՀ ՊՎ ազատման համակարգերի փոփոխությունների՝ այդուհանդերձ, դեռևս խնդրահարույց են մնում բազմաթիվ հարցեր՝ կապված անձի ռիսկայնությունը գնահատող գործիքակազմի, բալային համակարգի և այլ գործընթացների հետ:

5) Վերլուծությունները վկայում են, որ անհրաժեշտ է օրենսդրորեն և գործնականում (ընդհուպ կիրառվող գործիքակազմի մակարդակում) առանձնացնել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման (ՊՎԱ) և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտները⁶¹: Թեև երկու ինստիտուտն էլ նպաստում է դատապարտյալի՝ հասարակությանն ու ազատությանն առավել

⁶¹ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածը վերագրված և դիսպոզիցիան նախատեսում է հենց նույնական մոտեցում:

մոտենալուն, այդուհանդերձ, դրանք ենթադրում են անձի անվտանգության, հասարակությունում կրկին հանցանք գործելու հավանականության ու հասարակությունում վերափնտեզրվելու երաշխիքների տարբեր աստիճաններ: Ուստի նպատակահարմար է, որ տարբեր լինեն նաև մոտեցումները նրան գնահատելիս՝ հատկապես ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրողների առումով անձինք, ովքեր այս կամ այն հիմքով գնահատվել են որպես վտանգավորներ լայն հասարակության համար, դեռևս չի նշանակում նույնական գնահատական այլ ՔԿՀ կամ ՔԿՀ-ի այլ մասնաշենք տեղափոխվելու համար: Այս առումով, անհրաժեշտ է շեշտակի փոփոխություն կատարել Քրեակատարողական օրենսգրքում և ոլորտի բոլոր ինստիտուտների կիրարկումն (այդ թվում՝ ՊՎԱ, տեղաբաշխման կարգ, կարճաժամկետ մեկնումներ և այլն) ապահովել ոչ թե հանցանքի ծանրության աստիճանի, այլ անձի՝ նրա վարքի դինամիկայի և հասարակությունում հնարավոր վտանգավորության աստիճանի հենքով:

6) Պրոբացիայի ծառայությունները նպաստում են հանրային անվտանգությանն ու պատշաճ արդարադատությանը⁶²: Ուստի, զեկույցի, հաշվետվությունների և այլ տեղեկատվության տրամադրմամբ «ծառայություն է մատուցվում» հատկապես որոշում կայացնողներին (նախաքննության փուլում՝ դատախազներին և/կամ դատավորներին, դատական քննության փուլում՝ դատավորներին): Դիցուք՝ ՊՎԱ հարցում, Պրոբացիայի ծառայությունը զեկույց է տրամադրում դատարանին՝ աջակցելով առավել անաչառ ու անկողմնակալ որոշում կայացնելու հարցում: Ուստի հենց դատարանի կողմից և ուղիղ Պրոբացիայի ծառայությունից է պահանջվում զեկույց, այլ ոչ թե ազատազրկման ձևով պատիժ կատարող հիմնարկից կամ այլ իրավասու մարմնից:

7) Պրոբացիայի ծառայությունը խորհրդատվական, մասնագիտական կարծիք հայտնող մարմին է, որն արտահայտվում է ըստ դատարանի ցանկության ու պահանջի՝⁶³ որոշում կայացնող մարմնին զեկույց տրամադրելով: Այն անհրաժեշտ է լինում, երբ դատարանը ՊՎԱ մասին որոշում պիտի կայացնի որոշակի «բարդ դեպքերում» (կախված անձից, ՔԿ հիմնարկում իրականացված աշխատանքների արդյունավետության գնահատումից, պատժի չկրած մասի տևողությունից և այլն): Ուստի թե՛ բովանդակային, իմաստային և թե՛ ֆինանսական ծախսատարության առումով (տրանսպորտ, աշխատավարձ, թուղթ, անձնական գործեր և այլն), նպատակահարմար չէ, որպեսզի Պրոբացիայի ծառայությունը պարտադիր կարգով կազմի զեկույցներ՝ ազատման նախապատրաստվող բոլոր դատապարտյալների վերաբերյալ, առավել ևս նրանց համար, ում պատժի լրիվ կրմանը մնացել են հաշված ամիսներ:

8) Թե՛ ՔԿ հիմնարկի և թե՛ Պրոբացիայի ծառայության կողմից կազմվող զեկույցները «դրական» ու «բացասական» լինելու փոխարեն, խիստ անձակենտրոն ուսումնասիրություններ են և դեպքից դեպք խիստ տարբեր են: ՔԿ հիմնարկների դեպքում այդ զեկույցները վերաբերվում են դատապարտյալի վարքի դինամիկային (ՔԿՀ մուտք գործելու կամ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչ ՊՎԱ ներկայացման պահը), թե վարքն ու այլ հանգամանքներ ինչպես են փոփոխվել պատժի կրման ողջ ընթացքում: Իսկ Պրոբացիայի պարագայում այդ զեկույցները վերաբերվում են լոկ երկկողմանի պատասխանատվությունների. մի կողմից դատապարտյալի պատասխանատվություն, որ համաձայն է պրոբացիոն ծառայողի կողմից առաջարկված պայման-պարտականությունների կատարմանը հասարակությունում և Պրոբացիայի պատասխանատվություն, որ կան հստակ երաշխիքներ անձի վարքը վերահսկելու և նրա սոցիալական վերականգնման համար⁶⁴: Վերջին երաշխիքները շատ անձակենտրոն են, և

⁶² Եվրոպական պրոբացիոն կանոններ (2010/1), հիմնական սկզբունք 1:

⁶³ Եվրոպական պրոբացիոն կանոններ (2010/1), հիմնական սկզբունք 11:

⁶⁴ Եվրոպական պրոբացիոն կանոններ (2010/1), Կանոններ 59-63:

եթե մեկ անձի մոտ, օրինակ, «կրթությունը» կամ «ընտանեկան հարաբերությունների կարգավորումը» խիստ պարտադիր ու առաջնային կարող է դիտարկվել, մյուս դեպքում՝ «կրթության» բացակայությունը կարող է երկրորդային և ոչ այնքան կարևոր լինել սոցիալական վերականգնման տեսակետից: Վերջնական որոշումը կայացնում է դատարանը՝ հենվելով հենց այն վերլուծության վրա, որ կատարվել է Ձեկույցում: Ուստի չափազանց կարևոր է, որ զեկույցները չլինեն որևէ մարմնի կողմից նախապես գնահատված «դրական» կամ «բացասական»:

9) Պրակտիկան և ներկայացված հաշվետվությունների վերլուծությունը վկայում են, որ հատկապես պատիժ կատարող մարմինների դիրքորոշումը «ուղղման» վերաբերյալ, որոշակի փոփոխությունների կարիք ունի: Այն, որպես կանոն, պատիժ կատարող՝ հատկապես ՔԿ հիմնարկների կողմից, դիտարկվում է որպես վերջնարդյունք, ավելին, այդ վերջնարդյունքին պիտի հասնել հենց ազատագրկման ընթացքում: Հաճախ նաև սա կարող է պատճառ հանդիսանալ այն պրակտիկայի, որ հենց իրենց կողմից տարիներ շարունակ վերահսկված դատապարտյալների զեկույցների 80%-ից ավելին բացասական են: Իրականում, անձի ուղղումը տևական պրոցես է, և այն չի կարող և չպետք է ավարտվի հենց ՔԿ հիմնարկում, այլապես իմաստագրվում է հասարակությունում նրանց նկատմամբ ծավալուն վերասոցիալականացման ծրագրերը, որ իրականացվում է Պրոբացիայի ծառայության կողմից: Այս իմաստով, անհրաժեշտ է նաև փոփոխություն կատարել գործող Քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածում՝ ուղղումը դիտարկելով որպես գործընթաց և ո՛չ վերջնարդյունք:

10) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասում ՊՎ ազատման համաձայնության վերաբերյալ դիմումով դատապարտյալի պատճառաբանության իրավունքն անհասկանալի է՝ առնվազն պրակտիկ գործածության տեսակետից: Առավել կարևոր ու, պետության պատասխանատվության տեսակետից, կիրառելի է հատկապես ՊՎ ազատման մեթոման պատճառների բացահայտումը:

11) Նույն 115-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսվում է դատապարտյալի դիմումը ստանալուց հետո ծանուցել ՀՀ ԱՆ ՔԿ Վարչություն, ինչը նոր օղակ է ավելացնում ՊՎԱ գործընթացում, պարզ չէ, ստանալուց հետո Վարչության արձագանքի հնարավոր ձևերը և ՔԿ հիմնարկների հետագա գործողությունները և այլն: Սույն կարգավորումը և հավելյալ մարմնի ավելացումը գործնականում կարող է խիստ աննպատակահարմար, անարդյունավետ ու ծախսատար լինել՝ հաշվի առնելով առնվազն հետևյալ հանգամանքները.

ա) ՔԿ վարչության Կանոնադրությամբ սահմանված վերահսկողության գործառույթներն⁶⁵ ուղղակիորեն չեն ենթադրում Վարչության բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ՔԿ հիմնարկներում պահվող բոլոր դատապարտյալների մասին իրազեկվածություն (առնվազն՝ անվտանգության ապահովման, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման բաժիններ): Ուստի, հարյուրավոր գործերի թղթային տարբերակով վերանայումը չի կարող հանգեցնել արդյունավետ աշխատանքի:

բ) Վարչության վերը նշված ստորաբաժանումների աշխատակիցների թվաքանակը և նրանց գործառնական ծանրաբեռնվածությունը չի կարող բավարարել նման ծավալի աշխատանքն իրագործելու համար, եթե հաշվի առնենք նաև այն հազամանքը, որ ՊՎԱ ինստիտուտի 2006թվականից առ այսօր կատարված փոփոխությունների արդյունքում,

⁶⁵ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 1256-Ն Որոշում, առ 24 օգոստոսի 2006թ., 2-րդ գլուխ:

բացառությամբ Աբովյան և Գորիս ՔԿ հիմնարկների, բոլոր ՔԿ հիմնարկները Վարչություն են ներկայացնելու հարյուրավոր գործեր:

գ) Նույն անձի վերաբերյալ կազմված նման քանակությամբ թղթատարությունը, հնարավոր տրանսպորտային, փոստային ու այլ ծախսերը չեն կարող արդյունավետ համարվել:

12) Ավելին, անհրաժեշտության դեպքում, Պրոբացիայի ծառայությանը ծանուցելիս, անհրաժեշտ է տրամադրել ճիշտ այն փաստաթղթերը, որոնք նախատեսված են ՔԿ վարչություն ներկայացնելու համար, որպեսզի ՔԿՀ մուտք գործելուց առաջ արդեն, պրոբացիայի աշխատակիցը նախապես պատկերացնի, թե ում հետ պիտի հանդիպի:

13) Նույն տեղում 4-րդ մասի առաջին պարբերությունում նախատեսված կարգավորումը ներմուծում է «պարտադիր զեկույցների» պահանջ բոլոր դատապարտյալների վերաբերյալ, ինչը ոչ միայն չի բխում ԵՄ նախարարների կոմիտեի թիվ 2010/1 Պրոբացիոն կանոններից, այլև հղի է անարդյունավետության վտանգով: Անարդյունավետ է հնարավոր սակավաթիվ օրեր կամ ամիսներ վերահսկողության տակ գտնվելու ենթակա անձի համար ծախսել 80 օր, մարդկային, տեխնիկական ու ֆինանսական միջոցներ և այլն:

14) Նույն հոդվածի 10-րդ մասի կարգավորումը ենթադրում է զեկույցների «հավաքը» ՔԿ հիմնարկում, ավելին՝ ՔԿ հիմնարկի կողմից գնահատում, թե արդյոք տվյալ զեկույցը «դրական» է կամ «բացասական», որպեսզի հետո կայացնի որոշում՝ գործը դատարան ներկայացնելու կամ չներկայացնելու մասին: Սույն կարգավորմամբ խախտվում է Պրոբացիայի ծառայության իմաստն ու առաքելությունը՝ աջակցել որոշում կայացնողներին (ո՛չ պատիժ կատարող մարմնին) առավել անաչառ ու արդյունավետ լինելու հարցում: Բացի վերը բերված իրավական ու բովանդակային անհամապատասխանությունից, իմաստային թյուրընկալումներից, այս կարգավորումը հղի է նաև այլ վտանգներով: Դիցուք՝ մեծ վտանգ կա, որ Պրոբացիայի ծառայությունը «բանտին» այլընտրանք լինելու փոխարեն, կդիտարկվի միևնույն «ուժային, պատժողական» կառույցի մաս, ինչը մեծապես խոչընդոտելու է Պրոբացիայի մասին հասարակական ճիշտ ընկալմանը՝ սրանից բխող հետևանքներով: Այս առումով, բարդանալու է նաև վաղաժամկետ ազատվածի ու պրոբացիոն աշխատակցի միջև կոնտակտի հաստատումը, հարգանքը, փոխադարձ վստահությունը, ինչը ոչ միայն ԵՄ 2010/1 Կանոնների մոտեցումն է⁶⁶, այլև արդյունավետ աշխատանքի երաշխիք:

15) Այս իմաստով, 115-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերն ամրագրում են նաև ՔԿ հիմնարկի և Պրոբացիայի ծառայության կողմից ներկայացվող զեկույցների գնահատում «դրական» և «բացասական»: Բացի այն, որ զեկույցները չեն լինում «դրական» կամ «բացասական», ավելին՝ ՔԿ հիմնարկը լիազորված չէ (և չի կարող լինել) գնահատել մեկ այլ մասնագիտացված կառույցի կողմից տրված զեկույցը: Մեծ վտանգ կա լիազորությունների չարաշահման կամ, որ ՔԿ հիմնարկը չի կարողանա ստույգ գնահատել դրական է զեկույցը, թե՛ բացասական, ինչի արդյունքում կարող են խախտվել հենց ՔԿ հիմնարկի հսկողությամբ պահվող դատապարտյալների իրավունքները: Հիշյալ երկու կառույցներն իրենց բովանդակությամբ, առանձնահատկություններով, գործառնություններով ու փիլիսոփայությամբ խիստ տարբեր են, և հարկ չկա նրանց հավասարակշռել կամ հակակշռել:

16) 115-րդ հոդվածի 8-րդ մասը նախատեսում է, որ ՊՎԱ հարցը դատարան չուղարկելու մասին ՔԿ հիմնարկի որոշումը կարող է դատապարտյալի կողմից բողոքարկվել դատական կարգով: Սույն կարգավորումը, որքան էլ միտված է

⁶⁶ Եվրոպական պրոբացիոն կանոններ (2010/1), Կանոն 21, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16, Կանոն 16-21

դատապարտյալի իրավունքներին, այդուհանդերձ, այն կրում է տեսական ու ֆորմալ բնույթ: Անգամ մեծ ցանկության դեպքում, դատարանը չի կարող, օրինակ, բավարարել այդ բողոքը, որովհետև երկու «բացասական» զեկույցի պարագայում, հիմնարկը այլ բան չէր էլ կարող անել, քան ընդունել չներկայացնելու մասին որոշում: Այստեղ չի քննարկվում նման որոշման հանգելու համար հիմք հանդիսացած զեկույցների բովանդակությունը, այլ գուտ որոշումը՝ որպես առանձին անհատական ակտ: Ուստի անհրաժեշտ է տեքստի բովանդակությունից հանել «Որոշումը կարող է բողոքարկվել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան որոշումն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:» բառերը կամ հստակեցնել բողոքարկման արդյունքում դատաքննության առարկան:

17) Նույն հոդվածի 9-րդ մասը նախատեսում է ևս մեկ կառույցի՝ Դատախազության դերակատարությունը ՊՎԱ գործընթացում՝ այսպիսով այս գործընթացը վերածելով բազմօղակ շղթայի (ՔԿՀ-Պրոբացիա-Վարչություն-Դատախազություն-Նախարարություն-Դատարան), բյուրոկրատական, թղթատարությամբ հագեցած ու անվերջանալի թվացող շրջափուլի: Արդյունքում բազմաթիվ խնդիրների առջև են կանգնելու դատապարտյալի հետ անմիջական աշխատող ՔԿ հիմնարկը, Պրոբացիոն աշխատակիցը և հենց դատապարտյալը (առնվազն՝ փոստատարության կամ ծավալուն վարչարարության պատճառով վաղաժամկետ ազատման օրը ուշացնելու և նոր վերահաշվարկների կարիքի պատճառով): Ավելին, չի կարգավորված, թե քանի օրում է դատախազը կամ տեղակալը իրավունքների խախտման դեպքում միջնորդություն ներկայացնում, չի նշված նաև, թե Նախարարը քանի օրում է քննության առնում ու պատասխանում, ինչը կարող է հանգեցնել բազմաթիվ խնդիրների:

18) Նույն հոդվածի 10-րդ մասում անհրաժեշտ է դատարան ներկայացվող փաստաթղթերում առկա անձնական գործից քաղվածքը փոխարինել բուն անձնական գործով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանին անհրաժեշտ կլինեն ուսումնասիրել զեկույցներում վերլուծված տվյալների առկայությունը, դրանց հիմքերը և այլն: Չի բացառվում, որ, օրինակ, բջջային հեռախոս պահելու հիմքով տարբեր անգամներ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը դատարանը գնահատի ոչ վտանգավոր, թեև զեկույցներում այս խնդիրը կարող էր և այլ կերպ գնահատված լինել:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱԶՍՏԱԶՐԿՄԱՆ ԵՎ ԱԶՍՏԱԶՐԿՈՒՄ ՉԵՆԹԱԴՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾԱԽՍԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ⁶⁷

1.1. Ազատագրկման և Պրոբացիայի ծախսային տարբերություններն ու ազատագրկման հետ չկապված միջոցների արդյունավետությունը

Սույն հետազոտության կազմման համար անհրաժեշտ և հետազոտությունում տեղ գտած տեղեկատվությունն ու վերլուծությունն իրականացվել են հիմնականում հետևյալ աղբյուրներից և մեթոդաբանությամբ.

1.1. վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն⁶⁸, ներառյալ՝ կալանավորվածների և դատապարտյալների թվաքանակ, տվյալ տարվա ընթացքում ՔԿՀ-ներ մուտք գործած կալանավորված անձինք, պատժից պայմանական վաղաժամկետ և այլ հիմքերով ազատված անձինք, Պրոբացիայի ծառայությունում պատիժ կրողների, պատիժը հետաձգվածների և պատիժը պայմանականորեն չկիրառվածների նկատմամբ նշանակված վերահսկողությունների թիվ և այլ տեղեկատվություն, որ ներկայացվում է սույն հետազոտությունում.

1.2. ոլորտի իրավական ակտերի և/կամ դրանց նախագծերի, ոլորտի քաղաքականության վերաբերյալ նյութերի, հայեցակարգերի ուսումնասիրություն և վերլուծություն⁶⁹.

1.3. ոլորտի վերաբերյալ միջազգային փորձի և ՀՀ-ում միջազգային կառույցների կողմից ոլորտում իրականացված հետազոտությունների ուսումնասիրություն⁷⁰:

Հայաստանի Հանրապետությունում Ազատագրկմանն այլընտրանքային միջոցների (Պրոբացիայի ծառայության) խթանման համար անհրաժեշտ ֆինանսական արդյունավետությունը գնահատելու նպատակով անհրաժեշտ է պարզել նվազագույնը հետևյալ հարցերը.

ա) ինչպիսի ծախսային ընդհանուր նկարագիր ունի ներկայիս քրեակատարողական համակարգը՝ անձին ազատագրկման կարգավիճակում պահելիս.

բ) ինչպիսի լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ կպահանջի մեր երկրում Պրոբացիայի ծառայության արդյունավետության զարգացումը և

գ) ազատագրկումները նվազեցնելու և հասարակությունում վերահսկողական միջոցները զարգացնելու արդյունքում ինչպիսի ֆինանսական տնտեսումներ կարող են ակնկալվել:

⁶⁷ Ձեկույցի սույն բաժնում ներկայացված են հիմնականում ՔԿ և Պրոբացիայի ծառայության ֆինանսական հիմնական ցուցիչներն ու հնարավոր ֆինանսական խնայողությունները: Պրոբացիայի զարգացման հնարավոր ծախսարդյունավետության ու սոցիալական ազդեցության վերաբերյալ առավել մանրամասն հետազոտությունը տե՛ս անգլերեն տարբերակը՝ <https://rm.coe.int/0900016800ccb58>

⁶⁸ Վիճակագրական տվյալները ստացվել են ՀՀ ոստիկանությունից, ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայք-էջից, ինչպես նաև ՀՀ ԱՆ ՔԿ վարչությունից:

⁶⁹ Ձեկույցում ներկայացված հաշվարկները և վերլուծությունները հիմնված են նաև «Պրոբացիայի մասին» ՀՀ Օրենքից բխող խնդիրների և Պրոբացիայի նպատակների վերլուծության վրա

⁷⁰ CoE, “Reducing the use of custodial measures and sentences in the Republic of Armenia: Assessment report (Iuliana Carbutaru and Gerard de Jonge)” Yerevan, 2013, OSCE/”Social Justice NGO” “Creating a probation service in the republic of armenia: issues and peculiarities”, Yerevan, 2012, EU Advisory Group “Policy Paper” PSRA, Yerevan, 2011:

Սակայն, մինչև Պրոբացիայի ծառայության ներդրումներին և/կամ խնայողություններին անդրադառնալը, ստորև ներկայացվում են որոշ տվյալներ՝ նաև ներկայումս ազատազրկման ձևով խափանման միջոցների և պատիժների կատարման համար, առկա ֆինանսական ծախսերի վերաբերյալ: Մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պրոբացիայի ծառայությունն ըստ էության այլընտրանք է քրեակատարողական ծառայությանը՝ որպես ազատազրկմանն այլընտրանք ինստիտուտ, մեր կողմից ուսումնասիրվել են մեր երկրում կալանավորված անձանց և դատապարտյալների վրա պետության կողմից ծախսվող գումարները 2019-2020 թվականների կտրվածքով⁷¹:

Այսպես, ըստ ՀՀ ԱՆ ՔԿ վարչության կողմից տրամադրված տեղեկատվության, ՀՀ ԱՆ 12 ՔԿ հիմնարկներում 2019 թվականին պահվել են միջինը 2338 մարդ, իսկ 2020 թվականին՝ 2119 ազատազրկվածներ, որոնցից միջինը մոտ 1000 կալանավորված անձինք (ըստ տարիների և ամիսների, ինչպես նաև ըստ անձանց կարգավիճակի առավել ընդարձակ տեղեկատվությունը տես ՔԿՎ 12.02.2021 թիվ Ե-40/7-1-471 և 25.01.2021 թվականի թիվ Ե-40/11-218 գրությունները):

Այս թվերի կրճատման վրա⁷² մեծապես ազդեցություն է ունեցել դեռևս 2018 թվականին հայտարարված աննախադեպ համաներումը: Մասնավորապես, ՀՀ Գլխավոր դատախազության՝ 15.02.2019թ. օրվա դրությամբ ամփոփումով, ընդհանուր առմամբ համաներման մասին օրենքը տարածվել և կիրառվել է 4601 անձանց նկատմամբ, որից 621-ը փաստացի ազատվել է ՔԿՀ-ներում ազատազրկման ձևով պատիժը կրելուց, իսկ 1564 մեղադրյալներ, ամբաստանյալներ ազատվել են քրեական պատասխանատվությունից (նրանց նկատմամբ դադարեցվել է հարուցված քրեական հետապնդումը) կամ դատարանի կողմից նշանակված պատժի կրումից⁷³: Այսինքն, մոտ 2200 հոգի հենց բանտային համակարգից ազատ են արձակվել: Իսկ 2019 թվականի հոկտեմբերի 31-ի դրությամբ, միայն Պրոբացիայի շահառուներից 2833-ի նկատմամբ կիրառվել է համաներում⁷⁴:

Ինչ վերաբերվում է ֆինանսական հատկացումներին, ապա 2019թ. ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությանը հատկացվել է 10254899.2⁷⁵, 2020 թվականին՝ 10870154.8⁷⁶ իսկ արդեն 2021 թվականի համար ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության համար նախատեսվել է 12,387,473.8 բյուջետային հատկացում⁷⁷:

⁷¹ Ներկայացվող տեղեկատվությունն ու տվյալները տրամադրվել են ՀՀ ԱՆ ՔԿ վարչության կողմից, որոնք «կլորացված» և/կամ միջինացված են՝ հետազոտությանն առավել ամբողջական տեսք տալու և ուղղակի ընդհանուր պատկերացում ձևավորելու համար: Ոլորտի ծախսային գնահատականը, հատկապես առավել մանրակրկիտ և խիստ ճշգրիտ հաշվարկները պահանջում են առավել լայնածավալ և երկարաժամկետ մոտեցում:

⁷² Համեմատությամբ 2012-2017 թվականներին ՔԿՀ-ներում պատիժ կրողների և կալանավորված անձանց թվաքանակի, երբ թվաքանակը տատանվում էր 3500-4700-ի միջև՝ <https://www.penitentiary.am>, <https://court.am/hy/statistic>:

⁷³ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.prosecutor.am/am/mo/7415/>:


⁷⁴ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://probation.am/hy/amenesty>:

⁷⁵ ՀՀ օրենքը 2019 թվականի «Պետական բյուջեի մասին»՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=139475>:

⁷⁶ «2020 թվականի Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150329>:

⁷⁷ «2021 թվականի Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150538>:

Գծապատկեր 36
2019-2021 թվականներին ՔԿ ծառայության
բյուջետային հատկացումներ



Ինչպես տեսնում ենք, 2021 թվականին 2019-ի համեմատ գրեթե երկու, իսկ 2020-ի համեմատ մոտ 1,5 միլիարդ դրամով ավելացել է ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության բյուջեն: Ավելին, ՔԿ Վարչության կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2019 թվականին միջինը 2345 աշխատակիցների տարեկան աշխատավարձային ֆոնդը կազմել է 6073445900 (վեց միլիարդ յոթանասուներեք միլիոն չորս հարյուր քառասունհինգ հազար ինն հարյուր) ՀՀ դրամ կամ Բյուջեից ողջ հատկացման 59,2%-ը: Իսկ արդեն 2020 թվականին նույն ֆոնդը կազմել է 7226395200 (յոթ միլիարդ երկու հարյուր քսանվեց միլիոն երեք հարյուր ինսունհինգ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ կամ ողջ բյուջետային հատկացման 66,4%-ը: Ասել է թե, քրեակատարողական ծառայություններ մատուցելու համար նախատեսված գումարի մեծ մասը հատկացվում է զուտ որպես աշխատավարձ և բյուջետային հատկացումներից միայն մոտ 1,121,00 (մեկ միլիարդ հարյուր քսանմեկ միլիոն) ՀՀ դրամն է հատկացվում ազատազրկվածների ուղղակի ծախսերին: Հարցն առավել է սրվում, հատկապես այն պարագայում, երբ բոլոր 12 ՔԿ հիմնարկներում և Վարչությունում աշխատող անձնակազմի և ազատազրկվածների հարաբերակցությունն արդեն երկու տարի և ավելի ժամանակահատվածի կտրվածքով 1:1 է, իսկ որոշ դեպքերում, նույնիսկ աշխատակիցների թվաքանակը գերակշռում է:

Մեկ ազատազրկվածի⁷⁸ պահման ուղղակի ծախսը ներառում է հատկապես՝ սնունդ, հագուստ (բացառությամբ կալանավորված անձանց, ովքեր, օրենքով սահմանված կարգով կարող են կրել իրենց ամենօրյա հագուստը), անկողնային պարագաներ, սանիտարահիգիենիկ պարագաներ, դեղորայք և կոմունալ ու էլեկտրաէներգիայի ծախսեր:

Ըստ վերոնշյալ ուղղությունների՝ մեկ դատապարտյալի տարեկան ուղղակի ծախսը կազմում է (հազար ՀՀ դրամ).

⁷⁸ Խոսքը գնում է հատկապես դատապարտյալների մասին, քանի որ, կալանավորված անձանց պարագայում, տարբերությունը կայանում է միայն հագուստի ծախսում, ովքեր իրավունք ունեն կրել իրենց կենցաղային հագուստը:

Աղյուսակ 4
2019-2020 թվականների դատապարտյալների
ուղղակի ծախսի համեմատականը

Անուն	2019 (2338 ազատազրկվածներ)			2020 (2119 ազատազրկվածներ)		
	Հատկացում (հազ.դրամ)	Տարեկան միջին ծախս	Օրական միջին ծախս	Հատկացում (հազ.դրամ)	Տարեկան միջին ծախս	Օրական միջին ծախս
Մնունդ	448506890	191834	526	1005327336	474435	1300
Հագուստ	98196000	42000	115	90523680	42720	117
Անկողնային պարագաներ	39839520	17040	47	36616320	17280	47
Սանիտ. հիգիենիկ պարագաներ	38717280	16560	45	35344920	16680	46
Փոստային ծառայութ.	4432299	1896	5	3389472	1600	4
Կոմունալ-էներգետիկ	808995549	346020	948	799784637	377435	1034
Դեղորայք	---- ⁷⁹			150000000	70788	194
ԸՆԴԱՄԵՆԸ	1438687538	3941610	1686	2120986365	1000937	2742

Աղյուսակում ներկայացված են միայն ուղղակի ծախսերը: Ինչպես կարելի է նկատել աղյուսակի թվային տվյալների ցուցանիշների համեմատությունից, ի համեմատ 2019-ի, մոտ 700 միլիոն ՀՀ դրամով 2020 թվականին ավելացել է ուղղակի ծախսերի տողը, իսկ մոտ 1000 ՀՀ դրամով կամ 50%-ով ավելացել է օրական միջին ծախսը, այն դեպքում երբ տարեկան կտրվածով ազատազրկվածների միջին բնակեցվածությունը նվազել է մոտ 220 հոգով: Անփոփոխ երկու տարիների ընթացքում ծախսերի առյուծի բաժինը հատկացվում է սննդին, հագուստին, սանիտարահիգիենիկ պարագաներին և կոմունալ, էլեկտրաէներգիայի ծախսերին:

Ելնելով առկա վերլուծությունից՝ մեկ ազատազրկվածի օրական միջին ծախսը կազմում է միջինը մոտ 2742 ՀՀ դրամ ($2120986365/2119/365 = 2742$): Եթե հաշվի առնենք նաև ոչ ուղղակի ծախսերը, ինչպես օրինակ՝ աշխատավարձային ծախսը⁸⁰ և 2019-2020 թվականների ընթացքում իրականացված շինարարական-վերանորոգման աշխատանքները, ազատազրկվածների ծախսը 2019 թվականին կազմել է միջինը մոտ 9353, իսկ 2020-ին՝ միջինը մոտ 12224 ՀՀ դրամ:

Մեկ այլ գործոն է նաև ազատազրկման դատապարտվածների կողմից կատարված արարքների ծանրության աստիճանի վերլուծությունը (ընդհանուր պատժողականության մասին խոսվել է սույն Զեկույցի առաջին բաժնում): Ուսումնասիրությունները վկայում են, որ 2018-2020 թվականներին ազատազրկման ձևով պատժի դատապարտվածների 82%-ի պատժաչափը չի գերազանցում 5 տարին: Այսպես, 2018 թվականին ազատազրկման և կալանքի ձևով պատժատեսակների են դատապատվել 1289 անձինք, որոնցից 1072-ը կամ

⁷⁹ 2019 թվականի համար դեղորայքի ծախսը ճշգրտման կարիք ունի:

⁸⁰ Առանց վերապատրաստումների ծախսի, որ 2020 թվականին տարեկան կտրվածքով կազմում է ավելի քան 600,000,000 (վեց հարյու միլիոն) ՀՀ դրամ՝

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=150329> Հավելված 1, Աղյուսակ 2:

ազատագրված ձևով պատժվածների 83% -ը դատապարտվել են 1-5 տարի ժամկետով ազատագրված⁸¹: Նմանապես, 2019 թվականին 1094 ազատագրված ձևով պատժվածներից 898-ը կամ 82%-ը կազմել են մինչև 5 տարի ազատագրվածները⁸², իսկ 2020-ին ազատագրված ձևով պատժի ենթարկված 1069-ից 873-ը կամ կրկին 82%-ը կազմել են մինչև 5 տարի ազատագրվածները⁸³:

Հետևաբար, քրեական քաղաքականության փոփոխման, առնվազն մինչև 5 տարի պատժաչափով փաստացի ազատագրված դատապարտվածների՝ ՔԿՀ-ներից թվաքանակի նվազման արդյունքում կարող է առաջանալ նաև բանտային համակարգի (հատկապես ՔԿ հիմնարկների) ամբողջական կամ մասնակի վերակազմավորման անհրաժեշտություն, որն իր հետ կարող է տնտեսում առաջացնել նաև քրեակատարողական հիմնարկների և աշխատակիցների քանակի նվազման հաշվին (որը 2020 թվականի դրությամբ կազմել է մոտ 2138 աշխատակից)⁸⁴: Նվազեցումը, սակայն, պետք է իրականացվի՝ հաշվի առնելով դատապարտյալների այն օպտիմալ թվաքանակը, որոնց հետ արդյունավետ կերպով կարող է աշխատել կամ վերահսկողություն իրականացնել տարբեր ստորաբաժանումների մեկ քրեակատարողական ծառայողը, ինչպես նաև դիտարկելով այդ հաստիքներից մի մասի փոխանցումը (առնվազն 100-110 հաստիք) Պրոբացիայի ծառայությանը:

Ազատագրվածների և աշխատակիցների հարաբերակցության իմաստով, դիցուք, ԵՆ պատիժների վերաբերյալ 2019 թվականի տարեկան զեկույցի (SPACE I) համաձայն՝ եվրոպական միջին ցուցիչը համարվել է 1:6 հարաբերակցությունը⁸⁵, որտեղ 6-ը ազատագրվածների թիվն է: Ասել է թե, 1 աշխատակից կարող է արդյունավետ աշխատել 6 ազատագրվածի հետ՝ ներառյալ կալանավորվածները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կալանավորված անձինք երաշխավորված են անմեղության կանխավարկածով, նրանց հետ ուղղման կամ սոցիալական վերաինտեգրմանն ուղղված աշխատանքները կրում են նվազագույն բնույթ՝ հիմնվելով միայն նրանց կամարտահայտության վրա, ինչը էլ ավելի է նվազեցնում ազատագրվածների թիվն ի հաշիվ աշխատակիցների և առավել մեծացնում աշխատակիցների և ազատագրվածների թվի անհամաչափ աճին (հոգուտ աշխատակիցների): Այս իմաստով, անհրաժեշտ է լուրջ արդյունավետ կառավարում՝ հատկապես վարչական և բանտարկյալի հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի ճիշտ բաշխման առումով: Այս իմաստով, իհարկե, խիստ անարդյունավետ է նոր ՔԿ հիմնարկների կառուցման միտքը և միջոցառումը, որ նախատեսված է Քրեակատարողական և Պրոբացիայի ոլորտների բարեփոխման 2019-2023թթ. ռազմավարությամբ⁸⁶:

⁸¹ Այս թիվը ներառում է նաև նրանց նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ հասանելի է հետևյալ հղումով՝ <https://court.am/hy/statistic-inner/3>:

⁸² Հղումը հասանելի է՝ <https://court.am/hy/statistic-inner/185>:

⁸³ Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://court.am/hy/statistic-inner/198>:

⁸⁴ Քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների շրջանակներում ՔԿՀ-ների քանակի փոփոխություն է նախատեսված «Հայաստանի Հանրապետության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կատարման համակարգի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին ՀՀ Կառավարության որոշման նախագծի (արձանագրային) 7-րդ գլխում: Սակայն, ներկա զարգացումների պարագայում և հիմնարկների կրճատման արդյունքում հնարավոր է 6 ՔԿՀ-ի փոխարեն ունենալ 2-3-ը
http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_7396089543021_hayecakarg_qreakataroxakani_zargacman.pdf:

⁸⁵ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://wp.unil.ch/space/files/2021/02/200405_FinalReport_SPACE_I_2019.pdf, էջ 85

⁸⁶ Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.irtek.am/views/act.aspx?tid=158011#p46> կետ 11.2.1.

Ի թիվս նշված ֆինանսական ծախսերի՝ պետք է նշել, որ բանտերը ծախսատար են նաև, դիցուք, կալանավորված անձանց պահելու և հատկապես նրանց տեղափոխման ուղղություններով: Օրինակ, 2019-2020 թվականներին ՀՀ Ոստիկանության կողմից Երևան քաղաքում և ՀՀ բոլոր մարզերում կատարվել է թվով 64771 ուղեկցում, որից 36529-ը՝ 2019, իսկ 28242-ը՝ 2020 թվականին⁸⁷: Ուղեկցման մեջ մտնում են հետևյալ ուղղությունները.

- 1) Դատարաններ
- 2) ՔՀԿ տեղափոխվածներ
- 3) Քննչական գործողություն
- 4) Բուժ. հաստատություն

Թեպետ ՀՀ ոստիկանությունը չի տրամադրել տեղեկություններ այս ուղեկցումների ֆինանսական ծախսերի մասին, այսուհանդերձ, փոքրիկ ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից վառելիքի մանրածախ իրացման գների 2020 թվականի մոնիթորինգի արդյունքներով, Հանրապետությունում բենզինի (ռեգուլյար 92) ամենացածր գինը գրանցվել է նույն թվականի մարտ ամսվա ընթացքում՝ 310 ՀՀ դրամ (ամենաբարձրը՝ 400 ՀՀ դրամ): Դիզելային վառելիքի գները ևս նույն ժամանակահատվածի մարտին իջել են մինչև 370 դրամ՝ 410 առավելագույն գնից⁸⁸: Միջինում տարեկան 36000 ուղեկցումից, եթե յուրաքանչյուր ուղեկցում (նույն քաղաքում) ճանապարհին ծախսի առնվազն 10 լիտր վառելիք, ապա տարեկան ուղեկցումների ծախսը կկազմի միջինը մոտ 111,600,000 (հարյուր տասնմեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ բենզինի դեպքում և 133,200,000 ՀՀ դրամ՝ դիզելային դեպքում:

Ինչ վերաբերվում է Քրեակատարողական ոլորտի ապագա ֆինանսական ծախսերին, ապա պետք է արձանագրել, որ ՀՀ Կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով» Քրեակատարողական համակարգի պահպանում ծրագրի 2019-2021 թվականների ծախսերը, 2018 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ ավելացել է 125,000.0 հազար դրամի չափով՝ պայմանավորված քրեակատարողական ծառայությունում կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողների լրավճարների ավելացմամբ⁸⁹: Ավելին, մինչև 2021 թվականը նախատեսվում է մոտ 20%-ով բարձրացնել աշխատակիցների աշխատավարձը, 124,5մլն դրամով կամ մոտ 17,3%-ով բարձրացնել ֆինանսավորումը «արդարադատության ոլորտում լրացուցիչ կրթություն» տողում: Հատկանշական է, սակայն, որ, օրինակ «Քրեակատարողական հիմնարկներում գտնվող իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության իրականացում» կամ «Դատապարտյալների վերահսկողություն, քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների պահելը, դատապարտյալների սոցիալ-հոգեբանական վերականգնում, ուսուցում, հարկադիր աշխատանքների կատարում» տողերով որևէ փոփոխություն չի նախատեսվել⁹⁰: Այսինքն, բոլոր այն միջոցառումներն ու քրեակատարողական ծառայությունները, որոնք պիտի աջակցեն կայացնել հենց բանտի փիլիսոփայությունն ու պատժողական քաղաքականությունից դեպի

⁸⁷ ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության 18 փետրվարի 2021թ. թիվ 5/5-3-138 գրությունը:

⁸⁸ Հասանելի է հետևյալ հղումով՝


http://www.competition.am/uploads/resources/Gneri_dinamika_Varelik.pdf:

⁸⁹ Հայաստանի Հանրապետության Կառավարության 10 հուլիսի 2018 թվականի N 797-Ն Որոշումը «Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին»՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150781>:

⁹⁰ Նույն տեղում՝ Հավելված 3:

վերականգնողականի անցումը որևէ ֆինանսական աջակցություն չեն նախատեսում, ինչը բավական խնդրահարույց է հատկապես մեծ թվով քրեակատարողական հիմնարկների մեծ թվով աշխատակիցների ու խիստ փոքր թվով ազատազրկվածների հարաբերակցության համատեքստում:

Ինչ վերաբերվում է ՀՀ պրոբացիայի ծառայությանը, ապա այն գործում է 101 հաստիքային միավորով Երևանում և ՀՀ մարզերում: Կառուցվածքը հետևյալն է.



Բյուջետային հատկացումների մասով պետք է արձանագրել, որ 2021 թվականի պետական բյուջեի ծախսերն, ըստ պետական մարմինների կողմից իրականացվող ծրագրերի հավելված 1-ում, Պրոբացիայի ծառայությունների համար նախատեսված է ընդամենը 530150.8 (հինգ հարյուր երեսուն միլիոն հարյուր հիսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Բյուջեի բաշխումը, ըստ Արդարադատության նախարարի, կատարվում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 5

Բյուջեն ըստ տնտեսագիտական դասակարգման տարրերի	Հատկացումներ 2019 թվական / հազ.դրամ	Հատկացումներ 2020 թվական/ հազ.դրամ
Աշխատողների աշխատավարձեր և հավելվածներ	376,310.3	371,819.7
Էներգետիկ ծառայություններ	11,212.3	11,212.3
Կոմունալ ծառայություններ	274.4	470.0
Կապի ծառայություններ	7,697.8	7,697.8
Գույքի և սարքավորումների վարձակալություն	2,274.9	2,994.9
Վարչական ծառայություններ	-	500.0
Համակարգչային ծառայություններ	6,500.0	6,500.0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2,907.0	2,907.0
Գրասենյակային նյութեր և հագուստ	3,554.5	3,554.5

Այլ ծախսեր այդ թվում՝	276.0	276.0
Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր	276.0	276.0

Հատկանշական է, որ, ճիշտ է, շատ չնչին տարբերությամբ, սակայն, 2021 թվականի համեմատությամբ, 2020 թվականին Պրոբացիայի ծառայության բյուջեն ավելին էր մոտ 30 հազար դրամով (530179.7 ՀՀ դրամ 2020 թվականին)⁹¹: Սա այն դեպքում, երբ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության հետ համեմատությամբ 20 և ավելի անգամ պակաս անձնակազմով վերահսկում է մոտ 2,5 անգամ ավելի շատ դատապարտյալներ:

Այսպես, ԱՆ պրոբացիայի ծառայության կողմից 2020 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում դատական ակտերի և պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ ծանուցումների հիման վրա իրականացվել է 4661 վարույթ, մասնավորապես.

1) Իրականացվել է 2020 անձի նկատմամբ պատիժ՝

- տուգանք – 1364 անձի նկատմամբ, որոնցով գանձման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 475.421.850 ՀՀ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում գանձվել է 128.778.390 ՀՀ դրամ, ինչը 6 %-ով ավելին է, քան 2019 թվականին, իսկ 45.926.000 ՀՀ դրամ տուգանքի գանձման գործընթացը դադարեցվել է այլ հիմքերով (մահվան, տուգանքը փոխարինվել է հանրային աշխատանքներ պատժատեսակով, համաներման և օրենքով սահմանված այլ հիմքերով):
- որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում - 420 անձի նկատմամբ, որից 417-ը որպես լրացուցիչ պատիժ: Տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկում նշանակված է եղել 271 անձի նկատմամբ, իսկ այլ պաշտոններ զբաղեցնելու կամ այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկում՝ 149 անձի նկատմամբ:
- հանրային աշխատանքներ -236 անձի նկատմամբ:

2) Իրականացվել է 1611 անձի նկատմամբ վերահսկողություն՝

- Իրականացվել է պատիժը պայմանականորեն չկիրառելու և փորձաշրջան նշանակելու վերաբերյալ- 1242 վարույթ .
- Իրականացվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ - 365 վարույթ: Պատիժ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել է 195 անձ:
- Իրականացվել է մինչև երեք տարեկան երեխա ունեցող և ծանր հիվանդության հիմքով պատժի կրումը հետաձգելու վերաբերյալ 4 վարույթ:

Պատիժ և վերահսկողություն է իրականացվել 3351 տղամարդու, 280 կնոջ, 41 անչափահասի և 42 օտարերկրացու նկատմամբ:

3) Իրականացվել է ՊՎ ազատման և դատվածությունները հանելու/մարելու վերաբերյալ զեկույցների կազմման և վերահսկման աշխատանքներ

- Հաշվետու ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայությունում առկա է եղել 1030 անձանց վերաբերյալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույց կազմելու մասին անձնական գործեր:

⁹¹ 2020 և 2021 թվականների «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներ, Հավելված 1, Աղյուսակ 1:

- Դատվածությունը հանելու վերաբերյալ դատարանների կողմից ստացվել է զեկույց կազմելու վերաբերյալ 8 գրություն, որոնցով կազմվել և դատարան է ներկայացվել 8 զեկույց:

4) Ավարտվել և արխիվացվել է 1145 վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում Պրոբացիայի ծառայությունում պատիժներով և վերահսկողություններով հաշվառված 3482 անձանցից կրկնահանցագործություն կատարել է 36 անձ, որը կազմում է ծառայությունում հաշվառված շահառուների մոտ 1% - ր:

Համեմատության համար ստորև ներկայացվում է նաև 2018թ. և 2019թ. ընթացքում կատարված պատիժների և վերահսկողությունների պրակտիկան:

Աղյուսակ 6

Պատիժների և վարքի վերահսկողության համեմատական

Տարի	Պատիժներ և վերահսկողության տեսակներ							
	Տուգանք	ՈՊԶ	Հանրային	ՊՊԶ	ՎՎ	ՊՎԱ	Պատժի հետաձգում	Ընդամենը
2018	2074	452	574	2223	17	725	14	6079
2019	883	447	214	1652	5	257	13	3471
Ընդամենը տարբերություն	-1191	-5	-360	-571	-12	-468	-1	-2608

Աղյուսակ 7

Տուգանքների գանձման համեմատական

Գործողություն	2018		2019	
	Քանակ	Գումար	Քանակ	Գումար
Ստացվել է	2074	761.329.784	883	361.057.950
Կատարման փուլ	513	206.050.750	423	166.409.550
Փաստացի կատար. է	524	111.516.700	170	72.524.300
Կարճվել է	958	357.899.338	266	110.684.100
Փոխարինվել է հանր. աշխատանքների	79	28.032.450	24	11.440.000

Տուգանքի կատարումը 2018թ. կազմել է 14.6%, իսկ 2019թ. 20.1%, ինչը փաստում է, որ այն աճել է 5.5%-ով:

2.1.1. Եզրակացություններ և առաջարկություններ

Այսպիսով, ելնելով վերը ներկայացված թվային տվյալների վերլուծությունից՝ կարելի է եզրակացնել, հետևյալը.

1) Պրոբացիան, ի տարբերություն ՔԿ ծառայության, կատարելով առավել մեծ քանակությամբ ու տարաբնույթ գործառույթներ, վերահսկելով մոտ 2 անգամ ավելի շատ դատապարտյալների, առնվազն 2020 թվականի կտրվածքով ունի ՔԿ Ծառայությունից մոտ 21 անգամ սակավ բյուջե:

2) Ինչպես ՔԿ ծառայության, այնպես էլ Պրոբացիայի ծառայությունում, բյուջեի առյուծի բաժինը հասնում է աշխատավարձային ֆոնդին (Պրոբացիայի դեպքում՝ 371819700, որը կազմում է ողջ բյուջեի 70%-ը):

3) Մեկ դատապարտյալի վրա կատարվող ուղղակի ծախսը ՔԿ հիմնարկներում կազմում է ավելի քան 2700 ՀՀ դրամ:

4) Եթե դիտարկենք այսօր գործող ՀՀ պրոբացիայի ծառայության կարգավիճակն այն իմաստով, որ այն, ունենալով խիստ սահմանափակ բյուջե, չունի առանձին կառույցի կարգավիճակ, սեփական բյուջե և ինքնուրույն չի իրականացնում ծառայությունների պատվիրակում ուղիղ շահառուների համար, ապա կարելի է պնդել, որ Պրոբացիայի ծառայության շահառուները ուղղակի ծախսի իմաստով պետության համար հաշվարկվում են 0 (զրո) դրամ:

5) Այդուհանդերձ, դիտարկելով Պրոբացիայի ծառայության ողջ բյուջեն որպես շահառուի համար ոչ ուղղակի ծախս, կարելի է ենթադրել, որ Պրոբացիայի ծառայության 1շահառուի օրական ծախսը կազմում է միջինը մոտ 312 (երեք հարյուր տասներկու) ՀՀ դրամ ($530179700/4661/365 = 312$), ինչը մոտ 9 անգամ պակաս է ազատագրվածի օրական միջին ծախսից (2742 ՀՀ դրամ):

2.2. Ազատագրվածներն այլընտրանք միջոցների կիրառման ծախսային արդյունավետությունը

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Պրոբացիոն ծառայության ամբողջական զարգացումը կարող է հանգեցնել նաև ֆինանսական միջոցների լրացուցիչ տնտեսումների և պետության օգտին վերականգնված գումարների:

Այսպես, մեկ ազատագրված անձի (դատապարտյալ, կալանավորված անձ) միջին տարեկան պահպանման ծախսը 2020 թվականին կազմել է **1000937** (մեկ միլիոն ինը հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ: Հետևաբար, եթե քրեակատարողական հիմնարկներից միջինը մոտ 1000 անձ (մոտ 500 մինչև 5 տարի ազատագրվածներ և 500 կալանավորվածներ՝ տնային կալանքի կամ խափանման միջոցը փոխելու տեսքով) տեղափոխվեն Պրոբացիայի ծառայության ենթակայության, ապա դրա հետ կապված ֆինանսական միջոցների տնտեսումը կկազմի $1000937 \cdot 1000 = 1,000,937,407$ (մեկ միլիարդ, ինն հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր յոթ) ՀՀ դրամ:

Միջինում տարեկան 500 կալանավորվածի և 500 դատապարտյալի՝ Պրոբացիայի ծառայություն տեղափոխվելու արդյունքում ներկայումս ազատագրվածների լրակազմից կպակասի նրանց մոտ 50%-ը, որի արդյունքում մոտ 2 անգամ կպակասեն կալանավորվածների ու դատապարտյալների ուղեկցումները: Արդյունքում, տարեկան միջինը մոտ 111,600,000 ՀՀ դրամից կխնայվի միջինը մոտ **5,800,000** (հինգ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Մյուս կողմից, վերլուծելով առկա տվյալները, կարելի է արձանագրել, որ այլընտրանքային պատիժներ կրող դատապարտյալների շուրջ 30 տոկոսը վճարում է տուգանք, որի միջին մեծությունը կազմում է 348,549 ՀՀ դրամ (զանձման ենթակա 475,421,850 հազար/1364 տուգանք վճարող), հետևաբար պետական բյուջեի օգտին լրացուցիչ կվերականգնվի 52,282,350 դրամ ($500 \cdot 0.3 \cdot 348,549 = 52,282,350$ ՀՀ դրամ):

Ավելին, ապագայում, օրենսդրական փոփոխությունների արդյունքում, մի շարք հանցագործությունների դեպքում (օրինակ՝ ճանապարհատրանսպորտային պատահարներ) Պրոբացիայի վերահսկողության տակ գտնվող նման շահառուները կարող են ընդգրկվել վճարովի թրենինգներում (ինչպես օրինակ՝ Ռումինիայում, Մոլդովայում), դատապարտյալների վճարած տուգանքներից կարող են զանձվել փոստային ծառայությունների վճարներ (ինչպես ԴԱՀԿ ծառայությունում), իսկ որոշ դեպքերում, նաև էլեկտրոնային հսկողության միջոցները կարող են կիրառվել վճարովի հիմունքներով (ինչպես ԱՄՆ-ում, Իսրայելում, Գերմանիայի որոշ երկրամասերում, Ավստրիայում, Նիդերլանդներում)⁹²:

Դրա հետ մեկտեղ, ներկայումս այլընտրանքային պատիժներ կրող դատապարտյալների մոտ 15 տոկոսն ընդգրկված է հանրային աշխատանքներում: Եթե հաշվի առնենք, որ սոցիալական ծառայության մարմինների կողմից հասարակական աշխատանքներ կատարող յուրաքանչյուր անձին վճարվում է օրական 2000,0 դրամ, ապա պետության համար ամեն տարի տնտեսված գումարը կկազմի լրացուցիչ $500 \cdot 0.15 \cdot 60.000,0 \cdot 12 = 540,000,000$ հազ.դրամ:

Այսպիսով, այլընտրանքային պատիժների և այլ միջոցների ամբողջական զարգացման հետևանքով ֆինանսական միջոցների տնտեսումը կկազմի առնվազն 1006737407 դրամ ($1000937407 + 5800000 = 1006737407$):

Պրոբացիայի ծառայության զարգացումն իրապես կարող է տնտեսող լինել: Այն տնտեսական առումով ևս այլընտրանք է ազատագրկմանը: Միաժամանակ, պետք է հստակ ընդգծել, որ ինչպես ցանկացած նոր կառույց, այս դեպքում նաև Պրոբացիայի պետական ծառայության խթանումը պահանջում են լրացուցիչ ֆինանսական ներդրումներ: Այսուհանդերձ, պետք է նշել, որ ֆինանսական առումով խնդիրների լուծումը դեռևս կայուն երաշխիք չի լինի Պրոբացիայի ծառայության արդյունավետ գործունեության համար, եթե իրապես չփոխվի որոշում կայացնողների մոտեցումը պատժողական քաղաքականությանը, հանցագործություն կատարած անձին և հասարակության անվտանգության ապահովմանն՝ ընդհանուր առմամբ:

⁹² Հիշյալ տողերով ֆինանսական հաշվարկները կախված են մի շարք գործոններից, որոնց ուսումնասիրությունը պահանջում է առավել տևական ժամանակահատված և տեղեկատվություն:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԻԴ-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՆՏԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3.1. Բանտային համակարգերում Կովիդ-19-ին դիմակայելուն և կանխարգելելուն ուղղված միջազգային հանրության ջանքերը

Բանտային համակարգերում Կովիդ-19 համավարակի արձագանքման և դրա կանխարգելման վերաբերյալ դեռևս 2020 թվականի մարտ ամսից հանդես են եկել բազմաթիվ միջազգային կազմակերպություններ, որոնք աշխատում են հումանիտար, առողջապահական կամ հենց քրեական արդարադատության ոլորտներում: Դրանցից ամենահեղինակավորների թվում են Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ/ICRC), Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ/WHO), ՄԱԿ թմրամիջոցների և հանցավորության գրասենյակը (ՄԱԿ ԹՀԳ/UNODC), Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ/CPT), Միջազգային բանտային բարեփոխումներ (ՄԲԲ/PRI), Համաեվրոպական պրոբացիոն կոնֆեդերացիան (ՀՊԿ/CEP) և այլք:

Սույն տեքստում փորձ է կատարվել ամփոփ կերպով ներկայացնել վերը հիշատակված և այլ կառույցների կողմից Կովիդ-19-ի դեմ պայքարի մոտեցումներն ու առաջարկությունները՝ հատկապես բանտային համակարգերի վերաբերյալ⁹³: Բոլոր կառույցների ցանկը և նրանց հասանելի հղումները ներկայացված են սույն Զեկույցի «Հավելվածներ» հատվածում:

Այսպիսով, բանտերում⁹⁴ Կովիդ-19-ը կանխելու և վերահսկելու համար պետություններից առաջարկվում է.

1. Առավել ուշադրություն դարձնել և ընդգծված կերպով մոտենալ ազատագրվածների առողջության պահպանման նկատմամբ պետությունների կողմից ստանձնած պարտավորություններին, և հատկապես խնամքի համարժեքության և առողջապահական խնամքի մատչելիության սկզբունքներին: Ապահովել առողջապահական ծառայություններին շարունակական հասանելիությունը համաճարակի ընթացքում՝ հատուկ ուշադրություն դարձնելով բանտերում որոշակի հիվանդությունների համամասնորեն ավելի բարձր մակարդակները, ինչպիսիք են՝ թմրանյութերի չարաշահումը, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ը և տուբերկուլյոզը:

2. Մշակել և հրապարակորեն ներկայացնել Կովիդ-19 համավարակի կանխարգելման և կառավարման պլանները, ներառյալ որոշումների կայացման թափանցիկ գործընթացները: Սա պետք է ներառի համաճարակի պատճառով անհարկի բացակայությունների աճի դեպքում, բանտի աշխատուժի և ամենօրյա աշխատանքների կառավարման ծրագիրը: Առաջարկվում է, որպեսզի առողջապահության և արդարադատության ոլորտները համակարգող մարմինը (ՀՀ դեպքում, երևի

⁹³ Առավել մանրամասն տե՛ս «Խոշտանգումների դեմ Դանիական Ինստիտուտ» (DIGNITY)՝ <https://www.dignity.dk/en/nyheder/global-guidance-and-recommendations-on-how-to-prevent-and-manage-covid-19-in-prisons/>

⁹⁴ Սույն տեքստում «բանտեր» տերմինը վերաբերվում է թե՛ դատապարտյալներին, և՛ թե՛ կալանավորվածներին պահելու վայրերին, եթե հատկապես չի ընդգծվում ազատագրվածի կարգավիճակը:

Պարետատունը) վերահսկի բանտային համակարգերից եկող արձագանքները՝ Մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում:

3. Բոլոր գործողությունները, որոնք հետագայում սահմանափակում են բանտարկյալների ազատությունները (օրինակ՝ բժշկական մեկուսացումը, կրճատված այցելությունները և այլն), պետք է.

- Լինեն իրավական և իրավաչափ.
- Լինեն սահմանափակ իրենց շրջանակով ու տևողությամբ.
- Լինեն անհրաժեշտ և համաչափ՝ հիմքում ունենալով գիտության լավագույն փորձը.
- Չլինեն և չթվան պատժողական:

4. Կանխարգելում և զսպում: Բանտային համակարգերում Կովիդ-19 համավարակին արձագանքելու նպատակով միջազգային հանրությունը պետություններին առաջարկում է երեք հիմնական ուղղություններ կամ ռազմավարություններ: Առաջին հերթին, պետք է նվազեցնել վիրուսի մուտքը բանտեր, երկրորդ՝ կանխել արդեն բանտ մտած վիրուսի տարածումը և կառավարել վիրուսը բանտում և զսպել դրա ազդեցությունը:

4.1. Կանխել վիրուսի մուտքը բանտեր.

- Բոլոր աշխատակիցները և բանտարկյալները, ովքեր մուտք են գործում բանտեր, պետք է առաջնային հետազոտման ենթարկվեն (screening): Որպես պարտադիր նախնական բժշկական գնահատման մաս, բոլոր նոր մուտք գործած կալանավորվածները կամ այլ բանտերից տեղափոխված դատապարտյալները պետք է հետազոտվեն և հնարավոր փորձաքննություն անցնեն:
- Քայլեր ձեռնարկել ազատազրկվածների բնակչությունը նվազեցնելու ուղղությամբ (վերահսկողություն/պայմանական ազատում/ վաղաժամկետ ազատում)՝ առնվազն ցածր ռիսկային դատապարտյալների համար (օրինակ՝ ազատ արձակման նախապատրաստվողներ կամ սակավ վտանգավոր արարքների համար կալանավորված անձինք՝ առաջնահերթություն տալով անչափահասներին և առավել տարեցներին): Քննարկել նաև նախնական կալանքի տակ գտնվող անձանց համար խափանման միջոցները կասեցնելու կամ մեղմացնելու և ազատազրկմանն այլընտրանքային տարբերակներ ընտրելու ուղղությամբ:

4.2. Կանխել վիրուսի տարածումը բանտում.

- Ձեռնարկել միջոցներ՝ ազատազրկվածների տեղափոխումները սահմանափակելու համար.
- Անձնակազմի և ազատազրկվածների շրջանում անհրաժեշտ լեզուներով տեղեկատվություն տարածել վիրուսի վերաբերյալ՝ ներառյալ դրա փոխանցումը, կանխարգելումն ու հիմնական ախտանիշները.
- Ապահովել համապատասխան հիգիենան անձնակազմի և ազատազրկվածների համար.
- Պարագաների առկայություն և հասանելիություն (օճառ, ջուր, ախտահանիչ նյութեր և այլն).
- Աշխատակազմի և ազատազրկվածների գտնվելու վայրերի կանոնավոր ախտահանում՝ ըստ ԱՀԿ-ի ցուցումների:
- Դիմակների անվճար տարածում և կրման պայմաններին ծանոթացում՝ անձնակազմի և ազատազրկվածների շրջանում:

4.3. Բանտերի ներսում վիրուսի կառավարում և դրա ազդեցության մեղմում.

- Քննարկել վիրուսի նկատմամբ խոցելի ազատազրկվածներին (ինչպիսիք են առողջական խնդիրներով անձինք և տարեցները) բանտերից ազատելու

ընթացակարգերը՝ հաշվի առնելով կատարված հանցագործության ծանրության աստիճանը: Ապահովել դատապարտյալների գնտումը նախքան նրանց ազատվելը:

- Ապահովել Կովիդ-19-ով վարակված մարդկանց կացարանների հարմարություններ և ընթացակարգեր: Մեկուսացման ապահովումը չպետք է հանգեցնի փաստացի պատժախցում մեկուսացնելուն, ինչպես սահմանված է ՄԱԿ-ի Մանդեյլայի կանոններով (օրինակ՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով մարդու իմաստալից կապի ապահովմամբ):
- Խնամքի համարժեքության սկզբունքի հենքով վարվել Կովիդ-19-ով վարակված ազատազրկվածներին՝ համաձայն ազգային ցուցումների:
- Ըստ անհրաժեշտության՝ ապահովել հոգեբանական աջակցության հասանելությունը թե՛ ազատազրկվածներին, և թե՛ անձնակազմին:

5. Անհրաժեշտ է հաշվի առել այցելությունների այլընտրանքային/կոմպենսացնող ռազմավարություններ՝ առանց բանտարկյալների համար ծախսատարություն առաջացնելու (օրինակ՝ վիդեոկոնֆերանս, հեռախոսների առավել հասանելիություն և այլն):

6. Ապահովել, որպեսզի ազատազրկվածները շարունակեն իրավունք ունենալ առնվազն մեկ ժամ բացօթյա զբոսնելու՝ միննույն ժամանակ ապահովելով ֆիզիկական հեռավորություններ անձանց միջև:

7. Ապահովել, որպեսզի ազատազրկման վայրերից ազատված անձինք ունենան համապատասխան կացարաններ և հասանելի առողջապահական ծառայություններ:

8. Ընդունել քրեական արդարադատությունն ապահովող այլընտրանքային միջոցներ (օրինակ՝ հեռավար լսումներ) և խուսափել բլանկետային միջոցառումներից, որոնք կարող են դեմ լինել արդարադատության հիմնական սկզբունքներին:

9. Կանխարգելման ազգային մեխանիզմները (ԱԿՄ) կարող են ուժեղացնել իրենց ոչ այցային գործողությունները, ինչպիսիք են շահերի պաշտպանության աշխատանքը: ԱԿՄ-ներին խորհուրդ է տրվում ընդհանրապես չդադարեցնել մշտադիտարկումները, այլ հարմարեցնել իրենց մոտեցումը: Մեթոդաբանությունը պիտի թարմացվի հատկապես կարանտինային խցերը մշտադիտարկելու գործոններով, գնահատվեն համաճարակի հետ կապված նոր միջոցառումները, և մեթոդաբանությունը պետք է հարմարեցվի իրավիճակին: Հարմարեցված մեթոդաբանության որոշ օրինակներ ներառում են.

- Հեռակա գնահատել բանտերում կիրառվող նոր քաղաքականությունները՝ որպես համաճարակի արձագանք.
- Հեռակա կարգով հավաքել հիմնական տեղեկություններ, ինչպիսիք են իրավիճակի գնահատումները, վերլուծել իրավիճակը և կատարել ընդհանուր և բանտային ոլորտի հատուկ առաջարկություններ.
- Հաշվի առնել այցելությունների առաջնահերթությունը և ավելի փոքր թիմերի հետ ավելի կարճ այցելություններ կատարել՝ միաժամանակ ապահովելով, որպեսզի կանխարգելիչ միջոցառումներ կիրառվեն՝ չվնասելու սկզբունքի համաձայն: Ավելի կարճ այցելությունները կարող են կենտրոնանալ հարմարեցված մեթոդաբանության վրա հիմնված հարցերի ավելի փոքր ընտրության վրա:

Այս առումով, պետք է փաստել, որ, դեռևս 2020 թվականի ապրիլի 4-ին, ՀՀ ԱՆ Քրեակատարողական Ծառայության պետի կողմից բոլոր ՔԿ հիմնարկների պետերին ի կատարումն է ուղարկել «ՀՀ ԱՆ ՔԿԾ համակարգում կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման, ինչպես նաև հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ միջոցառումների պլան»: Այն բաղկացած է 26 միջոցառումներից, որոնք ունեն որոշակի բլանկետային դրույթներ, սակայն նախատեսում են միջոցառումներ, ինչպիսիք են՝ կարանտինային ՔԿ

հիմնարկ (կամ խցեր կամ կացարաններ կամ այլ վայրեր) առանձնացնելը, արտաքին աշխարհի հետ կապված իրավունքի որոշակի սահմանափակումները⁹⁵ (տեսակցություն, հանձնուք, կարճաժամկետ մեկնում և այլն), ՔԿՀ-ներ մուտք գործող անձանց ջերմաչափումն ու կանխարգելիչ այլ միջոցառումներ: Չնայած այս ամենին՝ միջոցառումներից բացակայում են բանտարկյալներին վաղաժամկետ ազատման ռազմավարություններ:⁹⁶

3.2. Վաղաժամկետ ազատումների և ազատագրկումներին այլընտրանք միջոցների կիրառությունը՝ պայմանավորված Կովիդ-19-ով

Մինչ կոնկրետ կառույցների կողմից ներկայացված առաջարկություններին անդրադառնալը, պետք է նշել, որ ՄԱԿ անդամ պետությունների համար համընդհանուր կանոն է՝ «Հանցագործության բնույթին և ծանրությանը, հանցագործի անձին և ծագմանը, ինչպես նաև հասարակության պաշտպանությանն ավելի մեծ ճկունություն ապահովելու, ինչպես նաև ազատագրկման անհարկի կիրառումից խուսափելու նպատակով քրեական արդարադատության համակարգերը պետք է ապահովեն ազատագրկում չենթադրող միջոցների կիրառությունը՝ նախաքննությունից մինչև հետազոտման խնամք...»⁹⁷: Սա ստանդարտ է՝ բոլոր պետությունների, բոլոր իրավիճակների ու դրանց դրսևորումների համար:

3.2.1. ՄԱԿ թմրամիջոցների և հանցավորության գրասենյակ (UNODC)

Ընդհանուր առմամբ, ազատագրկումների պրակտիկայի վերագնահատումը և բանտարկյալների այն կատեգորիաների բացահայտումը, որոնք առանձնապես վտանգված են Կովիդ-19 հիվանդությամբ վարակվելու համար, կարևոր է՝ բանտարկյալների շարունակական ներհուսքը զսպելու և համապատասխան կատեգորիաների բանտարկյալներին ազատ արձակելու համար:

Նախնական կալանքի և որոշակի պատժաչափերի մեղմացման կամ ժամանակավոր կասեցման այլընտրանքները կլինեն բանտեր նոր մուտքերը կրճատելու արժեքավոր գործիքներ: Սա հատկապես կարևոր կլինի աննշան իրավախախտումների դեպքում, ներառյալ ոչ բռնի և ոչ սեռական բնույթի:

Ազատման մեխանիզմները հատկապես կարևոր են այն բանտարկյալների համար, որոնց համար Կովիդ-19-ը առանձնահատուկ ռիսկեր է պարունակում, ինչպիսիք են

⁹⁵ ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 204-Ն որոշման համաձայն՝ հանվել է քրեակատարողական հիմնարկներում տեսակցությունների արգելքը, որ սահմանվել էր «Կորոնավիրուսային հիվանդությամբ (covid-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» Կառավարության 11 սեպտեմբերի 2020 թվականի 1514-Ն որոշմամբ (15-րդ կետ): Ներկայումս, Կառավարության հիշատակված որոշման համաձայն՝ Քրեակատարողական հիմնարկներում թույլատրվում է շաբաթական մեկ անգամ մեկ հանձնուքի, ծանրոցի կամ փաթեթի ստանալը կամ ուղարկելը, ընդ որում, անձին հանձնուք, ծանրոց կամ փաթեթ ուղարկելու կամ նրանից հանձնուք, ծանրոց կամ փաթեթ ստանալու նպատակով քրեակատարողական հիմնարկի տարածք կարող է մուտք գործել միայն մեկ անձ: Հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.irtek.am/views/act.aspx?aid=153438#>:

⁹⁶ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի գրություն 03 ապրիլի 2020թ. թիվ 40/4-1689 գրությունը:

⁹⁷ «Ազատագրկմանն այլընտրանք միջոցների ՄԱԿ-ի ստանդարտ Կանոններ» (Տոկիոյի Կանոններ), Կանոն 2.3.: Անգլերեն տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.ohchr.org/documents/professionalinterest/tokyorules.pdf>:

քրոնիկ հիվանդություն ունեցողները, տարեցներն ու հղի կանայք, խնամքին երեխաներ ունեցող կանայք կամ պատժի լրիվ կրմանը մոտ կանգնած բանտարկյալներ: Պայմանական կամ ուղղակի վաղաժամկետ ազատման ռազմավարությունները, ինչպես նաև ներումը կամ համաներումը խրախուսելի են բանտարկյալների խնամքով ընտրված կատեգորիաների համար, որոնց ազատումը չի խաթարի հանրային անվտանգությունը, պետք է դիտարկվեն այս համատեքստում:

Կայուն արդյունքներ ապահովելու նպատակով անհրաժեշտ է, բանտերի բնակչության կրճատման բոլոր ջանքերը լրացվեն համայնքում պրոբացիայի, սոցիալական և առողջապահական ծառայությունների աջակցությամբ, որոնք նաև հարմարեցնում են իրենց ծառայությունների մատուցումը COVID-19 համաճարակի պատճառով⁹⁸:

3.2.2. ՄԱԿ Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատար (UN OHCHR)

Ընդգծելով, որ բանտարկյալները, ամենայն հավանականությամբ, ենթարկվում են վարակման էլ ավելի բարձր ռիսկի և հաշվի առնելով բազմաթիվ բանտերի և ազատագրկման այլ վայրերի պայմանները, պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկվեն՝ բանտերում անհարկի մահերից խուսափելու համար՝ այժմ և ապագայում: Հատուկ զեկուցողը խորհուրդ է տալիս.

«... 2. Մերժել կամ բացառել ազատագրկումը որպես պատժամիջոց այն անձանց համար, ովքեր խախտում են Կովիդ-19-ի հետ կապված այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են պարետային ժամը, արգելափակումները և շարժման ազատության այլ նման սահմանափակումները:

3. Նվազեցնել բանտերի բնակչության ընդհանուր լրակազմերը և օգնել լուծել դրա հետ կապված գերբնակեցման խնդիրները՝ բանտերի բնակչության վերանայման միջոցով և դիտարկելով նվազ վտանգավոր արարքների համար ազատագրկման այլընտրանքային միջոցներ:

4. Քննարկել նախնական կալանքի այլընտրանքներ, ինչպիսիք են գրավը, դատական կամ այլ մարմնի կողմից հսկողության ներքո ազատելը կամ այլ տարբերակներ:

5. Դիտարկել զանցանքների կամ նվազ վտանգավոր հանցանքների դեպքում անձանց անհապաղ ազատումը՝ համարժեք վերահսկողական պայմաններով...»⁹⁹:

3.2.3. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն և ՄԱԿ Մարդու իրավունքների բարձրագույն հանձնակատար (WHO & OHCHR)

Քանի որ բանտերում մարդիկ գտնվում են բարձր ռիսկի խմբում, շահագրգիռ կողմերի հետ անհրաժեշտ է քննարկել նման միջոցների շարունակական կիրառման օրինականության, անհրաժեշտության և համաչափության վերաբերյալ հարցերը՝ հաշվի առնելով առկա ռիսկերը:

Հիմնական շահագրգիռ կողմերի հետ քննարկումները պետք է ներառեն ցանկացած արտակարգ իրավիճակի և դրան հատուկ միջոցառումների ազդեցությունը բանտերի վրա, այդ թվում՝ բանտերից ազատ արձակման հնարավորությունները և/կամ ազատագրկման

⁹⁸ Տեքստի անգլերեն տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.unodc.org/documents/Advocacy-Section/UNODC_Position_paper_COVID-19_in_prisons.pdf:

⁹⁹ Տեքստի անգլերեն տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.ohchr.org/_layouts/15/WopiFrame.aspx?sourcedoc=/Documents/Issues/Executions/HumanRightsDispatch_2_PlacesofDetention.docx&action=default&DefaultItemOpen=1:

այլընտրանքային լուծումները: Այն անձանց համար, որոնց համար շարունակվում է ազատագրվումը մնալ միակ անհրաժեշտ և համաչափ միջոցը, պետք է ապահովվի ազատությանը նախապատրաստման միջոցներ, որոնք կարող են ձեռնարկվել առկա ռիսկերը կառավարելու համար:

Գործող օրենսդրության հիման վրա իշխանությունները կարող են վաղաժամկետ և պայմանական ազատ արձակում կիրառել հատկապես տարեցների, հիվանդ մարդկանց կամ այլ անձանց համար, ովքեր ունեն հատուկ ռիսկեր՝ կապված Կովիդ-19-ի հետ:

Մարդկանց ազատ արձակելու դեպքում անհրաժեշտ է ձեռնարկել բժշկական գնում և միջոցներ ձեռնարկել հիվանդ մարդկանց խնամքի ապահովման և պատշաճ հետևողականության ապահովման համար՝ ներառյալ առողջության մոնիտորինգը:

Նրանց համար, ովքեր ազատ արձակվելուց հետո կարող են բնակության վայր չունենալ, պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի պատշաճ բնակարանային ապահովման համար, ինչը կարող է պահանջել արտակարգ միջոցառումների իրականացում, ինչպես հարկն է, արտակարգ իրավիճակում, ներառյալ դատարկ և լքված ստորաբաժանումների օգտագործումը և առկա կարճաժամկետ վարձակալությունները և այլն¹⁰⁰:

3.2.4. ՄԱԿ խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողով (SPT)

Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել բանտերի բնակչության թիվը նվազեցնելու ուղղությամբ՝ հնարավորության դեպքում, զարգացնելով վաղաժամ պայմանական կամ առանց պայմանների վաղաժամ ազատման մեխանիզմները՝ հաշվի առնելով ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների ՄԱԿ-ի ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ):

Նախքան բանտարկյալի ազատումը՝ նա պետք է ենթարկվի գնման՝ ապահովելու համար, որպեսզի համապատասխան միջոցներ ձեռնարկվեն նրանց համար, ովքեր կամ ունեն հաստատված Կովիդ -19 վիրուսը կամ հատկապես խոցելի են վարակի նկատմամբ¹⁰¹:

3.2.5. Միջազգային բանտային բարեփոխումներ (PRI)

Հատուկ ուշադրություն դարձնելով կին դատապարտյալների հետ վարվեցողության ՄԱԿ նվազագույն ստանդարտ կանոններին (Բանկոկի Կանոններ)՝ ՄԲԲ-ը կոչ է անում ապահովել, որպեսզի Կովիդ-19-ի հետ կապված միջոցառումները գնահատվեն և ճշգրտվեն կանանց համար՝ հավաքելով տարանջատված տվյալներ և զեկուցելով քրեական արդարադատության համակարգերում կանանց և աղջիկների վրա Կովիդ-19-ի սեռով պայմանավորված ազդեցությունների մասին:

Ներառեք կանանց վաղաժամկետ ազատման կամ շեղման սխեմաներում՝ որպես COVID-19 պատասխանների մաս: Ապահովեք, որ կալանքի ռեժիմների ցանկացած փոփոխություն, ներառյալ մեկուսացումը և արտաքին աշխարհի հետ շփման

¹⁰⁰ Տեքստն անգլերենով հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.euopris.org/wp-content/uploads/2020/03/IASC-Interim-Guidance-on-COVID-19-Focus-on-Persons-Deprived-of-Their-Liberty.pdf>:

¹⁰¹ Տեքստն անգլերենով հասանելի է հետևյալ հղումով՝ <https://undocs.org/CAT/OP/10>:

սահմանափակումները, հաշվի առնեն կանանց և աղջիկների վրա հատուկ ազդեցությունները¹⁰²:

3.2.6. ԵՆ խոշտանգումների կանխարգելման կոմիտե (CPT)

ԽԿԿ-ի տեսակետով հետևյալ սկզբունքները պետք է կիրառվեն բոլոր մարմինների կողմից, որոնք պատասխանատու են Եվրոպայի խորհրդի տարածքում գտնվող ազատությունից զրկված անձանց համար:

... 5) Հաշվի առնելով, որ անձնական շփումները խթանում են հիվանդության տարածումը՝ բոլոր համապատասխան մարմինների կողմից պետք է ջանքեր գործադրվեն՝ կիրառելու ազատությունից զրկման այլընտրանքային միջոցներ: Այս մոտեցումը պարտադիր է հատկապես գերբնակեցման պայմաններում: Ավելին, պետական մարմինները պետք է առավել շատ կիրառեն ազատությունից զրկման այլընտրանքային միջոցները, այդ թվում՝ պատժի ժամանակահատվածի կրճատում, պատժից վաղաժամկետ ազատում և փորձաշրջանի կիրառում...»¹⁰³:

3.2.7. Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա (APT)

Չնայած Ազգային կանխարգելման մեխանիզմները (ԱԿՄ-ները) վերահաստատում են իրենց առաջարկությունները իշխանություններին՝ գերբնակեցվածության դեմ պայքարի վերաբերյալ, նրանք այժմ կարող են ավելի լավ դիրքերից ուշադրություն գրավել այս անհրաժեշտության վրա:

ԱԿՄ-ները բանտերում, ի թիվս այլոց, պիտի ուշադրություն դարձնեն հետևյալ գործոններին.

Արդյոք իշխանությունները քայլեր են ձեռնարկել ազատագրված վայրերի բնակչության թվաքանակը նվազեցնելու համար՝ սկսած ձերբակալությունների նվազեցումից, բանտերի ընդունելությունների քանակի նվազեցումից մինչև կոնկրետ արարքների համար պատժաչափերը փոխելը կամ կրճատելը, և եթե այո, ապա կա՞ն արդյոք չափորոշիչներ, որոնց վրա հիմնված են որոշումները, կամ արդյոք գնահատումը հարգում է առանց խտրականության սկզբունքը և հաշվի է առնում խոցելիության առանձնահատուկ իրավիճակներ, ինչպիսիք են առողջությունը (օրինակ՝ իմունային անբավարարություն ունեցող անձինք կամ այդ քրոնիկ պայմաններով), տարիքը, սեռը և հաշմանդամությունը:

Վաղաժամկետ ազատման մեխանիզմների հետ կապված որոշումներ կայացնելիս պետք է ուշադրություն դարձվի նաև իրավախախտման բնույթին և համայնքի համար ռեցիդիվի ռիսկին: Համաներման դեպքում խոշտանգումների համար դատապարտված հանցագործները չպետք է ունենան վաղաժամկետ ազատվելու հնարավորություններ¹⁰⁴:

¹⁰² Տեքստն անգլերենով հասանելի է՝ <https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2020/12/Bangkok-Rules-leaders-statement-Final-EN.pdf>:

¹⁰³ Տեքստը հայերեն տարբերակով հասանելի հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/16809e0703>:

¹⁰⁴ Տեքստն անգլերեն տարբերակով հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.apr.ch/en/resources/publications/guidance-monitoring-places-detention-through-covid-19-pandemic>:

3.2.8. Հանցավորության և արդարադատության հետազոտությունների կենտրոն (CCJS)

Սույն հասվածում ներկայացվում է Կենտրոնի կողմից եվրոպական տարբեր երկրների բանտային համակարգերում Կովիդ-19-ին արձագանքելու տարբեր փորձեր՝ հիմքում ունենալով ազատագրկմանն այլընտրանք միջոցների և անազատությունից հասարակություն վերադարձնելու մեխանիզմները:

Աղյուսակ 8

Եվրոպական տարբեր երկրներում որդեգրված ազատագրկմանն այլընտրանք մեխանիզմները Կովիդ-19-ի պայմաններում¹⁰⁵

No	Երկիրը	Մեխանիզմը
1.	Անգլիա և Ուելս	Հայտարարել են հղի և իրենց մոտ երեխաներ ունեցող կանանց ազատ արձակելու մասին, ովքեր ցածր ռիսկ են ներկայացնում: Մինչև այսօր ծրագրի շահառուները եղել են 17 հղի կին և 14 այլ բանտարկյալ:
2.	Ալբանիա	Ալբանիան հայտարարել է 600 բանտարկյալների ժամանակավոր ազատման մասին, ներառյալ՝ նշված ծանրության հանցագործությունների համար ազատագրկվածներ, տարեցներ և քրոնիկական հիվանդություններով տառապողներ:
3.	Ավստրիա	Այս երկիրը հետաձգել է երեք տարի և դրանից պակաս պատժաչափերով ազատագրկումների կիրառումն այն անձանց նկատմամբ, ովքեր չեն հանդիսանում առանձնապես վտանգավոր
4.	Բելգիա	Մարտի 30-ին Բելգիայի բանտերի կենտրոնական վերահսկիչ խորհուրդը հայտարարեց, որ խրախուսում է բանտերին իրականացնել միջոցներ, որոնք կտրուկ կսահմանափակեն մուտքերը և կբարձրացնեն էլքերը բանտերից: 2020 թվականի ապրիլի 6-ի դրությամբ Բելգիայում գրանցվել է բանտերի բնակչության տասը տոկոս նվազում:
5.	Գերմանիա	Գերմանիան հայտարարեց, որ Հյուսիսային Ռեյն Վեստֆալիայում ազատ կարձակվեն կարճ պատիժ կրող 1000 բանտարկյալներ: Ողջ երկրի տարածքում նրանք դադարեցրել են լրացուցիչ տուգանքների կատարումը տուգանքների չկատարման պատճառով: Երեք դաշնային նահանգներ դադարեցրել են կարճաժամկետ ազատագրկման դատավճիռների կատարումը, իսկ որոշ նահանգներ ազատ են արձակել տուգանքի դատապարտվածներին:
6.	Դանիա	2020 թվականի մարտի 12-ից ապրիլի 27-ն ընկած ժամանակահատվածում Դանիական բանտերն ազատագրկման դատապարտվածների չեն ընդունել: Ապրիլի 27-ից Դանիայի բանտերի և պրոբացիայի

¹⁰⁵ Տեղեկությունը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.crimeandjustice.org.uk/news/2020-04-24/european-responses-coronavirus-prisons>:

		ծառայությունները սկսեցին աստիճանաբար ընդունել նոր բանտարկյալների:
7.	Թուրքիա	Ապրիլի կեսին Թուրքիան ընդունեց օրենսդրություն, որը թույլ է տալիս վաղաժամկետ ազատել 100,000 բանտարկյալների, որոնցից 45000-ը պայմանական վաղաժամկետ՝ որպես Կովիդ-19-ին արձագանք, իսկ մնացածները՝ ընդմիջտ՝ անցյալ տարի մշակված օրենսդրության համաձայն: Նպատակն է ազատել անվտանգության նվազագույն աստիճան ունեցող բանտարկյալներին, 65 տարեկան և ավելի բարձր տարիքի, հղի բանտարկյալներին և մինչև վեց տարեկան երեխաներ ունեցող մայրերին:
8.	Իտալիա	Իտալիան մարտի կեսերին հայտարարեց, որ այն դատապարտյալները, ում մնացել է կրելու ավելի քիչ, քան 18 ամսից պատժաչափ, վերահսկողությամբ վաղաժամկետ ազատ կարձակվեն: Սա վերաբերվում էր մոտավորապես 2000-3000 բանտարկյալների: Ապրիլի 15-ի դրությամբ բանտերում 6000-ով ավելի քիչ մարդ կար, քան փետրվարի վերջին:
9.	Իռլանդիա	Իռլանդիան ազատ արձակեց 200 բանտարկյալի, ում պատժաչափից մնացել էր կրելու ոչ ավելի, քան 3 ամիս: Այժմ քննարկվում է երեք ամիսը 6 ամիս դարձնելու առաջարկությունը:
10.	Իսպանիա	Իսպանիայի բանտերը որոշում են՝ առանց պահախմբի ուղեկցության թույլատրված բանտարկյալներին թույլատրել մնալ հասարակությունում՝ էլեկտրոնային մոնիտորինգով:
11.	Լատվիա	Լատվիան հետաձգեց ազատազրկման ձևով 15 օրից 3 ամիս պատժաչափերի կատարումը, իսկ պատիժը հետաձգվածները չեն ազատազրկվի:
12.	Լեհաստան	Լեհաստանը հայտարարեց, որ քննարկում են 18 ամսից պակաս պատիժ կրող բանտարկյալներին համայնքում էլեկտրոնային մոնիտորինգի տակ պահելու մասին: Դրանից պոտենցիալ օգուտ է ստանում 12000 բանտարկյալ:
13.	Խորվաթիա	Խորվաթիան հետաձգել է առողջական խնդիրներ ունեցող և 14 օր երկրից դուրս գտնված մարդկանց պատիժների կատարումը՝ մինչ նրանց առողջացումը:
14.	Կիպրոս	Կիպրոսը հայտարարեց մինչև տասը տարի դատապարտված 114 անձանց ազատ արձակելու մտադրության մասին, ովքեր մինչև ապրիլի 19-ը կավարտեն իրենց պատժի կեսը: Այդ բանտարկյալները իրենց պատժի մնացած մասը կանցկացնեն տնային կալանքի տակ՝ օգտագործելով էլեկտրոնային մոնիտորինգի գործիքակազմ:
15.	Հունաստան	Հունաստանը հայտարարեց 1500 բանտարկյալների վաղաժամկետ ազատման պլանների մասին (նրանց, ում մնացել է ոչ ավել, քան 1 տարի, և փոքր

		իրավախախտումների համար դատապարտվածներ): Այնուամենայնիվ, դա կարվի միայն վիրուսի բանտեր մտնելուց հետո: Ապրիլի 9-ի դրությամբ բանտերում Կովիդ-19-ի դեպքեր չեն գրանցվել:
16.	Հյուսիսային Իռլանդիա	Մարտի վերջին Հյուսիսային Իռլանդիան հայտարարեց, որ մինչև 200 բանտարկյալ, որոնց մնացել է պատիժ կրելու ոչ ավելի, քան 3 ամիս, ժամանակավորապես ազատ կարձակվեն: Սա բացառում է ծանր հանցագործությունների համար դատապարտվածներին: Ապրիլի 3-ի դրությամբ 100 բանտարկյալներ հաստատվել են ազատ արձակման համար մինչև ապրիլի 6-ը:
17.	Նորվեգիա	Նորվեգիայում վաղաժամկետ ազատման միջոցառումները հաստատվել են մարտի 16-ին: Այս միջոցառումների հաստատումից հետո երկու շաբաթվա ընթացքում 194 բանտարկյալներ վաղաժամկետ ազատ արձակվեցին ի հաշիվ 4-6 ամսով պատժաչափերը երկարաձգելուն, որոնք նրանք կրելու են էլեկտրոնային մոնիթորինգի գործիքակազմով:
18.	Շվեդիա	Շվեդիայում դադարեցվել են առաջին անգամ ազատազրկման վայր մուտք գործող դատապարտյալների ընդունելությունները, ովքեր ունեն Կովիդ-19 ախտանիշներ:
19.	Պորտուգալիա	Պորտուգալիան հաստատեց օրենսդրությունը, որը թույլ է տալիս ներել քրոնիկական հիվանդություններ ունեցող 65 տարեկանից բարձր բանտարկյալներին, երկու տարով կրճատել պատժաչափը այն դատապարտյալների, ում մնացել է պատիժը կրել մինչև երկու տարի և նրանց, ովքեր դատապարտվել են մինչև երկու տարի ժամկետով ազատազրկման: Ապրիլի 15-ին 1080 բանտարկյալ ազատ էր արձակվել:
20.	Սլովենիա	Սլովենիան օրինագիծ ներկայացրեց, որը թույլ է տալիս բոլոր ազատազրկման դատավճիռները կասեցնել մեկ ամսով՝ սա հետագայում երկարացնելու հնարավորությամբ: Օրինագիծը թույլատրեց նաև ազատ արձակել բանտարկյալներին, ում մնացել էր պատիժը կրել մինչև վեց ամիս:
21.	Ֆինլանդիա	Ֆինլանդիան հետաձգեց մինչև 6 ամիս ազատազրկման դատավճիռների կատարումը՝ մարտի 19-ից հունիսի 19-ը ընկած ժամանակահատվածում: Նրանք նաև հետաձգել են ազատազրկման ձևով պատիժը՝ տուգանքի չկատարման դեպքում:
22.	Ֆրանսիա	Ֆրանսիան կասեցրել է կարճաժամկետ ազատազրկման պատժաչափերի կատարումը և իրականացրել պատժի լրիվ կրումից ոչ ավելի, քան 2 ամիս ունեցող ազատազրկվածների վաղաժամկետ ազատումը: Ապրիլի 8-ի դրությամբ Ֆրանսիան ուներ 8000-ով պակաս բանտարկյալ, քան փետրվարի վերջին:

3.2.9. ԵՄ պատիժների վիճակագրության վերաբերյալ Ձեկույց (SPACE I)¹⁰⁶

Եվ վերջապես, բանտարկյալների թվաքանակի և նրանց համամասնության վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրում է ԵՄ պատիժների վերաբերյալ տարեկան վիճակագրությունը: Կովիդ-19-ով պայմանավորված՝ երկու անգամ թողարկվել են արտահերթ հատուկ Ձեկույցներ: Այս հատուկ SPACE I զեկույցը վերլուծում է եվրոպական բանտային բնակչության միտումները 2020 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում՝ օգտագործելով 4 ժամանակահատված՝ հունվարի 1-ը, ապրիլի 15-ը, հունիսի 15-ը և սեպտեմբերի 15-ը: Այս ամսաթվերը համապատասխանում են բանտերի և բանտերի բնակչության վիճակին համաճարակից առաջ (հունվարի 1), արգելափակումների առաջին ամսից հետո (ապրիլի 15), արգելափակումների ավարտից (հունիսի 15) և ամառվա վերջ (15 սեպտեմբեր):

Առավել հրատապ միտումները վերլուծվել են այս շարքի առաջին զեկույցում (Aebi & Tiago, 2020)¹⁰⁷, որը ցույց է տվել, որ համաճարակի տարածումը ուղեկցվում է կայուն կամ նվազող բանտարկության բնակչության միտումներով: Այս զեկույցում ներառված նորացված թվերը հաստատում են այդ եզրակացությունը: Մասնավորապես, երբ ապրիլի 15-ին 47 անդամ պետությունների բանտային վարչակազմերի կողմից ներկայացված թվաքանակը համեմատվում է 2020 թվականի հունվարի 1-ի ցուցանիշի հետ, դիտվող միտումները հետևյալն են.

- **Նվազում (ավելի քան -4%).** Ալբանիա, Անդորրա, Բելգիա, Կիպրոս, Ֆրանսիա, Իսլանդիա, Իտալիա, Լիխտենշտեյն, Լյուքսեմբուրգ, Մոնակո, Նիդերլանդներ, Նորվեգիա, Պորտուգալիա, Սան Մարինո, Սլովենիա, Հյուսիսային Իռլանդիա (Մեծ Բրիտանիա) և Շոտլանդիա (ընդամենը՝ 17 բանտային վարչակազմ):
- **Կայուն/անփոփոխ (-4-ից 4% -ի սահմաններում).** Հայաստան, Ավստրիա, Ադրբեջան, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Վրաստան, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Լատվիա, Լիտվա, Մալթա, Մոլդովա, Չերնոգորիա, Հյուսիսային Մակեդոնիա, Լեհաստան, Ռումինիա, Ռուսաստանի Դաշնություն, Սերբիա, Սլովակիա, Իսպանիա (պետական վարչակազմ), Կատալոնիա (Իսպանիա), Թուրքիա ու Անգլիա և Ուելս (Միացյալ Թագավորություն) (ընդհանուր՝ 29 բանտային վարչակազմ):
- **Բարձրացում (ավելի քան 4%).** Շվեդիա (ԵՄ միակ երկիրը, որ գերծ մնաց արգելափակումներից):

Մեկ փաստ, որը նպաստեց բանտերի բնակչության թվի նվազմանը և պետք է ազդեցություն ունենար կորոնավիրուսային վարակների քանակի վրա, այն է, որ բանտի 25 վարչակազմեր ազատ արձակեցին բանտարկյալներին՝ որպես Կովիդ-19-ի դեմ կանխարգելիչ միջոց: Ընդհանուր առմամբ, Ալբանիան, Անդորրան, Հայաստանը, Ավստրիան, Ադրբեջանը, Բելգիան, Կիպրոսը, Դանիան, Ֆրանսիան, Իսլանդիան, Իռլանդիան, Իտալիան, Լիխտենշտեյնը, Լյուքսեմբուրգը, Մոնակոն, Նորվեգիան, Պորտուգալիան, Սերբիան, Սլովենիան, Իսպանիայի, Թուրքիայի, Անգլիայի երկու վարչակազմերը և Ուելսը, Հյուսիսային Իռլանդիան և Շոտլանդիան մարտից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ազատ արձակեցին առնվազն 143000 բանտարկյալի: Ազատ արձակված բանտարկյալների իրական թիվը պետք է ավելի մեծ լինի, քանի որ այդ

¹⁰⁶ Տեքստն անգլերենով հասանելի է հետևյալ հղումով՝ <https://wp.unil.ch/space/publications/2199-2/>

¹⁰⁷ https://wp.unil.ch/space/files/2020/06/Prisons-and-the-COVID-19_200617_FINAL.pdf:

վարչակազմերից հինգը տվյալներ են տրամադրել ազատումների մասին ոչ թե ամբողջ ժամանակահատվածի, այլ միայն դրա առաջին ամիսների համար:

Պետք է նշել, որ նրանց ճնշող մեծամասնությունը (114,460 բանտարկյալ) ազատ է արձակվել Թուրքիայում, մի երկիր, որը մինչև հունվար ունեցել էր Եվրոպայի բանտային երկրորդ ամենամեծ բնակչությունը և ազատել դրա գրեթե 40% -ը:

Ազատ արձակված բանտերի բնակչության տոկոսի առումով, Կատալոնիայի (23%), Կիպրոսի (23%), Ֆրանսիայի (17%), Պորտուգալիայի (17%), Սլովենիայի (16%) և Նորվեգիայի (15%) բանտային վարչակազմերը նույնպես ազատել է դրա զգալի մասը: Այնուամենայնիվ, մինչև հունիսի 15-ը Սլովենիան արդեն հետ էր կանչել արգելափակման առաջին ամսվա ընթացքում ազատագրված բանտարկյալներին:

Ամփոփելով Եվրոպայում նկատվող ընդհանուր միտումները՝ կարելի է նկատել, որ Կովիդ-19 համավարակի տարածումն ուղեկցվեց արգելափակման ժամանակահատվածում եվրոպական բանտային բնակչության ընդհանուր թվի նվազմամբ. արգելքը դադարեցվելուց հետո այդ միտումը դադարեցվեց և մի քանի երկրներում հետ շրջվեց:

Եվրոպական միտումը կարելի է բացատրել՝ համադրելով երեք գործոններ.

1) Քրեական արդարադատության համակարգի ակտիվության նվազում: Դատավորները, մնացյալ բնակչության պես մեկուսացվեցին, ինչը հանգեցրեց դատարանների կողմից ավելի քիչ պատիժների կիրառման: Երբ արգելափակումներն ավարտվեցին, դատարանները կրկին սկսեցին պատժամիջոցներ կիրառել:

2) Բանտարկյալների ազատ արձակումը՝ որպես կանխարգելիչ միջոց Կովիդ-19-ի տարածումը նվազեցնելու համար:

3) Արգելափակումները հանգեցրին հանցավորության ցուցանիշների անկման: Իրավիճակային քրեաբանական տեսությունների վրա հիմնված հիմնավոր բացատրությունն այն է, որ արգելափակումը նվազեցնում էր ավանդական հանցագործությունների հնարավորությունները, ինչը հանգեցնում էր ավելի քիչ հանցագործությունների, հետևաբար՝ ավելի քիչ ձերբակալությունների և ավելի քիչ բանտարկությունների: Կիրառվող հանցագործությունների աճը չի փոխհատուցել այդ նվազումը: Այս բացատրությունը հաստատվում է Շվեդիայում նկատվող հակառակ տենդենցով և այն փաստով, որ բանտարկության բնակչության թվի նվազումը դադարեց արգելափակումներն ավարտվելուն պես:

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ
ԱՍՓՈՓ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Ամփոփիչ եզրահանգումներ

4.1.1. Ազատագրկման պրակտիկայի վերաբերյալ

1) 2020 թվականին դատապարտյալների ընդհանուր թվի (1954) կեսից ավելին ենթարկվել է ազատագրկման ձևով պատժատեսակի:

2) Առկա պրակտիկան հաշվի առնելով՝ ենթադրվում է, որ պատիժը պայմանականորեն չի կիրառվում գլխավորապես որոշակի ժամկետով ազատագրկումների դեպքում, այլ ոչ կալանքի: Ուստի, ենթադրվում է, որ որոշակի ժամկետով ազատագրկվածներից (960) 75%-ի նկատմամբ կիրառվել է պատիժը պայմանականորեն չկիրառելը, ինչը խրախուսելի է:

3) Այդուհանդերձ, ընդհանուր մոտ 238 ազատագրկվածների նկատմամբ կիրառվել է փաստացի ազատագրկում (այսինքն՝ մոտ 25%): Այս հանգամանքը ևս ապագայում արժե վերագնահատել՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդհանուր ազատագրկման դատապարտվածներից 873-ը կամ 91%-ը դատապարտվել է մինչև 5 տարի ազատագրկման՝ ասել է թե, միջին ծանրության հանցանքի համար:

4) Թեպետ, առայժմ, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունը դատարանին չի ներկայացնում մինչդատավճռային զեկույցներ, այդուհանդերձ, այս դատապարտյալները մեծապես կարող էին (հավանականորեն) լինել հասարակությունում՝ նշված ծառայության վերահսկողության տակ՝ հենվելով անձի քրեածին ռիսկերի ու կարիքների վերաբերյալ Պրոբացիայի կողմից ներկայացված զեկույցների վրա:

5) Դեռևս առկա են խնդիրներ՝ ՀՀ քրեակատարողական ու պրոբացիոն ոլորտների 2019-2023 թվականների ռազմավարությամբ¹⁰⁸ հաստատված պատժողականից դեպի վերականգնողական արդարադատության անցման ճանապարհին: Դեռևս ամենահաճախ հանդիպող պատժատեսակը մնում է ազատագրկումը, ինչը երկարատև ու հասցեական ազդեցության կարիք ունի:

6) Տարիների ընթացքում ավելանում են դատարան ստացված քրեական գործերը, անավարտ են մնում դրանցից կեսից ավելին (2020 թվականին մոտ 60%), արդյունքում տարբեր քրեական գործեր կարող են անհարկի ձգձգվել, իսկ որոշ դեպքերում այդ գործերը կարող են վերաբերվել նաև անձանց՝ անազատության պայմաններում գտնվելուն: Ակնհայտ է նաև, որ դատավորների թիվը գրեթե անփոփոխ է և նրանցից յուրաքանչյուրին, տարվա 12 ամիսների կտրվածքով, բաժին է ընկնում միջինում 200 գործից ավելին:

7) Ցուցանիշների վերլուծությունը վկայում է, որ, հիշյալ երեք տարիների համեմատությամբ, Կովիդ-19 համավարակով պայմանավորված, մեծ փոփոխությունների չի ենթարկվել կալանքի միջնորդությունների ու դրանց կիրառման գործընթացը: Գրեթե անփոփոխ են մնում թե՛ միջնորդությունների, և թե՛ դրանց կիրառման թվային ցուցանիշները:

¹⁰⁸ Հայաստանի Հանրապետության Կառավարության 28 նոյեմբերի 2019 թվականի թիվ 1717-Լ որոշում «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարությունը, դրա իրականացման 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը, ծրագրի ֆինանսական գնահատականը և ծրագրի կատարումը համակարգող խորհրդի ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին», Ընդհանուր դրույթներ, կետ 2: Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.e-gov.am/gov-decrees/item/33014/>:

8) Այստեղ խնդրահարույց գործոններից է նաև այն, որ ի տարբերություն պատիժների վերաբերյալ հաշվետվությունների, կալանավորվածների վերաբերյալ չկան սեռատարիքային կամ այլ հիմքով չափորոշիչներ: Ինչի արդյունքում դժվար է եզրահանգել, թե դիցուք Կովիդ-19 համավարկի պայմաններում քանի 50-60 և ավելի տարիքով անձի նկատմամբ է կիրառվել այս միջոցը: Այս տարիքը ԱՀԿ կողմից ճանաչվել է առավել ռիսկային խումբ՝ նաև ազատագրկման վայրերում:

9) Դեռևս խնդրահարույց է մնում այն հանգամանքը, որ կալանավորումների վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդությունների 80-90 տոկոսը բավարարվում է: Իհարկե, սույն ցուցիչը կարող է վկայել նաև նախաքննության մարմինների առավել արդյունավետ աշխատանքի ու առավել հիմնավոր միջնորդություններ ներկայացնելու փաստի մասին: Սակայն, ինքնին փաստը, որ ազատագրկում ենթադրող խափանման միջոցը դատարանի կողմից կիրառվում է գրեթե բոլոր դեպքերում, կարող է վկայել նաև առավել «պատժողական» մոտեցումների մասին: Մա է վկայում նաև այն հանգամանքը, որ ազատագրկում ենթադրող միջոցները չեն կիրառվում որպես բացառիկ ու ամենավերջին միջոց:

10) Սակայն, այս ուղղությամբ անհրաժեշտ են բազմաշերտ վերլուծություններ, որ կարծում ենք, ապագայում կիրականացվի՝ հաշվի առնելով թե՛ հանցավորության ընդհանուր դինամիկան, թե՛ տվյալ տարում քննված գործերն ու ավարտված գործերը, ներգրավված մեղադրյալների թիվը, նրանց կողմից կատարված հանցանքը, ապա նաև դրանց հենքով կալանքի միջնորդություններն ու դրանց լուծման ընթացքը:

11) Այս ամենի համար անհրաժեշտ է վերանայել ողջ քրեական արդարադատության համակարգի կողմից հաշվետվությունների ձևանմուշները՝ դրանք դարձնելով առավել ինտեգրված, համընկնող, չափելի, կանխատեսելի և թափանցիկ:

12) Առկա հանրային հաշվետվություններում դեռևս բացակայում են համակարգված տեղեկատվություն բոլոր տեսակի խափանման միջոցների միջնորդությունների ու դրանց կիրառման պրակտիկայի մասին (գրավից ու կալանքից գատ):

13) Կարծում ենք՝ կալանքի կիրառման կամ դրա հնարավոր չարաշահման վրա դեռևս իր ազդեցությունն ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումն առ այն, որ այս խափանման միջոցի ընտրության համար առանցքային հիմք է դիտարկվում կատարված հանցանքը և ՀՀ ՔրՕր-ով սահմանված պատժաչափը: Առավելապես հենց 1 տարուց առավել պատժաչափի նախատեսման դեպքում գրեթե բոլոր արարքները կարող են դիտարկվել կալանքի միջնորդության «հիմք»:

14) Ինչպես նախորդ ենթավերնագրում, այստեղ ևս, պետք է շեշտել թե՛ նախաքննական, և թե՛ դատարանների խիստ ծանրաբեռնվածության խնդիրը: Տարվա կտրվածքով, միայն առաջին ատյանի դատավորները քննում են քսան հազարից ավելի օպերատիվ-հետախուզական, խափանման միջոցների, և այլ բնույթի անհապաղ գործեր: Քրեական մասնագիտացմամբ ամսվա կտրվածքով ընդամենը 60 դատավորին բաժին է ընկնում միջինը մոտ 30 նմանատիպ գործ (օրինակ՝ 2020թ. միայն կալանքի ու գրավի վերաբերյալ միջնորդությունները կազմել են 3575 գործ): Ու թեև, սույն Ձեկույցը նպատակ չի հետապնդում դիտարկել, համեմատել կամ վերլուծել քննված գործերի արդյունավետությունը, այդուհանդերձ, անձին ազատությունից զրկելու հետ կապված ցանկացած հարց, որպես հանցանք գործածի նկատմամբ ծայրահեղ ու ամենավերջին մոտեցում, պիտի քննության արժանանա հավուր պատշաճի ու համարժեք ժամկետներում:

15) Խիստ կարևոր է, նաև որ 2020 թվականի ապրիլից ի վեր գրավը կարող է կիրառվել նաև որպես ինքնուրույն խափանման միջոց և կալանքի ընտրությունը, այնուհետ գրավով փոխարինելու գործընթացն այլևս անցյալում է: Այս իմաստով, շատ կարևոր է, որպեսզի քրեական արդարադատության մարմինները համարժեք

փոփոխություններ կատարեն իրենց կողմից վարվող հաշվետվություններում՝ ցույց տալու համար գրավը միջնորդող կամ կիրառող մարմինը (այդ թվում՝ նախաքննական մարմինը):

4.1.2. Պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ

16) Ըստ էության, Կովիդ-19 համավարակով պայմանավորված, առանձնահատուկ փոփոխություններ այս համակարգում չեն կատարվել: Դատարանները քննել են նույն քանակությամբ գործեր, կայացրել որոշումներ, ՔԿ հիմնարկներն ու պրոբացիայի տարածքային ստորաբաժանումները կատարել են ՊՎ ազատման համար անհրաժեշտ գործողություններ և այլն: Առնվազն ԴՍԱԼԵՔՍ համակարգով, ՊՎ ազատման վերաբերյալ որոշումները (երկրորդային) չեն պարունակել համավարակի հիմնավոր պատճառ կամ հենք:

17) Ի տարբերություն 2019 թվականի՝ 2020 թվականին առավել բարձրացել են ՊՎ ազատման վերաբերյալ միջնորդությունների մերժումների ցուցանիշները ՀՀ առաջին աստիճանի դատարաններում:

18) Առավել հատկանշական ու խնդրահարույց է, որ դատապարտյալների հետ տարիներ շարունակ աշխատած ՔԿ հիմնարկները կամ առնվազն ՊՎ ազատման միջնորդությանը նախորդող 80 օրվա ընթացքում մանրամասն ուսումնասիրություն կատարած Պրոբացիայի ծառայությունը բացասական զեկույցներ է կազմել 80-85%-ով:

19) Չնայած տարիների ընթացքում ՀՀ ՊՎ ազատման համակարգերի փոփոխությունների՝ այդուհանդերձ, դեռևս խնդրահարույց են մնում բազմաթիվ հարցեր՝ կապված անձի ռիսկայնությունը գնահատող գործիքակազմի, բալային համակարգի և այլն գործընթացների հետ:

20) Վերլուծությունները վկայում են, որ անհրաժեշտ է օրենսդրորեն և գործնականում (ընդհուպ կիրառվող գործիքակազմի մակարդակում) առանձնացնել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման (ՊՎԱ) և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտները¹⁰⁹: Թեև երկու ինստիտուտն էլ նպաստում է դատապարտյալի՝ հասարակությանն ու ազատությանն առավել մոտենալուն, այդուհանդերձ, դրանք ենթադրում են անձի անվտանգության, հասարակությունում կրկին հանցանք գործելու հավանականության ու հասարակությունում վերաինտեգրվելու երաշխիքների տարբեր աստիճաններ: Ուստի նպատակահարմար է, որ տարբեր լինեն նաև մոտեցումները նրան գնահատելիս՝ հատկապես ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրողների առումով անձինք, ովքեր այս կամ այն հիմքով գնահատվել են որպես վտանգավորներ լայն հասարակության համար, դեռևս չի նշանակում նույնական գնահատական այլ ՔԿՀ կամ ՔԿՀ-ի այլ մասնաշենք տեղափոխվելու համար: Այս առումով, անհրաժեշտ է շեշտակի փոփոխություն կատարել Քրեակատարողական օրենսգրքում և ոլորտի բոլոր ինստիտուտների կիրարկումն (այդ թվում՝ ՊՎԱ, տեղաբաշխման կարգ, կարճաժամկետ մեկնումներ և այլն) ապահովել ոչ թե հանցանքի ծանրության աստիճանի, այլ անձի՝ նրա վարքի դինամիկայի և հասարակությունում հնարավոր վտանգավորության աստիճանի հենքով:

21) Պրոբացիայի ծառայությունները նպաստում են հանրային անվտանգությանն ու պատշաճ արդարադատությանը¹¹⁰: Ուստի, զեկույցի, հաշվետվությունների և այլ տեղեկատվության տրամադրմամբ «ծառայություն է մատուցվում» հատկապես որոշում կայացնողներին (նախաքննության փուլում՝ դատախազներին և/կամ դատավորներին,

¹⁰⁹ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածը վերագրված և դիսպոզիցիան նախատեսում է հենց նույնական մոտեցում:

¹¹⁰ Եվրոպական պրոբացիոն կանոններ (2010/1), հիմնական սկզբունք 1:

դատական քննության փուլում՝ դատավորներին): Դիցուք՝ ՊՎԱ հարցում, Պրոբացիայի ծառայությունը զեկույց է տրամադրում դատարանին աջակցելով առավել անաչառ ու անկողմնակալ որոշում կայացնելու հարցում: Ուստի հենց դատարանի կողմից և ուղիղ Պրոբացիայի ծառայությունից է պահանջվում զեկույց, այլ ոչ թե ազատագրկման ձևով պատիժ կատարող հիմնարկից կամ այլ իրավասու մարմնից:

22) Պրոբացիայի ծառայությունը խորհրդատվական, մասնագիտական կարծիք հայտնող մարմին է, որն արտահայտվում է ըստ դատարանի ցանկության ու պահանջի¹¹¹ որոշում կայացնող մարմնին զեկույց տրամադրելով: Այն անհրաժեշտ է լինում, երբ դատարանը ՊՎԱ մասին որոշում պիտի կայացնի որոշակի «բարդ դեպքերում» (կախված անձից, ՔԿ հիմնարկում իրականացված աշխատանքների արդյունավետության գնահատումից, պատժի չկրած մասի տևողությունից և այլն): Ուստի թե՛ բովանդակային, իմաստային և թե՛ ֆինանսական ծախսատարության առումով (տրանսպորտ, աշխատավարձ, թուղթ, անձնական գործեր և այլն), նպատակահարմար չէ, որպեսզի Պրոբացիայի ծառայությունը պարտադիր կարգով կազմի զեկույցներ՝ ազատման նախապատրաստվող բոլոր դատապարտյալների վերաբերյալ, առավել ևս նրանց համար, ում պատժի լրիվ կրմանը մնացել են հաշված ամիսներ:

23) Թե՛ ՔԿ հիմնարկի, և թե՛ Պրոբացիայի ծառայության կողմից կազմվող զեկույցները «դրական» ու «բացասական» լինելու փոխարեն, խիստ անձակենտրոն ուսումնասիրություններ են և դեպքից դեպք խիստ տարբեր են: ՔԿ հիմնարկների դեպքում այդ զեկույցները վերաբերվում են դատապարտյալի վարքի դինամիկային (ՔԿՀ մուտք գործելու կամ դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ՊՎԱ ներկայացման պահը), թե՛ վարքն ու այլ հանգամանքներ ինչպես են փոփոխվել պատժի կրման ողջ ընթացքում: Իսկ Պրոբացիայի պարագայում այդ զեկույցները վերաբերվում են լոկ երկկողմանի պատասխանատվությունների մի կողմից դատապարտյալի պատասխանատվություն, որ համաձայն է Պրոբացիոն ծառայողի կողմից առաջարկված պայման-պարտականությունների կատարմանը հասարակությունում և Պրոբացիայի պատասխանատվություն, որ կան հստակ երաշխիքներ անձի վարքը վերահսկելու և նրա սոցիալական վերականգնման համար¹¹²: Վերջին երաշխիքները շատ անձակենտրոն են, և եթե մեկ անձի մոտ, օրինակ, «կրթությունը» կամ «ընտանեկան հարաբերությունների կարգավորումը» խիստ պարտադիր ու առաջնային կարող է դիտարկվել, մյուս դեպքում՝ «կրթության» բացակայությունը կարող է երկրորդային և ոչ այնքան կարևոր լինել սոցիալական վերականգնման տեսակետից: Վերջնական որոշումը կայացնում է դատարանը՝ հենվելով հենց այն վերլուծության վրա, որ կատարվել է Ձեկույցում: Ուստի չափազանց կարևոր է, որ զեկույցները չլինեն որևէ մարմնի կողմից նախապես գնահատված «դրական» կամ «բացասական»:

24) Պրակտիկան և ներկայացված հաշվետվությունների վերլուծությունը վկայում են, որ հատկապես պատիժ կատարող մարմինների դիրքորոշումը «ուղղման» վերաբերյալ, որոշակի փոփոխությունների կարիք ունի: Այն, որպես կանոն, պատիժ կատարող հատկապես ՔԿ հիմնարկների կողմից, դիտարկվում է որպես վերջնարդյունք, ավելին, այդ վերջնարդյունքին պիտի հասնել հենց ազատագրկման ընթացքում: Հաճախ նաև սա կարող է պատճառ հանդիսանալ այն պրակտիկայի, որ հենց իրենց կողմից տարիներ շարունակ վերահսկված դատապարտյալների զեկույցների 80%-ից ավելին բացասական է: Իրականում, անձի ուղղումը տևական պրոցես է, և այն չի կարող և չպետք է ավարտվի հենց ՔԿ հիմնարկում, այլապես իմաստագրկվում է հասարակությունում նրանց նկատմամբ ծավալուն վերասոցիալականացման ծրագրերը, որ իրականացվում է

¹¹¹ Եվրոպական պրոբացիոն կանոններ (2010/1), հիմնական սկզբունք 11:

¹¹² Եվրոպական պրոբացիոն կանոններ (2010/1), Կանոններ 59-63:

Պրոբացիայի ծառայության կողմից: Այս իմաստով, անհրաժեշտ է նաև փոփոխություն կատարել գործող Քրեակատարողական օրենսգրքի 16-րդ հոդվածում՝ ուղղումը դիտարկելով որպես գործընթաց և ոչ վերջնարդյունք:

25) ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 115-րդ հոդվածի 2-րդ մասում ՊՎ ազատման համաձայնության վերաբերյալ դիմումով դատապարտյալի պատճառաբանության իրավունքն անհասկանալի է՝ առնվազն պրակտիկ գործածության տեսակետից: Առավել կարևոր ու, պետության պատասխանատվության տեսակետից, կիրառելի է հատկապես ՊՎ ազատման մերժման պատճառների բացահայտումը:

26) Նույն 115-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ նախատեսվում է դատապարտյալի դիմումը ստանալուց հետո ծանուցել ՀՀ ԱՆ ՔԿ վարչություն, ինչը նոր օղակ է ավելացնում ՊՎԱ գործընթացում, պարզ չէ ստանալուց հետո Վարչության արձագանքի հնարավոր ձևերը և ՔԿ հիմնարկների հետագա գործողությունները և այլն: Սույն կարգավորումը և հավելյալ մարմնի ավելացումը գործնականում կարող է խիստ աննպատակահարմար, անարդյունավետ ու ծախսատար լինել՝ հաշվի առնելով առնվազն հետևյալ հանգամանքները.

ա) ՔԿ վարչության Կանոնադրությամբ սահմանված վերահսկողության գործառույթներն¹¹³ ուղղակիորեն չեն ենթադրում Վարչության բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների կողմից ՔԿ հիմնարկներում պահվող բոլոր դատապարտյալների մասին իրազեկվածություն (առնվազն անվտանգության ապահովման, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների, կալանավորված անձանց և դատապարտյալների հաշվառման բաժիններ): Ուստի, հարյուրավոր գործերի թղթային տարբերակով վերանայումը չի կարող հանգեցնել արդյունավետ աշխատանքի:

բ) Վարչության վերը նշված ստորաբաժանումների աշխատակիցների թվաքանակը և նրանց գործառնական ծանրաբեռնվածությունը չեն կարող բավարարել նման ծավալի աշխատանքն իրագործելու համար, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ՊՎԱ ինստիտուտի 2006 թվականից առ այսօր կատարված փոփոխությունների արդյունքում, բացառությամբ Աբովյան և Գորիս ՔԿ հիմնարկների, բոլոր ՔԿ հիմնարկները Վարչություն են ներկայացնելու հարյուրավոր գործեր:

գ) Նույն անձի վերաբերյալ կազմված նման քանակությամբ թղթատարությունը, հնարավոր տրանսպորտային, փոստային ու այլ ծախսերը չեն կարող արդյունավետ համարվել:

27) Ավելին, անհրաժեշտության դեպքում, Պրոբացիայի ծառայությանը ծանուցելիս, անհրաժեշտ է տրամադրել ճիշտ այն փաստաթղթերը, որոնք նախատեսված են ՔԿ վարչություն ներկայացնելու համար, որպեսզի ՔԿՀ մուտք գործելուց առաջ արդեն, պրոբացիայի աշխատակիցը նախապես պատկերացնի, թե ում հետ պիտի հանդիպի:

28) Նույն տեղում 4-րդ մասի առաջին պարբերությունում նախատեսված կարգավորումը ներմուծում է «պարտադիր զեկույցների» պահանջ բոլոր դատապարտյալների վերաբերյալ, ինչը ոչ միայն չի բխում ԵԽ նախարարների կոմիտեի թիվ 2010/1 Պրոբացիոն կանոններից, այլև հղի է անարդյունավետության վտանգով: Անարդյունավետ է հնարավոր սակավաթիվ օրեր կամ ամիսներ վերահսկողության տակ գտնվելու ենթակա անձի համար ծախսել 80 օր, մարդկային, տեխնիկական ու ֆինանսական միջոցներ և այլն:

¹¹³ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 1256-Ն Որոշում, առ 24 օգոստոսի 2006թ., 2-րդ գլուխ:

29) Նույն հոդվածի 10-րդ մասի կարգավորումը ենթադրում է զեկույցների «հավաքը» ՔԿ հիմնարկում, ավելին՝ ՔԿ հիմնարկի կողմից գնահատում, թե արդյոք տվյալ զեկույցը «դրական» է կամ «բացասական», որպեսզի հետո կայացնի որոշում՝ գործը դատարան ներկայացնելու կամ չներկայացնելու մասին: Սույն կարգավորմամբ խախտվում է Պրոբացիայի ծառայության իմաստն ու առաքելությունը՝ աջակցել որոշում կայացնողներին (ոչ պատիժ կատարող մարմնին) առավել անաչառ ու արդյունավետ լինելու հարցում: Բացի վերը բերված իրավական ու բովանդակային անհամապատասխանությունից, իմաստային թուրքնկալումներից, այս կարգավորումը հղի է նաև այլ վտանգներով: Դիցուք՝ մեծ վտանգ կա, որ Պրոբացիայի ծառայությունը «բանտին» այլընտրանք լինելու փոխարեն, կդիտարկվի մինևույն «ուժային, պատժողական» կառույցի մաս, ինչը մեծապես խոչընդոտելու է Պրոբացիայի մասին հասարակական ճիշտ ընկալմանը սրանից բխող հետևանքներով: Այս առումով, բարդանալու է նաև վաղաժամկետ ազատվածի ու պրոբացիոն աշխատակցի միջև կոնտակտի հաստատումը, հարգանքը, փոխադարձ վստահությունը, ինչը ոչ միայն ԵԽ 2010/1 Կանոնների մոտեցումն է¹¹⁴, այլև արդյունավետ աշխատանքի երաշխիք:

30) Այս իմաստով, 115-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերն ամրագրում են նաև ՔԿ հիմնարկի և Պրոբացիայի ծառայության կողմից ներկայացվող զեկույցների գնահատում՝ «դրական» և «բացասական»: Բացի այն, որ զեկույցները չեն լինում «դրական» կամ «բացասական», ավելին՝ ՔԿ հիմնարկը լիազորված չէ (և չի կարող լինել) գնահատել մեկ այլ մասնագիտացված կառույցի կողմից տրված զեկույցը: Մեծ վտանգ կա լիազորությունների չարաշահման կամ, որ ՔԿ հիմնարկը չի կարողանա ստույգ գնահատել դրական է զեկույցը, թե՛ բացասական, ինչի արդյունքում կարող են խախտվել հենց ՔԿ հիմնարկի հսկողությամբ պահվող դատապարտյալների իրավունքները: Հիշյալ երկու կառույցներն իրենց բովանդակությամբ, առանձնահատկություններով, գործառնություններով ու փիլիսոփայությամբ խիստ տարբեր են, և հարկ չկա նրանց հավասարակշռել կամ հակակշռել:

31) 115-րդ հոդվածի 8-րդ մասը նախատեսում է, որ ՊՎԱ հարցը դատարան չուղարկելու մասին ՔԿ հիմնարկի որոշումը կարող է դատապարտյալի կողմից բողոքարկվել դատական կարգով: Սույն կարգավորումը, որքան էլ միտված է դատապարտյալի իրավունքներին, այդուհանդերձ այն կրում է տեսական ու ֆորմալ բնույթ: Անգամ մեծ ցանկության դեպքում դատարանը չի կարող, օրինակ, բավարարել այդ բողոքը, որովհետև երկու «բացասական» զեկույցի պարագայում, հիմնարկը այլ բան չէր էլ կարող անել, քան ընդունել չներկայացնելու մասին որոշում: Այստեղ չի քննարկվում նման որոշման հանգելու համար հիմք հանդիսացած զեկույցների բովանդակությունը, այլ զուտ որոշումը՝ որպես առանձին անհատական ակտ: Ուստի անհրաժեշտ է Տեքստի բովանդակությունից հանել «Որոշումը կարող է բողոքարկվել առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան որոշումն ստանալուց հետո՝ տասնօրյա ժամկետում» բառերը կամ հստակեցնել բողոքարկման արդյունքում դատաքննության առարկան:

32) Նույն հոդվածի 9-րդ մասը նախատեսում է ևս մեկ կառույցի՝ Դատախազության դերակատարությունը ՊՎԱ գործընթացում՝ այսպիսով այս գործընթացը վերածելով բազմօղակ շղթայի (ՔԿՀ-Պրոբացիա-Վարչություն-Դատախազություն-Նախարարություն-Դատարան), բյուրոկրատական, թղթատարությամբ հագեցած ու անվերջանալի թվացող շրջափուլի: Արդյունքում բազմաթիվ խնդիրների առջև են կանգնելու դատապարտյալի հետ անմիջական աշխատող ՔԿ հիմնարկը, Պրոբացիոն աշխատակիցը և հենց

¹¹⁴ Եվրոպական պրոբացիոն կանոններ (2010/1), Կանոն 21, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» թիվ R (92) 16, Կանոն 16-21:

դատապարտյալը (առնվազն՝ փոստատարության կամ ծավալուն վարչարարության պատճառով վաղաժամկետ ազատման օրը ուշացնելու և նոր վերահաշվարկների կարիքի պատճառով): Ավելին, չի կարգավորված, թե քանի օրում է դատախազը կամ տեղակալը իրավունքների խախտման դեպքում միջնորդություն ներկայացնում, չի նշված նաև, թե Նախարարը քանի օրում է քննության առնում ու պատասխանում, ինչը կարող է հանգեցնել բազմաթիվ խնդիրների:

33) Նույն հոդվածի 10-րդ մասում անհրաժեշտ է դատարան ներկայացվող փաստաթղթերում առկա անձնական գործից քաղվածքը փոխարինել բուն անձնական գործով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանին անհրաժեշտ կլինեն ուսումնասիրել զեկույցներում վերլուծված տվյալների առկայությունը, դրանց հիմքերը և այլն: Չի բացառվում, որ, օրինակ, բջջային հեռախոս պահելու հիմքով տարբեր անգամներ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու հանգամանքը դատարանը գնահատի ոչ վտանգավոր, թեև զեկույցներում այս խնդիրը կարող էր և այլ կերպ գնահատված լինել:

4.1.3. Բանտային ու Պրոբացիոն համակարգերի ծախսարդյունավետության վերաբերյալ

34) Պրոբացիան, ի տարբերություն ՔԿ ծառայության, կատարելով առավել մեծ քանակությամբ ու տարաբնույթ գործառնություններ, վերահսկելով մոտ 2 անգամ ավելի շատ դատապարտյալների, առնվազն 2020 թվականի կտրվածքով ունի ՔԿ ծառայությունից մոտ 21 անգամ սակավ բյուջե:

35) Ինչպես ՔԿ ծառայության, այնպես էլ Պրոբացիայի ծառայությունում, բյուջեի առյուծի բաժինը հասնում է աշխատավարձային ֆոնդին (Պրոբացիայի դեպքում՝ 371819700, որը կազմում է ողջ բյուջեի 70%-ը):

36) Մեկ դատապարտյալի վրա կատարվող ուղղակի ծախսը ՔԿ հիմնարկներում կազմում է ավելի քան 2700 ՀՀ դրամ:

37) Եթե դիտարկենք այսօր գործող ՀՀ Պրոբացիայի ծառայության կարգավիճակը այն իմաստով, որ այն, ունենալով խիստ սահմանափակ բյուջե, չունի առանձին կառույցի կարգավիճակ, սեփական բյուջեն և ինքնուրույն չի իրականացնում ծառայությունների պատվիրակում ուղիղ շահառուների համար, ապա կարելի է պնդել որ Պրոբացիայի ծառայության շահառուները ուղղակի ծախսի իմաստով պետության համար հաշվարկվում են 0 (զրո) դրամ:

38) Այդուհանդերձ, դիտարկելով Պրոբացիայի ծառայության ողջ բյուջեն որպես շահառուի համար ոչ ուղղակի ծախս, կարելի է ենթադրել, որ 1 Պրոբացիայի շահառուի օրական ծախսը կազմում է միջինը մոտ 312 (երեք հարյուր տասներկու) ՀՀ դրամ ($530179700/4661/365 = 312$), ինչը մոտ 9 անգամ պակաս է ազատագրվածի օրական միջին ծախսից (2742 ՀՀ դրամ):

4.2. Ամփոփիչ առաջարկություններ

1) Վերանայել հանցավորության վերաբերյալ վիճակագրությունը՝ այն դարձնելով առավել հարուստ, տեսանելի և կանխատեսելի:

2) Առավել հաճախ կիրառել ազատագրվածներին այլընտրանք պատժատեսակները՝ հատկապես ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների գործերով:

3) Քրեական օրենսգրքում կատարել փոփոխություն և նախատեսել առանձին պատժատեսակ «հասարակությունում մինչև 3 տարի ժամկետով վերահսկողության իրականացումը»՝ հատկապես ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների

գործերով: Մույն կարգավորումը հնարավորություն կտա նվազեցնել անձին անհարկի ազատագրկելու մասին որոշում կայացնելը, ապա նոր այդ ազատագրկումը պայմանականորեն չկիրառելը:

4) Առաջարկվում է նաև վերանվանել ՀՀ Քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը՝ «ազատագրկումը պայմանականորեն չկիրառելը» վերտառությամբ: Սա հնարավորություն կտա ոչ միայն խուսափել պատիժը ազատագրկման հետ նույնացնելու «պատժողական» մոտեցումից, այլև ըստ էության վերաբերվել Պրոբացիայի ծառայությանը, քանի որ այն, իրապես, հենց պատիժ (նաև հարկադրանքի այլ միջոցներ) կատարող մարմին է՝ բացառապես հասարակությունում¹¹⁵:

5) Ազատագրկումներին այլընտրանք պատիժների և միջոցների խթանման նպատակով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և Պրոբացիայի մասին ՀՀ օրենքի վերանայման արդյունքում ներդնել և զարգացնել մինչդատավճռային զեկույցների կազմման և դատարանին ներկայացման ինստիտուտը՝ ապահովելու համար առավել անաչառ, արդյունավետ և անձակենտրոն դատական ակտերի կայացումը՝ հանուն համայնքի անվտանգության:

6) Որպես կարճաժամկետ լուծում՝ առաջարկվում է հատկապես դատարանների համար հանցագործություն կատարած անձի հանցածին կարիքների և ռիսկերի ցուցիչների և դրանց գնահատման ուղեցույցի մշակում, որի արդյունքում ևս դատարանները կկարողանան առավել ճշգրիտ գնահատել անձի հանրային վտանգավորության աստիճանը և ընտրել վերջինիս համար առավել արդյունավետ պատժատեսակը:

7) Վերանայել կալանավորումը որպես խափանման միջոց միջնորդելու և բավարարելու դատական և նախաքննական մարմինների մոտեցումները՝ այն իրապես դիտարկելով որպես ամենավերջին ու ծայրահեղ միջոց: Այս իմաստով, թեև ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված նոր Քրեական դատավարության օրենսգրքը վերացրել է կալանքի կիրառման և մեղսագրվող արարքի համար ՔրՕր-ով նախատեսվող առավելագույն պատժափի կապը¹¹⁶, այդուհանդերձ, անհրաժեշտ է հնարավորինս արագ վերանայել գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասում շարադրված «...որի համար նախատեսվող ազատագրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է» բառակապակցությունը:

8) Անհրաժեշտ է վերանայել ողջ քրեական արդարադատության մարմինների կողմից ներկայացվող հաշվետվությունները առնվազն՝ հանցավորության, դրա քննության, խափանման միջոցների և դատավճիռների մասերով՝ ինտեգրելով ողջ տեղեկատվությունը Ոստիկանության, Քննչական մարմինների, Դատախազության, Դատարանի, Քրեակատարողական ու Պրոբացիայի ծառայությունների միջև: Հաշվետվությունները պիտի արձանագրեն հանրապետության տարբեր մարմինների արձագանքը հանցավորությանը՝ առհասարակ և դրանց նկատմամբ կիրառված քրեաիրավական միջամտություններին՝ մասնավորապես:

9) Այս իմաստով, սույն Զեկույցը կարող է հիմքերից մեկը հանդիսանալ, դիցուք կալանքի վերաբերյալ առավել ընդգրկուն ու խորը վերլուծություն իրականացնելու համար: Առնվազն անհրաժեշտ է կալանքի միջնորդությունները դիտարկել տվյալ տարում արձանագրված հանցագործությունների, այդ հանցագործությունների քննության,

¹¹⁵ Տե՛ս, «Պրոբացիայի մասին» ՀՀ Օրենք, առ 17 մայիսի 2016 թվական, հոդված 4 և ԵԽ Նախարարների կոմիտեի 2010/1 Առաջարկությունները պրոբացիայի կանոնների մասին, 1-ին մաս, «Պրոբացիայի սահմանումը» ենթավերնագիր: Հայերեն տարբերակը հասանելի է հետևյալ հղումով http://www.translation-centre.am/pdf/Translat/EU_Other/Recommend/CERec_2010_1.am.pdf:

¹¹⁶ Տե՛ս հետևյալ հղումով՝ http://www.parliament.am/draft_docs7/K-637.pdf, հոդված 118:

ավարտված ու դատարան ուղարկված գործերի, այդ գործերից մեղադրյալների թվաքանակի, նրանց վերաբերյալ կալանք միջնորդելու, այնուհետ այդ միջնորդությունների լուծման եղանակի ամբողջության մեջ: Բայց դրա համար անհրաժեշտ է առնվազն հաշվետվություններից տեսնել, թե օրինակ 2018 թվականին հանրապետությունում գրանցված 24678 դեպքից¹¹⁷ որքան մասն է մնացել քրեական արդարադատության համակարգում, որ փուլում, ինչպես տարանջատել ընտրված քրեաիրավական միջոցները ընթացիկ ու նախկին տարվա գործերի համեմատությամբ և այլն:

10) Մյուս կարևոր գործոնը դատարանների ծանրաբեռնվածությունն է: Սակայն այստեղ ևս, ինստիտուցիոնալ իմաստով, գործոնը որ կարող էր նպաստել թե՛ դատարանների գերծանրաբեռնվածության նվազեցմանը (նպաստելով նաև անագատության մեջ մնալու ժամանակահատվածի հնարավոր անհարկի ձգձգումներին) և թե՛ առավել անձակենտրոն արդարադատության իրականացմանը, կարծում ենք (դատավորների թվաքանակի ավելացմանը զուգահեռ կամ դրա փոխարեն) արտադատարանական լուծումների ինստիտուցիոնալ զարգացումն է (diversion՝ արտադատական լուծում կամ mediation՝ քրեական գործերով հաշտեցման ինստիտուտ): Այս լուծումները հնարավորություն են տալիս, հատկապես ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների դեպքում, քրեական գործն ավարտել (կամ կասեցնել) քննչական կամ դատախազական օղակներում՝ նվազեցնելով թե՛ դատարանների ծանրաբեռնվածությունը, թե՛ դատական նիստի մասնակիցների մոտ հնարավոր լարված ու խիստ հուզական ապրումները:

11) Ուստի, առաջարկում ենք նաև ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել մասնավոր մեղադրանքի ինստիտուտի ընդլայնում (հատկապես անչափահաս և մինչև 21 տարեկան երիտասարդների համար)՝ կարճելով կամ կասեցնելով տուժողի հետ հաշտության պայմաններով քրեական գործերը և մեծապես ֆիլտրելով դատարան հասնող գործերի քանակը:

¹¹⁷ Հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.armstat.am/file/article/sv_12_19a_540.pdf:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Կովիդ-19-ի կանխարգելումը և կառավարումը բանտերում. միջազգային կառույցների առաջարկություններն ու դրանց հասանելի հղումները

- 1) Penal Reform International (PRI)'s briefing note on COVID-19 and detainees: <https://www.penalreform.org/resource/coronavirus-healthcare-and-human-rights-of-people-in/>
- 2) Statement of principles by the European Committee for the Prevention of Torture and Inhuman or Degrading Treatment or Punishment (CPT) on COVID-19: <https://www.coe.int/en/web/cpt/-/covid-19-council-of-europe-anti-torture-committee-issues-statement-of-principles-relating-to-the-treatment-of-persons-deprived-of-their-liberty->
- 3) Observations on COVID-19 by Amnesty International: <https://www.amnesty.org/download/Documents/POL3019672020ENGLISH.PDF>
- 4) Statement by the Office of the UN High Commissioner for Human Rights (OHCHR) on COVID-19: <https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=25722&LangID=E>
- 5) Human Rights Watch (HRW): <https://www.hrw.org/news/2020/03/19/human-rights-dimensions-covid-19-response>
- 6) COVID-19 blog by Association for the Prevention of Torture (APT): <https://apt.ch/en/blog/COVID-19-in-prison/>
- 7) Subcommittee on Prevention of Torture and Other Cruel, Inhuman or Degrading Treatment or Punishment (SPT) advice to the UK on quarantine monitoring: <https://s3-eu-west-2.amazonaws.com/npm-prod-storage-19n0nag2nk8xk/uploads/2020/02/2020.02.25-Annexed-Advice.pdf-V2.pdf>
- 8) WHO Europe Interim guidance on COVID-19 in prisons: http://www.euro.who.int/_data/assets/pdf_file/0019/434026/Preparedness-prevention-and-control-of-COVID-19-in-prisons.pdf?ua=1
- 9) Advice of the Subcommittee on Prevention of Torture to States Parties and National Preventive Mechanisms relating to the Coronavirus Pandemic: <https://www.ohchr.org/Documents/HRBodies/OPCAT/AdviceStatePartiesCoronavirusPandemic2020.pdf>
- 10) International Corrections and Prisons Association (ICPA)'s *Response to COVID-19 in Prisons* Webinar presentation by Gary Forrest, Chief Executive, Justice Health and Forensic Mental Health Network, New South Wales, Ministry of Health, Australia, 19th March 2020: <https://icpa.org/wp-content/uploads/2020/03/ICPA-Webinar-Responding-to-Covid-19-in-Prisons.pdf>
- 11) Inter-Agency Standing Committee (IASC) OHCHR and WHO, Interim Guidance, COVID-19: Focus on Persons Deprived of their Liberty, March 2020: <https://interagencystandingcommittee.org/system/files/2020-03/IASC%20Interim%20Guidance%20on%20COVID-19%20-%20Focus%20on%20Persons%20Deprived%20of%20Their%20Liberty.pdf>

- 12) UNODC Position Paper, COVID-19 Preparedness and Responses in Prisons, March 2020: https://www.unodc.org/documents/Advocacy-Section/UNODC_Position_paper_COVID-19_in_prisons.pdf
- 13) Her Majesty's Inspectorate of Prisons, Alternative approach to scrutiny during the COVID-19 pandemic, 20th April 2020: <https://www.justiceinspectrates.gov.uk/hmiprisons/wp-content/uploads/sites/4/2020/03/Short-scrutiny-visit-briefing-document-for-website.pdf>
- 14) UNODC, WHO, UNAIDS, OHCHR, Joint statement on COVID-19 in prisons and other closed settings, 13th May 2020: <https://www.who.int/news-room/detail/13-05-2020-unodc-who-un aids-and-ohchr-joint-statement-on-covid-19-in-prisons-and-other-closed-settings>
- 15) Association for the prevention of torture (APT), Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR), Guidance: Monitoring places of detention through the COVID-19 pandemic
- 16) Open Society Justice Initiative, Briefing Paper: The Right to Healthcare in Prison during the COVID-19 Pandemic, July 2020

Լրացուցիչ պիտանի նյութեր

- 17) The UN Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (Mandela Rules): <https://undocs.org/A/RES/70/175>
- 18) US Federal Bureau of Prisons COVID-19 page, including screening tool: <https://www.bop.gov/coronavirus/index.jsp>
- 19) The UK guidance to prisons regarding COVID-19: <https://www.gov.uk/government/publications/covid-19-prisons-and-other-prescribed-places-of-detention-guidance>
- 20) The Lancet COVID-19 page, including the latest research: <https://www.thelancet.com/coronavirus>
- 21) The Johns Hopkins University COVID-19 page for the public and experts: <https://coronavirus.jhu.edu/>
- 22) The WHO website on COVID-19, both technical guidance for institutions and online courses, and general guidance for the public: <https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019>
- 23) Association for the Prevention of Torture (APT) Information Hub on COVID-19 in prisons: <https://datastudio.google.com/embed/reporting/c686bea7-3152-4dd2-b483-fce072f3ddbf/page/hpLJB>
- 24) European Prison Observatory, COVID-19, What is happening in European Prisons: http://www.prisonobservatory.org/index.php?option=com_content&view=article&id=32:covid-19-what-is-happening-in-european-prisons&catid=7&Itemid=101
- 25) Norwegian National Human Rights Institution, International Resources on COVID-19 <https://www.nhri.no/en/international-resources-covid-19/>
- 26) Building our response on COVID-19 and detention, OMCT brief to the SOS torture network and partner organisations: https://www.omct.org/files/2020/04/25784/omct_covid19_prisonsresponse_en.pdf

- 27) Council of European, Commissioner for Human Rights, Statement, COVID-19 Pandemic: urgent steps are needed to protect the rights of prisoners in Europe: <https://www.coe.int/en/web/commissioner/-/covid-19-pandemic-urgent-steps-are-needed-to-protect-the-rights-of-prisoners-in-europe>
- 28) Justice Project Pakistan, COVID-19: Infected prisoners and deaths across the world, live global map: <https://www.jpp.org.pk/covid19-prisoners/>